# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

40ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 31 (1981) ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 15, 2020
VOLUME 40, NO. 31 (1981) SATURDAY AUGUST 15, 2020

Պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allan Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Լիբանանահայ Համայնքի Վերականգնումը Ազգային Արժանապատուութեան Հարց

Լիբանան կը բոլորէ իր ամենէն ողբերգական ու դժուարին պահերէն մէկը: Երկիր, որ տեսած է քաղաքացիական պատերազմներ, իսրայէլեան ներխուժում, քաղաքական սպանութիւններ, ահաբեկչական պայթումներ եւ ներկայիս կ՛անցնի տնտեսական ու ընկերային սուր եւ աղետալի տագնապներու ընդմէջէն, ականատես եղաւ նոր աղէտի՝ մայրաքաղաք Պէյրութի քանդումին:

Օգոստոս 4-ին, նաւահանգիստէն ներս տեղի ունեցած հսկայ պայթումը եկաւ նոր հարուած մը հասցնելու տեղւոյն Հայ համայնքին: Երկու տասնեակ զոհեր, հարիւրաւոր վիրաւորներ, աւերակ դարձած եւ կամ տուժած բնակարաններ, վնասուած եկեղեցիներ, դպրոցներ ու հաստատութիւններ նախահաշիւ մըն է այս, սակայն վերջնական հաշուեկշիռը կը կարօտի տակաւին ժամանակի:

Հակառակ վերջին տասնամեակներուն իր թիւի նօսրացումին, Լիբանանահայ համայնքը կը մնայ սփիւռքի բաբախող սիրտը, որ շունչ կը հայթայթէ Եւրոպայի եւ Ամերիկայի Հայկական գաղութներուն՝ ազգային, կրթական, մշակութային, եկեղեցական եւ այլ բնագաւառներէն ներս:

Այս օրերուն, ոմանք կը խօսին, յատկապէս Հայաստանի մէջ, Լիբանանահայութիւնը զանգուածային հայրենիք տեղափոխելու մասին: Նման ծրագիրներ ոչ միայն իրատեսական չեն ու անիրագործելի, այլ եւ վնասակար հայութեան ընդհանրական շահերու տեսանկիւնէն: Լիբանանը, որպէս երկիր տարբեր համայնքներու գոյակցութեան վրայ կառուցուած պետութիւն մըն է, ուր հայութիւնը ունի քաղաքական իր իրաւունքները եւ իւրայատուկ տեղը ու այդպիսով ան կը հանդիսանայ Հայաստանի պահապան թիկունքը՝ Արաբական աշխարհէն ներս: Լիբանանը իր հայութենէն պարպելը կը նպաստէ միայն Թուրքիոյ շահերուն, այն պահուն երբ ան կը ձգտի իր ազդեցութիւնը տարածել այդ տարածաշրջանին վրայ:

Բնականաբար կան ընտանիքներ, որոնք ինքնակամ կը փափաքին տեղափոխուիլ Հայրենիք, որոնց ընդունելու պատրաստութիւն կը յայտնէ Հայաստանի պետութիւնը: Նման պարագաները պէտք է քաջալերել, որպէսզի անոնք փոխանակ եւրոպաներ ու

Շար.ը էջ 5

## Հայաստանի եւ Արցախի Մարդասիրական Օժանդակութիւնները Հերթաբար Կը Հասնին Լիբանան

*Անցնող Շաբաթավերջին Հայաստանէն Լիբանանի ժողովուրդին մարդասիրական օգնութեան բեռը փոխադրող երկու օդանաւեր վայրէջք կատարեցին Պէյրութի «Ռաֆիք Հարիրիի» անուան միջազգային օդակայանը: Այս թռիչքներով մասնաւորաբար դեղօրայք եւ բժշկական պարագաներ փոխադրուեցան Պէյրութ՝ նպաստելու համար ստեղծուած ճգնաժամի յաղթահարումի եւ վիրաւորներու բուժումի աշխատանքին: Կ'ակնկալուի, երրորդ օդանաւ մը եւս ժամանէ Լիբանան՝ յատուկ օգնութիւն բերելու համար մասնաւորաբար լիբանանահայ համայնքի այն զաւակներուն, որոնք տուժեցին Օգոստոս 4-ին Պէյրութի նաւահանգիստի պայթումէն: Այս երրորդ օդանաւը պիտի փոխադրէ գոյք, պարենամթերք եւ այլ նիւթեր, որոնց կարիքը ունի լիբանանահայութիւնը:*



Հայաստանէն Լիբանանի ժողովուրդին մարդասիրական օգնութեան բեռը կը կը հասնի Պէյրութի օդակայան

*Հայաստանէն Լիբանան հասած թռիչքներով Պէյրութ ժամանեց նաեւ Հայաստանի կառավարութեան պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին Հայ-լիբանանեան խորհրդարանական բարեկամութեան խումբի համանախագահ Հրաչեայ Յակոբեանը, Սփիւռքի հարցերու գլխաւոր յանձնակատար Զարեհ Սինանեանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Հայկակ Արշամեանը, փոխվարչապետի եւ Սփիւռքի գլխաւոր յանձնակատարի գրասենեակի աշխատակազմերու ղեկավարները:*

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան համացանցային գրառումներու մէջ դիտել տուաւ, որ Հայաստանին տրամադրած աջակցութիւնը այստեղ պիտի չաւարտի: «Խաղաղութիւն եղբայրական Լիբանանին»:*

*Վարչապետը յայտարարեց, որ այն մարդիկ, որոնք կ'ուզեն օգնել լիբանանահայութեան՝ թէ կարճաժամկէտ եւ թէ երկարաժամկէտ առումով, կրնան գումարներ փոխանցել «Հայաստան» Համահայ-*

Շար.ը էջ 5

## Սեւրի Դաշնագրի 100-ամեակին Առիթով ՍԴՀԿ-ՀՅԴ-ՌԱԿ Միացեալ Յայտարարութիւն

*Այսօր կը լրանայ Դաշնակիցներու եւ Թուրքիոյ միջեւ խաղաղութեան՝ Սեւրի Դաշնագիրի ստորագրութեան հարիւրամեակը:*

*Սեւրի Դաշնագիրը միակ դաշնագիրն է, որ ստորագրուած է թէ՛ Թուրքիոյ եւ թէ՛ Հայաստանի Հանրապետութեան կողմէ, հայկական կողմի ազա՛տ կամքով: Սեւրի դաշնագիրը ոչ միայն Թուրքիան կը ճանչնայ որպէս պատասխանատու նախօրէին անոր գործադրած պատերազմի օրէնքներու դէմ ոճիրներուն համար, ոչ միայն Թուրքիայէն կը պահանջէ քայլեր՝ այդ ոճիրին գործադրութեան անմիջական մասնակիցները պատժելու գործընթացները դիւրացնելու համար, ոչ միայն Թուրքիայէն կը պահանջէ չեղեալ ու առ ոչինչ հռչակելու 1915-ին որդեգրուած «Լքեալ գոյքերու» վերաբերեալ օրէնքն ու յաւելուածները եւ անհատական թէ համայնքային սեփականատէրերուն վերադարձնելու բռնագրաւուած բոլոր կալուածները, այլ նաե՛ւ իրաւական հիմք կու տայ Հայաստան-Թուրքիա սահմանը ճշդելու համար Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Ուտրօ Ուիլսընին կատարուած իրաւարարութեան դիմումին:*

*Անցնող հարիւր տարիներու ընթացքին, Թուրքիան շարունակեց եւ կը շարունակէ ուրանալ մարդկութեան դէմ իր գործադրած ոճիրը՝ Հայկական Ցեղասպանութիւնը, խուսափեցաւ եւ կը շարունակէ խուսափիլ որպէս յանցագործ իր պատասխանատուութենէն ու պարտաւորութիւններէն, Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ 1991 թուականէն սկսեալ որդեգրած է թշնամական վերաբերմունք,*

Շար.ը էջ 13

## Հ.Բ.Ը.Մ.ը կը Լծուի Լիբանանի Օգնութեան Աշխատանքներուն

*Հ.Բ.Ը.Մ.ը, Համաշխարհային Մարդասիրական Օգնութեան իր Արշաւի Առաջին Մէկ Միլիոն Ամերիկեան Տոլարի Հանգրուանը Իրականացնելէ Ետք, Թափով Կը Լծուի Լիբանանի Օգնութեան Աշխատանքներուն:*

*2020 Ապրիլի կէսերուն սկսած Հ.Բ.Ը.Մ.ի Համաշխարհային Մարդասիրական Օգնութեան Հիմնադրամի նախաձեռնութեան ի պատասխան, աշխարհի տարբեր կողմերէն նուիրատուներու ցուցաբերած աջակցութեան ծաւալը, գործնական դրսեւորումը կը հանդիսանար կազմակերպութեան «Միութիւնը Զօրութիւն է» նշանաբանին:*

*Համավարակին վերաբերող օգնութեան աշխատանքներուն որպէս աջակցութիւն, հանրութեան տարբեր շրջանակներ եւ Միութեան հաւատաւոր նուիրատուներ, թուային եւ լայնատարած նամակագրութեամբ կատարուած կոչերուն անսալով, իրենց նիւթական աջակցութիւնները հասցուցած էին Միութեան շրջանային կեդրոնները:*

*Յուլիս 31-ին, արշաւը հասաւ իր մէկ միլիոն ամերիկեան տոլարի առաջին նշաձողին: Սակայն միայն*

Շար.ը էջ 19

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Սեւրի Պայմանագիր. Հայաստանի Պատմութեան Մեծագոյն Ծաղր

ԿԱՐՊԻՍ ՓԱՇՈՅԵԱՆ

*Եթէ փորձենք համեմատել Բաթումի եւ Սեւրի պայմանագրերը, ապա կը գանք այն եզրակացութեանը, որ առաջինը շատ աւելի իրական ու արդիւնաւէտ փաստաթուղթ էր, քան՝ երկրորդը: Նմանատիպ համամետութեամբ ժամանակին հանդէս է եկել նաեւ «Սիւիլնեթի» լրագրող Թաթուլ Յակոբեանը՝ հիմնաւորելով որ, Սեւրի պայմանագիրը Հայաստանի համար շատ աւելի նուաստացուցիչ էր՝ քան Պաթումինը: Ամբողջութեամբ համաձայն եմ Յակոբեանի այս պնդման հետ, քանի որ դրա հիմքում ընկած է տուեալ ժամանակաշրջանի քաղաքական խորքային ընկալումը:*

*Շատերը կը հարցնեն այդ ինչպէ՞ս, չէ՞ որ Սեւրի պայմանագրով Հայաստանը ստանում էր 90 հազար քառ. քմ. տարածք, իսկ Պաթումի պայմանագրով Թուրքերը հայերին Սեւանում լողանալու հնարաւորութիւն տուեցին, բայց չորանալու տեղ չտուեցին, այսինքն՝ ընդամէնը 12 հազար քառ. քմ. տարածք: Փաստացի Պաթումի պայմանագիրը հողի վրայ գոյութիւն ունեցող, քաղաքական, իրաւական ակտ էր, որը ազդարարեց Հայկական պետութեան ստեղծման գործընթացը: Այսինքն Հանրապետութիւնը ստեղծուեց այդ առաջին հայեացքից նուաստացուցիչ պայմանագրի հիմքի վրայ եւ եթէ քաղաքական ղեկավարութիւնը անհեռատես գտնուէր եւ հրաժարուէր այդ փշրանքից, ապա շատ հնարաւոր է, որ անկախ պետութեան գաղափարն այդպէս էլ մնար օդից առկախուած: Բարեբախտաբար Դաշնակցական ղեկավարութիւնը չշարժուեց իռացիոնալ ծաւալապաշտութեան ճանապարհով, ինչը մեծագոյն արկածախնդրութիւն կը լինէր:*

*Իսկ Սեւրի պայմանագրի Հայաստանին վերաբերող մի քանի յօդուածները ընդամէնը թղթի կտոր էին, որպէս քաղաքական իրողութիւն գոյութիւն չունեցող մի պատրանք, ուտոպիա, որը բթացրեց պետութեան զգօնութիւնը, կազմաքանդեց քաղաքական համակարգի կենսունակութիւնն ու անէացրեց առանց այն էլ արգելակուած գաղափարական միջավայրը:*

*Այն դատապարտուած էր, Հայաստանին վերաբերող յօդուածները չէին կարող կեանքի կոչուել եւ ճակատագրի հեգնանքով Վուդրօ Վիլսոնը քարտէզի գծման աշխատանքներն աւարտեց հենց Հանրապետութեան անկման նախօրէին, երբ քեմալա-բոլշեւիկեան ուժերը երկու կողմից ակցաններից մէջ վերցրած դանդաղօրէն կուլ էին տալիս «իմպերիալիզմի փոքրիկ որջը»՝ Հայաստանի Հանրապետութիւնը:*

*Դաշնակցական կառավարութիւնը պէտք է կանխատեսէր, պէտք է գլխի ընկնէր եւ ժամանակին հրաժարուէր Սեւրի պայմանագրի պատրանքից եւ Անտանտի օգնութիւնից: Այս մասին յետագայում խոստովանեցին նաեւ Հանրապետութեան ղեկավարները, առաջին հերթին հենց Յովհաննէս Քաջազնունին: Եթէ իշխանութիւնը ժամանակին հրաժարուէր այդ պայմանագրից, միգուցէ խորհրդայնացուած Հայաստանի կազմում լինէին Կարսը, Սուրմալուն, Նախիջեւանը եւ վերջապէս Անին՝ Հայկական երբեմնի պետականութեան գերեզմանը:*

*Այսինքն պէտք չի զոհ գնալ քաղաքավարութեանը եւ այնհրաժեշտ է խոստովանել, որ Սեւրի պայմանագիրը Հայոց պատմութեան մեծագոյն ծաղրն է, այն շատ աւելի ամօթալի է քան Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Պայմանագիրն այդ իր ցինիզմով գերազանցում է նաեւ Հայաստանի հետ ոչ այնքան շատ առնչուող Բրեստ-Լիտովսկի պայմանագրին:*

*Լաւ: Թողնենք պատմութիւնը հանգիստ: Վերադառնանք արդի Հայաստան, որտեղ ճակատագրի կողմից հեծեծուած, բայց դասեր չքաղած բախտախնդիրները նորից խօսում են Սեւրի պայմանագրի պահանջատիրութեան մասին: Ես այս թեմայի մասին երբեք չէի խօսի, որովհետեւ այն կապ չունի իրական քաղաքականութեան հետ, իսկ թեման արծարծողները պարզապէս մարգինալ զանգուած են եւ այդպէս էլ կը մնան: Պարզապէս այդ մարգինալները թունաւորում են հանրութեան մի զգալի հատուածին եւ դրանից ելնելով խօսելու տրամաբանական անհրաժեշտութիւն է առաջանում:*

*Ներկայումս Սեւրի պայմանագրի իրագործման մասին լուրջ դէմքով խօսելը իսկապէս անլրջութիւն է: Դա 100 տարի առաջ արձանագրուած մեծագոյն ծաղրի վերաարտադրութիւնն է, որը արդի ժամանակաշրջանում ծաղրից փոխակերպուել է կրկեսի:*

*Միջազգային Յարաբերութիւնների առաջին կուրսում սովորող ուսանողը գիտի.*

*1. Սեւրի պայմանագիրը Վերսալ-Ուաշինկտոնեան համակարգի բաղկացուցիչ մասնիկն է, համակարգ, որը արդէն վաղուց գոյութիւն չունի, դրան յաջորդել է Երկրորդ աշխարհամարտը եւ Պոտսդամի կոնֆերանսով դրուել են նոր աշխարհակարգի հիմքերը: Այսինքն էս պարզունակ ճշմարտութիւնը բա՞րդ է հասկանալ: Նոյնն է, երբ Վիեննայի վեհաժողովում թելադրող դիրքերից հանդէս եկող Ռուսաստանը ներկայումս Լեհաստանին տարածքային պահանջներ ներկայացնի:*

*2. Կապ չունի, թէ Վուդրօ Վիլսոնը ինչ է ստորագրել, ԱՄՆ-ն հրաժարուել է նախագահի առաջ քաշած մօտեցումներից եւ Վիլսոնը պարտուած կարգավիճակով հեռացել է քաղաքականութիւնից:*

*3. Միջազգային իրաւունքը նախատեսուած չէ հակամարտութիւններ կարգաւորելու համար, ոչ թէ այն պատճառով, որ այն արժէք չունի, ինչպէս շատերը անհիմն կարող են պնդել, այլ պարզապէս այն բոլորովին այլ առաքելութիւն ունի եւ առանց դրա մարդկութիւնը մէկ օր անգամ չի կարող ապրել: Այսինքն, Սեւրի ջատագովները պէտք է հասկանան, որ Հայաստանը չի կարող միջազգային իրաւունքի ինչ-ինչ կէտերով պայմանագիրը վերակենդանացնել: Ընդհանրապէս պէտք է նաեւ հաշուի առնել, որ հակամարտութիւնները իրաւական լուծում չեն ստանում, այլ՝ քաղաքական (իրաւունքի վրայ խարսխուած):*

*Էս ամէնը իհարկէ կապ չունի մեր պետութեան արտաքին քաղաքականութեան հետ, նորից եմ կրկնում՝ պարզապէս մարդկանց վերստին մոլորեցնում են՝ թոյլ չտալով ըստ էութեան ընկալել Հայաստանի իրական մարտահրաւէրն ու խնդիրները:*

«ՀՐԱՊԱՐԱԿ»

# Սերժ Սարգսեանի Առաջին Կրակոցը՝ Դատարկ Փամփուշտ

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*«Քաղաքը Սերժ է լսում», յայտնի «ռադիոսլենգի» տոնայնութեան մէջ կատակել էր ՀՀԿ փոխնախագահ Արմէն Աշոտեանը ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսեանի յայտնի տեսահոլովակներից յետոյ, որ նա թողարկել էր ապրիլեան պատերազմի թեմայով, «անկեղծ զրոյցի» շրջանակում:*

*Արմէն Աշոտեանի կատակը համացանցում յարուցել էր հանրութեան մի մասի պատասխան կատակային կամ հեգնական արձագանքները: Բայց Արմէն Աշոտեանը թերեւս իրաւացի էր, «քաղաքն այդուհանդերձ լսում» էր Սերժ Սարգսեանին, թերեւս ակնկալիքով, որ նա ապրիլեան քառօրեայ պատերազմի մասին խոստացուած անկեղծ պատասխանների շրջանակում կ՚ասի մի բան, որը կը լինի նորութիւն եւ նոր լոյսի ներքոյ կը ներկայացնի ժամանակի ու տարածութեան սփռում ունեցող իրադարձութիւնները:*

*Բայց, նախ պէտք է արձանագրել, որ Սերժ Սարգսեանը խօսում էր ամենեւին ոչ «քաղաքի լսելու» համար: Նա խօսում էր Հայաստանի քաղաքական դերակատարների նեղ շրջանակի եւ մեծ հաւանականութեամբ ռուսական շրջանակների համար:*

*Դրանից բացի, Սարգսեանի առաջին կրակոցը առայժմ դատարկ փամփուշտով էր, քանի որ նա ասաց այն, ինչ ասել էր նախկինում, եւ խօսքերը, գնահատականները չէին արտացոլում այն ընդգրկունութիւնը, որն ունի թեման: Իհարկէ, թերեւս միամիտ կը լինէր ակնկալել, որ Սարգսեանը առաջին իսկ կրակոցով կը պարպէր փամփուշտները: Առաւել եւս, որ նրա մօտ դրանք այնքան էլ շատ չեն, հետեւաբար պէտք է օգտագործի ռացիոնալ ու նպատակային:*

*Սարգսեանը թերեւս ցոյց տուեց, որ սկսել է եւ կարող է մօտենալ այնպիսի թեմաների կամ շեշտադրումների, որոնք արդէն չեն լինի «դատարկ կրակոց» եւ կը սկսեն խօցել շատ կոնկրետ ներքաղաքական կամ արտաքին քաղաքական թիրախներ:*

*Իսկ դրանք, առերեւոյթ լինելով յետյեղափոխական իշխանութեան տիրոյթում, մեծ հաւանականութեամբ առնչուելու են բոլորովին այլ շրջանակների, նրքին ու արտաքին բոլորովին այլ խմբերի: Այն պարզ պատճառով, որ ներկայում եւ ժամանակի ընթացքում աւելի ինտենսիւ, ծաւալուելու է նոր իշխանութեան հետ մրցակցութեան ունակ բեւեռի ձեւաւորման գործընթաց, ինչն էլ ուղեկցուելու է արտաքին աջակցութեան ակնառու ակտերով: Բայց, որպէսզի այդ գործընթացը մտնի իրապէս արդիւնաւէտութիւն ակնկալելու փուլ, այն պէտք է անցնի դրա պոտենցիալ մասնակիցների եւ ներգրաւուած խմբերի յարաբերութիւնների պարզաբանման փուլը, այն հարցերի, որոնք գալիս են նախորդ իշխող համակարգի պատմութիւնից եւ դրանում միմեանց միջեւ եղած հարցերից:*

*Իսկ դրանց առնչութեամբ պարզաբանումներն ամենեւին դիւրին չեն, հաշուի առնելով, որ այդ հարցերը չեն շրջանակուել միայն հայաստանեան սահմաններով:*

«ԼՐԱԳԻՐ»


ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

(626) 797-7680



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՁԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Իշխանութիւնը Հակուած է Շահագործելու Ամուլսարի Հանքը, Սակայն Այսօր Կը Լռէ՝ Վախնալով Ժողովուրդէն. Բնապահպան



Ազգային ժողովին առջեւ բողոքող բնապահպաններ

*«Մեզ առանց զգուշացման, բռնութիւն գործադրելով վարչական ձերբակալման ենթարկեցին՝ որեւէ բացատրութիւն չտալով՝ որն է մեր գործողութիւններում ոստիկանութեանը չենթարկուելը»: Այս մասին «Ա1+»-ի հետ զրոյցին նշեց բնապահպան Արման Ղարիպեան. ան այն աքթիւիսթներէն մէկն է, որոնք ԱԺ-ի մօտէն բերման ենթարկուեցան ոստիկանական բաժանմունք:*

*Ըստ Ղարիպեանին՝ ինչ որ պահ մը ոստիկանութիւնը որոշեց, որ եթէ խաղի ընթացքին ինչ որ մէկը կը գոռայ «Ամուլսար» կամ «Ամուլսարը սար է», այդ հաւաք է, եւ այդ անձին պէտք է բերման ենթարկեն:*

*Ղարիպեան կը պնդէ, որ Ազգային ժողովի դարպասները իրենց առջեւ փակած էին դիտաւորեալ եւ ներկայացուցած ծիծաղելի մեկնաբանութիւն:*

*«Կեղծ պատճառաբանութիւն բերեցին, որ ուղղակի մեզ թոյլ չտան լինել ԱԺ այգում, այն այգում, որը նուաճել ենք մեր մարմինները պայքարի մէջ դնելով»:*

*Աքթիւիսթը համոզուած է, որ իշխանութիւնը հակուած է շահագործելու Ամուլսարի հանքը, սակայն այսօր կը լռէ, որովհետեւ կը վախնայ ժողովուրդի ցասումէն:*

*«Իշխանութեանն այսօր ձեռնտու է Սերժի արած գործարքի հիման վրայ ներդրում ստանալ, քանի որ իրենք չկարողացան առանձնապես ներդրումներ բերել, մնացել են Սերժի յանցաւոր գործարքների յոյսին եւ փորձում են ճնշել բոլոր այն մարդկանց, ովքեր կը դիմադրեն, կը պայքարեն դրա դէմ»:*

*Արման Ղարիպեան «Իմ քայլը» խմբակցութեան լռութեան մասին կը խօսի ըսելով,որ անոնք եւս հրահանգ ունին լռելու կամ կը վախնան խօսելէ Նիկոլ Փաշինեանի դէմ:*

# Վլատիմիր Գասպարեանի Կողմէ «Ազատութեան» Աշխատանքը Խոչընդոտելու Դէպքի Առթիւ Յարուցուած է Քրէական Գործ



Հայաստանի նախկին ոստիկանապետ՝ Վլատիմիր Գասպարեան

*Նախկին ոստիկանապետ՝ Վլատիմիր Գասպարեանի կողմէ «Ազատութիւն» ռատիոկայանի լրագրողներու աշխատանքը խոչընդոտելու միջադէպի կապակցութեամբ, ոստիկանութիւնը քրէական գործ յարուցած է, Քրէական օրէնսգրքի 164-րդ յօդուածի 3 -րդ մասի յատկանիշներով, տուեալ պարագային՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունէութիւնը խոչընդոտելը, որ կատարուած է լրագրողի կամ անոր մերձաւորի կեանքի կամ առողջութեան համար վտանգաւոր բռնութիւն գործադրելով կամ այդ գործադրելու սպառնալիքով:*

*Այս արարքը կը պատժուի ազատազրկումով՝ երեքէն եօթ տարի ժամկէտով:*

*Յիշեցնենք, որ անցեալ շաբաթ օր Սեւանայ լիճի ափամերձ հատուածները տեղակայուած ապօրինի առանձնատուներու ու այլ կառոյցներու վերաբերեալ ռեբորթաժ պատրաստելու ատեն, Հայաստանի նախկին ոստիկանապետ՝ Վլատիմիր Գասպարեան խոչընդոտած էր «Ազատութիւն» ռատիոկայանի լրագրողներու աշխատանքը: Ան ինքնաշարժը վարած էր լրագրողներու ուղղութեամբ՝ սպառնալով հարուածել ֆիզիքապէս ոչնչացնել զիրենք եւ ըսած, որ կրնայ «սատկացնել» զիրենք, ինչպէս նաեւ հայհոյանքներով պահանջել իր առանձնատունը ցոյց չտալ:*

*Գլխաւոր դատախազի խորհրդական՝ Գոռ Աբրահամեան «Ազատութեան» հետ զրոյցին տեղեկացուց, որ դատախազութիւնը, մամուլի հրապարակումներէն տեղեկանալով յիշեալ միջադէպի մասին, անմիջապէս նոյն օրը, քայլեր ձեռնարկած է այդ ուղղութեամբ:*

# Սերժ Սարգսեան Կը Փորձէ Արդարանալ, Բայց Հիմնական Զոհերը Տուած Ենք Ապաշնորհութեան Պատճառով. Պատասեան



Արցախի «Միացեալ Հայաստան» կուսակցութեան նախագահ՝ Վահան Պատասեան

*Երրորդ նախագահ՝ Սերժ Սարգսեան սկսած է «անկեղծ զրոյցը», որու մասին յայտարարած էր ամիսներ կամ աւելի քան տարի մը առաջ, նշելով, թէ դեռ չէ եկած ժամանակը, եւ երբ գայ, կը սկսի խօսիլ: Զրոյցը սկսած է ապրիլեան պատերազմէն, սակայն փորձագէտներու կարծիքով, ոչ մէկ նոր բան անոր մասին յայտնելով:*

*Արցախի «Միացեալ Հայաստան» կուսակցութեան նախագահ՝ Վահան Պատասեանի կարծիքով՝ Սերժ Սարգսեանի յայտարարութիւնները իրար կը հակասեն: «Նա յայտարարում էր, որ յարձակումը եղել է անսպասելի, գոնէ մենք գիտենք, որ առաջնագծի բարձրաստիճան հրամանատարները չգիտէին, անակնկալ էր կամ իմացել են մէկ-երկու ժամ առաջ: Նրանց գրեթէ բոլորի արհեստավարժութիւնը պակասում էր, հակառակ դրա՝ կրտսերների արհեստավարժութիւնը առկայ էր: Բայց ի՞նչն էր սխալը՝ քադրային սխալ քաղաքականութիւնը: Նկատի ունեմ՝ անձամբ պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանի եւ Սերժ Սարգսեանի կողմից. տէ ֆաքթօ նրանք էին նշանակումներ անում, առաջնորդուում էին զուտ նրանց ենթարկուելիութեան չափով ու մէկ էլ հաշուի էին առնում նախընտրական ու յետընտրական գործընթացներում նրանց մասնակցութեան ունակութիւնները»,- «Առաջին լրատուական»-ի հետ զրոյցին ըսած է Պատասեան:*

*Վահան Պատասեան կը յորդորէ ապրիլեան պատերազմի հանգամանքները ուսումնասիրող յանձնաժողովին ուշադրութիւն դարձնել վերը նշուած հարցերուն. «Միանշանակ հրամանատարների մեղքն է եղել, որ այդ դիրքերը ազերիները գրաւել են: Կրկնակի մեղաւոր էր նաեւ Պաշտպանութեան բանակի հրամանատարութիւնը՝ Լեւոն Մնացականեանի գլխաւորութեամբ: Խաչատուրովը, Սերժ Սարգսեանը համահաւասար մեղաւոր են յաջորդ օրերին այդ դիրքերն անմիջապէս յետ չվերցնելու համար: Յետ վերցնելու համար կային համապատասխան ստորաբաժանումներ, յատուկ պատրաստուած գնդուորականներ, որոնք պատրաստ էին դիրքերը յետ վերցնել: Բայց նրանք դա չէին ուզում, որովհետեւ դա դարձրել էին մենաշնորհ եւ ուզում էին, որ անպայման իրենց ուզած մարդիկ ու ստորաբաժանումները դա անեն՝ յատուկ դափնիի համար: Նրանք էլ ապաշնորհ գտնուեցին: Գաղտնիք ասեմ՝ հիմնական զոհերը տուել ենք հենց այդ ապաշնորհութեան պատճառով: Ես տեսնում եմ, որ յանձնաժողովը շատ հեռու է դրանից, մօտ էլ չի գալիս ճշմարտութեանը, իսկ Սերժ Սարգսեանը խօսելու ոչինչ չունի, օգտուում է նրանից, որ յանձնաժողովը սխալ ուղու վրայ է, ու անցնում է յարձակման, որպէսզի լաւագոյն ձեւով պաշտպանուի»:*

*Սերժ Սարգսեան ինքն է որ, օրին խօսած էր 800 հեկտար հող կորսնցնելու մասին, իր ելոյթին մէջ այժմ կ՚ըսէ որ, աւելի ճշգրիտ չափումներու համաձայն այն 400 հեկտար է եւ ոչ թէ 800:*

# Վարակակիրներու Թիւը Կը Շարունակէ Նուազիլ

*Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրէն փաստացի բուժուողներու թիւը 7 հազարէն պակաս է՝ 6793 մարդ: Վերջին անգամ «Քորոնա» ժահրի աշխոյժ դէպքերու թիւը Հայաստանի մէջ 7 հազարէն քիչ եղած էր երկու ամիս առաջ՝ Յունիս 3-ին:*

*«Քորոնա» ժահրի դէպքերու անկման դրական միտումը կը շարունակուի, կ՚ըսէ Առողջապահութեան նախարարութեան խօսնակ՝ Ալինա Նիկողոսեան. - «Թուերն իրենք իրենցով արդէն ցոյց են տալիս էական նուազումը: Բայց, ինչպէս նախկինում, հիմա էլ անընդհատ կրկնելու ենք, որ զգօնութիւնը թուլացնել չի կարելի: Որովհետեւ եթէ թուլացնենք, թուերը սկսելու են աճել»:*

*Վերջին մէկ օրուայ մէջ «Քորոնա» ժահրի հաստատուած դէպքերու թիւը աւելցած է 23-ով՝ հասնելով 40 433-ի: Ինչպէս եւ նախորդ հանգստեան օրերուն, այս անգամ եւս կատարուած է սովորականէն քիչ՝ 340 հետազօտութիւն, դրական եղած է անոնց 6,8 տոկոսը:*

*Նախարարութիւնը կը յորդորէ շարունակել պահպանել հակահամաճարակային երեք կանոնները՝ կրել դիմակներ, պահպանել ընկերային հեռաւորութիւն եւ պարբերաբար ախտահանել ձեռքերը:*

*Կը շարունակուի նուազիլ նաեւ հիւանդութիւնը բարդացումներով տանող հիւանդներու թիւը: Երէկուայ՝ Օգոստոս 9-ի դրութեամբ, «Քորոնա» ժահրը ծանր կը տանի 270 մարդ, 67 անձ ծայրայեղ ծանր վիճակի մէջ է, 17 մարդ միացուած է թոքերու արհեստական օդափոխման սարքին:*

*Մասնագէտը կը յորդորէ զգօն ըլլալ՝ ընդգծելով, որ հակառակ պարագային թիւերը կ՚աճին: Պետրոսեանի գնահատումով՝ մայրաքաղի կանոնները հիմնականօրէն կը պահպանուին, սակայն մարզերուն մէջ բարձիթողի վիճակ է, ինչ որ մտահոգիչ է. - «Կապը տարբեր մարզային բուժհաստատութիւններ հետ փաստում են դա, որ շատ վատ է դրուած հարցը, յատկապէս դիմակների կրելը»:*

*Մինչեւ օրս Լեռնային Ղարաբաղի մէջ «Քորոնա» ժահրով վարակուած 1 անձ մահացած է, սակայն՝ այլ պատճառներով:*

## ԼՈՒՐԵՐ

# Սեւրի Պայմանագիրը Կը Շարունակէ Գոյութիւն Ունենալ Որպէս Պատմական Փաստ. Վարչապետ Փաշինեան

*Վարչապետ Նիկոլ Փաշինեան ուղերձ յղած է Սեւրի պայմանագրի ստորագրման 100-ամեակ տարեդարձին նուիրուած գիտաժողովի մասնակիցներուն:*

*Վարչապետը ուղերձին մէջ նշած է, որ Սեւրի հաշտութեան պայմանագիրը նշանակալից տեղ կը գրաւէ հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեան մէջ. «Ուստի յոյժ կարեւոր է, որ մէկ դար առաջ կնքուած այդ փաստաթղթի, դրան նախորդած իրադարձութիւններու եւ յաջորդած զարգացումներու մասին մեր գիտնականների անկողմնակալ վերլուծութիւնները հասանելի լինեն թէ՛ մեր ժողովրդին եւ թէ՛ միջազգային լայն հանրութեանը: Այսօրուայ գիտաժողովը ծառայում է հենց այդ նպատակին, եւ ես յաջողութիւն եմ մաղթում դրա աշխատանքներին՝ ցանկանալով բոլորին արգասաբեր քննարկումներ եւ նոր կարեւոր բացայայտումներ»:*

*Սեւրի պայմանագիրը պատմական փաստ է, ընդգծած է Փաշինեան՝ շարունակելով. - «Այն մնում է այդպիսին մինչ այսօր: Ինչո՞վ է այդ փաստաթուղթը հայ ժողովրդի համար կարեւոր: Ինչու՞ է այն առ այսօր մեր ուշադրութեան կեդրոնում»:*


Վարչապետ Նիկոլ Փաշինեան

*Վարչապետը ընդգծած է նաեւ թէ Նախ՝ Սեւրի պայմանագիրը կնքուեցաւ Առաջին համաշխարհային պատերազմի արդիւնքներու հիման վրայ, անոր աւարտէն շուրջ երկու տարի ետք: Ինչպէս Վերսայի պայմանագիրը խաղաղութիւն կը հաստատէր Եւրոպայի մէջ, այնպէս ալ Սեւրի պայմանագիրը՝ Օսմանեան կայսրութեան նախապէս պատկանող Առաջաւոր Ասիայի տարածքներուն մէջ: Ան նոր սկզբունքներ ու արժէքներ կը ներմուծէր, ոչ միայն խաղաղութիւն, այլ նաեւ արդարութիւն կը հաստատէր: Ան վերջ կը դնէր կայսրութիւններու պարտադրած դարաւոր ստրկութեան եւ ազատութիւն ու անկախութիւն կը պարգեւէր տարածաշրջանի ժողովուրդներին:*

*Երկրորդ՝ Սեւրի պայմանագիրը միջազգային այն փաստաթուղթն է, որ ճանաչեց եւ ամրագրեց Հայաստանի անկախութիւնը: Հայաստանի Հանրապետութիւնը հանդէս կու գար, որպէս այդ փաստաթուղթի իրաւահաւասար կողմ: Անկախութեան կորուստէն դարեր ետք Հայաստանի իշխանութիւնները առաջին անգամ աշխարհի մեծ տէրութիւններու հետ մէկտեղ կը կնքէին միջազգային պայմանագիր:*

*Երրորդ՝ Սեւրի պայմանագիրը իր 89-րդ յօդուածով կը փաստէր եւ կ'ամրագրէր հայ ժողովուրդի պատմական անվիճելի առնչութիւնը Հայկական լեռնաշխարհին հետ, ուր հազարամեակներ ի վեր ծնած, ապրած եւ պետականութիւն ու մշակոյթ կերտած էր հայ ժողովուրդը:*

*Վարչապետը ընդգծած է, որ Սեւրի պայմանագիրը կնքուեցաւ Հայոց Մեծ եղեռնի տարիներուն յաջորդած ժամանակաշրջանին, եւ ան ճանապարհ կը հարթէր ցեղասպանութեան հետեւանքներու յաղթահարման համար:*

*«Չնայած Սեւրի պայմանագիրը այդպէս էլ կեանքի չկոչուեց, այն շարունակում է գոյութիւն ունենալ որպէս պատմական փաստ, որն արտացոլում է անկախ պետականութեան վերականգնման համար անցած մեր ուղին: Մեր պարտքն է յիշել այն, գիտակցել եւ պահպանել նրա խորհուրդը», - եզրափակած է վարչապետը:*

# Թուրքիա Անհանգստացած Է Սեւրի Դաշնագրի Թեմայով Հայաստանէն Հնչած Յայտարարութիւններով

*Թուրքիոյ անհանգստացուցած են Սեւրի դաշնագրի 100-ամեակի առթիւ Երեւանի մէջ տեղի ունեցած միջոցառումները, ինչպէս նաեւ ՀՀ բարձրաստիճան պաշտօնեաներու կողմէն այս թեմայով հնչած յայտարարութիւնները, կը գրէ Ermenihaber.am-ը:*

*Այդ երկրի արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարութիւն տարածած է ի պատասխան վերոնշեալ յայտարարութիւններուն:*

*Թուրքիոյ արտաքին գերատեսչութիւնը անուղղակի սպառնացած էգ «Ժամանակը եկած է, որ Հայաստանի պետական մարմինները (իշխանութիւնները) ազրեսիվ յարձակողական ազգայնական քաղաքականութիւնը թողնեն եւ խելքերնին գլուխնին հաւաքեն»:*

*Յայտարարութեան մէջ նշուած է, որ Սեւրի պայմանագրի նպատակն էր մասնատել Թուրքիան եւ վերջ դնել անկախութեան եւ ինքնիշխանութեան, սակայն թուրք ազգը «պատռած եւ պատմութեան աղբամանը նետած է զայն»:*

*Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը այս յայտարարութեամբ՝ անուղղակի կերպով Հայաստանին մեղադրած է թշնամանք սերմանելու եւ «ստոր նպատակներ ունենալու մէջ», եւ այդ նպատակով Սեւրի պայմնագրի օգնութեան դիմելու մէջ:*


ԱԳՆ խօսնակ՝
Աննա Նաղդալեան

*Յայտարարութեան մէջ կրկնուած է նաեւ վերջին շրջանին բարձրաստիճան պաշտօնեաներու՝ անոնց կարգին նաեւ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի կողմէն հնչեցուած այն կարծիքը, թէ Հայաստանը չի կրնար հոգալ իր սեփական ժողովուրդի առօրեայ պահանջները:*

*Թուրքիոյ արտաքին գերատեսչութիւնը նաեւ անդրադարձած է արցախեան հիմնախնդիրին, Հայաստանը մեղադրելով «Ատրպէյճանի տարածքները բռնազաւթելու եւ տարածաշրջանին մէջ խաղաղութեան ու կայունութեան հաստատման առջեւ միակ խոչընդոտը ըլլալու»ն:*

### ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութեան Պատասխանը

*Հայաստանի մէջ Սեւրի հաշտութեան պայմանագրի հարիւրամեակի յիշատակման առնչութեամբ, Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարի յայտարարութիւնը անգամ մը եւս կու տայ «այդ երկրի անկարողութիւնը՝ առերեսուելու իր անցեալին հետ», իր մեկնաբանութեան մէջ նշած է Հայաստանի ԱԳՆ խօսնակ՝ Աննա Նաղտալեան:*

*Ըստ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան՝ զարմանքի արժանի է, որ Թուրքիոյ ներկայ կառավարութիւնը, որ «առիթը բաց չի թողնում արժեւորելու Օսմանեան ժառանգութիւնը՝ այդօրինակ ջղային արձագանք է ցուցաբերում նոյն Օսմանեան կայսրութեան կողմից մի շարք պետութիւնների, այդ թւում՝ Հայաստանի Հանրապետութեան հետ կնքուած Սեւրի պայմանագրի յիշատակումից»:*

*Աննա Նաղտալեան կը շեշտէ, որ Սեւրի հաշտութեան պայմանագիրը եղած է, կայ եւ պիտի շարունակէ մնալ պատմական փաստ, որ հնարաւոր չէ վերախմբագրել կամ ջնջել:*

*«Թուրքիան, խուսափելով առերեսուել իր անցեալի հետ եւ ուրիշներին կոչ անելով «պատմութիւնից թշնամանքի փոխարէն դասեր քաղել», շարունակում է Հայոց ցեղասպանութիւնն արդարացնելու եւ հայ ժողովրդին նոր ոճրագործութիւններով սպառնալու աւանդական քաղաքականութիւնը:*

*Թուրքիայի կողմից մեր տարածաշրջանում խաղաղութեան եւ անվտանգութեան խաթարմանն ուղղուած քայլերը, Հայաստանի հանդէպ որդեգրած ռազմատենչ կեցուածքը հարեւան տարածաշրջաններն ապակայունացնելու Թուրքիայի ներկայ կառավարութեան ծաւալապաշտական քաղաքականութեան մասն են կազմում:*

*Միայն այդ քաղաքականութեան վերանայումը եւ Թուրքիայի կողմից անցեալի հետ առերեսուելու կարողութիւնը ճանապարհ կը հարթեն մեր տարածաշրջանի ժողովուրդների միջեւ իրական հաշտութեան համար», - ըսուած է Աննա Նաղտալեանի մեկնաբանութեան մէջ:*

# Վարչապետի Շնորհաւորանքը Լուքաշենքոյին՝ Տարբեր Մեկնաբանութիւններու Արժանացաւ

*Նախնական արդիւնքներու հրապարակումէն ընդամէնը ժամեր ետք, Պելառուսիոյ նախագահ վերընտրուելու առթիւ Հայաստանի վարչապետի շնորհաւորանքը Լուքաշենքոյին, կ'արժանանայ խիստ քննադատութեան:*

*Ազգային ժողովի ընդդիմադիր՝ «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավարի կարծիքով, վարչապետ Նիկոլ Փաշինեան շատ շտապած է: Էտմոն Մարուքեան իշխող ուժին անցած ճանապարհի ու այդ շնորհաւորանքին միջեւ արժէքային հակադրութիւն կը տեսնէ:*

*«Ես կը սպասէի, որ ներքին գոնէ պահանջքներով ընդդիմութեան վիճարկելու գործընթացները գնան եւ նոր որոշում կը կայացնէի դրա վերաբերեալ: Իսկ էս առումով վարչապետը շատ շտապել է նախ: Եւ յաջորդը, որ արդէն էնտեղ զոհ կայ, եւ երեք հազարից աւել մարդ ա բերման ենթարկուել, ընդդիմութեան առաջնորդները բանտերում նստած են, ԶԼՄ-ների ղեկավարները, լրագրողները բանտերում նստած են, եւ վարչապետը էդ ամէն ինչը մի կողմ ա դնում եւ շտապելով շնորհաւորում ա», - նշեց Մարուքեան:*

*Վարչապետին խստօրէն քննադատեցին նաեւ շարք մը իրաւապաշտպաններ:*

*Արթուր Սաքունց. . «Ինքնին, երբ որ Գագիկ Ծառուկեանը շնորհաւորում է, դու շնորհաւորում ես, էդ դէպքում հարց է ծագում՝ Մարտ 1-ի գործով Քոչարեանի նկատմամբ քրէական հետապնդումը հենց նոյն գործողութիւնների համար է կատարուել: Պելառուսիայում հիմա տեղի է ունենում սահմանադրական կարգի բռնի զաւթում»:*

*Նախնական արդիւնքներու համաձայն՝ Լուքաշենքօն 80 տոկոսէն աւելի ձայներով յաղթած է ընդդիմադիր հիմնական թեկնածու՝ ընտրողներու ձայներու մօտ տասը տոկոսը հաւաքած Թիխանովսկայէին: Իսկ Պելառուսիոյ յետընտրական բազմահազարանոց ցոյցերը չեն դադրած, ոստիկանութիւնը կոշտ միջոցներ կը կիրառէ: Պաշտօնապէս յայտնի է մէկ զոհի մասին:*

*Վարչապետին մամլոյ խօսնակ՝ Մանէ Գէորգեան նպատակայարմար չյամարեց արձագանգել վարչապետի հասցէին հնչող քննադատութեան, բայց ըսաւ, թէ ծանօթ է, եւ կը հետեւի:*

*Իշխանական «Իմ քայլ»էն Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ՝ Ռուբէն Ռուբինեան վարչապետի շնորհաւորանքին մէջ անընդունելի ոչինչ կը տեսնէ:*

*Լուքաշենքօն շնորհաւորող երկիրներու կարգին Հայաստան առաջիններէն էր, հրապարակուած են նաեւ Չինաստանի, Թուրքիոյ, Վենեզուելայի ղեկավարներուն, Եւրասիական Տնտեսական միութեան (ԵԱՏՄ) Հայաստանի դաշնակից Ռուսաստանին եւ Ղազախիստանի նախագահներու հեռագիրները: Եւրոպայէն ու ԱՄՆ-էն մտահոգութիւններ կը հնչեն:*

# Զինծառայողներու Ապահովագրութեան Հիմնադրամի Տնօրէն Վարուժան Աւետիքեանի Առցանց Մամլոյ Ասուլիսը

Կազմակերպութեամբ Լոս Անճելըսի մէջ Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոսութեան, յատուկ Արեւմտեան Ամերիկայի հայկական լրատուամիջոցներուն համար անցեալ շաբաթ տեղի ունեցաւ առցանց մամլոյ ասուլիս, որուն ընթացքին Զինծառայողներու Ապահովագրութեան Հիմնադրամի տնօրէն Վարուժան Աւետիքեան ներկայացուց Հիմնադրամի գործունէութիւնը եւ ապագայ ծրագիրները:



Վարուժան Աւետիքեան առցանց մամլոյ ասուլիս ընթացքին

Բացման խօսքով հանդէս եկաւ ՀՀ գլխաւոր հիւպատոս՝ դեսպան Արմէն Բայբուրդեան ներկայացնելով բանախօսին ու շեշտելով Հիմնադրամի կարեւոր աշխատանքը եւ անոր իրագործումները:

Խօսելով Երեւանէն, Պր. Աւետիքեան պատմականը ըրաւ հիմնադրամի ստեղծման, հետագայ գործունէութեան եւ ներկայացուց Հայոց բանակի զոհուած ու վիրաւոր ծառայողներուն տրուող օժանդակութիւնը եւ անոնց ձեւաչափերը:

Զինծառայողներու Ապահովագրութեան հիմնադրամը ստեղծուած է Հայրենիքի սահմանները պաշտպանելու ընթացքին զոհուած եւ վիրաւոր հերոսներուն ու անոնց ընտանիքներուն կայուն ապահովագրական հատուցումներ տրամադրելու նպատակով:

2017-ի Յունուար 1-էն ասդին Հիմնադրամը հատուցումներ կը տրամադրէ իւրաքանչիւր զոհուած զինծառայողի ընտանիքին, ինչպէս նաեւ մարտական գործողութիւններու ընթացքին վիրաւորուած զինծառայողներուն:

Վարուժան Աւետիքեան յայտնեց, որ Հայաստանի մէջ աշխատող իւրաքանչիւր անձ, Հիմնադրամին պարտադիր կը փոխանցէ ամսական 1000 դրամ, որ հաւասար է 2 Տոլարի, այդպիսով ապահովագրելով զինուորներու կեանքը եւ փոքր շնորհակալութիւն յայտնելով այն տղաներուն, որոնք Հայրենիքի համար պայքարելու ընթացքին կը զոհուին կամ կը վիրաւորուին եւ այլեւս անկարող են ապահովելու իրենց ընտանիքի անդամներուն ապրուստը:

Հիմնադրամի առաքելութիւնն է նաեւ իւրաքանչիւր Հայուն խրախուսել սատար կանգնելու հայկական բանակի քաջերուն՝ նուիրատուութիւն կատարելով Հիմնադրամին:

Պր. Աւետիքեան տեղեկացուց, որ իւրաքանչիւր զոհուած ծառայողի եւ առաջին կարգի հաշմանդամ դարձողի ընտանիքին անմիջապէս կը տրամադրուի 20 հազար տոլար, առաւել՝ ամսական 400-600 տոլար մինչեւ 20 տարի: Աւելի նուազ գումարներ կը տրուին վիրաւոր զինուորներուն:

Հիմնադրամը կ՚աշխատի բացարձակ թափանցիկութեան սկզբունքով եւ Հիմնադրամի կայքի միջոցով կարելի է տեսնել իւրաքանչիւրի կողմէ կատարուած թէ՛ պարտադիր վճարումները եւ թէ՛ նուիրատուութիւնները: Որեւէ պահուն կարելի է տեսնել նաեւ Հիմնադրամի կողմէ հաւաքագրուած միջոցներու եւ կատարուած հատուցումներուն չափը:

Տնօրէնը տեղեկացուց, որ մինչեւ օրս Հիմնադրամը ունեցած է 54 միլիոն տոլարի եկամուտ, որուն շնորհիւ նպաստ կարելի եղած է տալ 2008 թուականէն ասդին բոլոր զոհուած եւ վիրաւորուած զինծառայողներուն: Մօտ 400 հոգիներու պարագային տրամադրուած են իրենց հասած նպաստները: Ան աւելցուց նաեւ որ, այժմ կը ծրագրուի աւելի ետ երթալ ու նպաստ տրամադրել 1998 թուականէ սկսեալ զոհուածներուն, յոյս յայտնելով որ, օրին մէկը կարելի կը դառնայ աւելի ետ երթալ՝ մինչեւ Արցախեան ազատամարտը:

Մինչեւ օրս Հիմնադրամը ստացած է 600 հազար տոլարի նուիրատուութիւններ՝ Հայաստանէն եւ արտասահմանէն, որոնք վերջին տաւուշեան պատերազմին յաջորդող օրերուն մեծ թափ ստացած են:

Պր. Աւետիքեան տեղեկացուց նաեւ որ, Հիմնադրամը ամէն տարի ստուգման կ՚ենթարկուի միջազգային հաշուապահական ընկերութեան մը կողմէ:

Պր. Աւետիքեան կոչ ըրաւ այցելելու Հիմնադրամի կայքէջը՝ www.1000plus.am եւ հոն ծանօթանալ բոլոր ծրագիրներուն, նուիրատուներու ցանկին եւ այլ մանրամասնութիւններու՝ Հայերէն, Անգլերէն եւ այլ լեզուներով:

Վերջաւորութեան Զինծառայողներու Ապահովագրութեան Հիմնադրամի Տնօրէն՝ Վարուժան Աւետիքեան պատասխանեց լրագրողներու հարցերուն:

Մամլոյ ասուլիսը վարեց Հիւպատոսութեան մամուլի հետ կապերու պատասխանատու Լիլիթ Սեդրակեանը:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ

# Մարդասիրական Օժանդակութիւնները Կը Հասնին Լիբանան

Շարունակուած էջ 1-էն

կական Հիմնադրամին՝ կեդրոնական դրամատան բացուած յատուկ հաշուեհամարներու միջոցով: Հիմնադրամը նաեւ ունի կատարելագործուած կայք, որտեղ առցանց նուիրատուութեան շատ արագ հնարաւորութիւն կայ:

Ըստ Արշամեանին՝ վերջին քանի մը ամիսներուն «Հայաստան» համահայկական հիմնադրամը, իր տարածքային կառոյցները, ինչպէս նաեւ Արցախի կառավարութիւնը բաւական մեծ դրամական օգնութիւն ցուցաբերած են Լիբանանի հայկական կրթական հաստատութիւններուն: Տնտեսական ճգնաժամը մեծապէս ազդած է Լիբանանի հայկական կրթական հաստատութիւններուն վրայ: Վերջին անգամ մօտ երկու ամիս առաջ 55 հազար տոլարի օգնութիւն տրամադրուած է այնտեղի հայկական կրթական հաստատութիւններուն:



Հայաստանի պատուիրակութեան հանդիպումը ՍԴՀԿ ղեկավարութեան հետ

Ըստ Արշամեանի՝ այսօրունէ պէտք է նախագծել, թէ ինչպէս պէտք է կարողանանք լիբանանահայերուն ժպիտով ու շատ յարգալից ընդունիլ Հայաստան, եթէ անոր կարիքը ըլլայ:

Օգնութեան առաջին խմբաքանակներուն հետ Լիբանան ժամանած հայկական պատուիրակութեան անդամները այցելեցին Հայ կրօնական համայնքապետերուն, կուսակցութիւններուն եւ հաստատութիւններուն՝ ծանօթանալու համար Լիբանանահայութեան կարիքներուն:

Օգոստոս 10-ին պատուիրակութեան անդամները այցելեցին նաւահանգիստի պայթումէն մեծապէս տուժած Նոր Հաճըն թաղամաս, ուր Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան դարմանատան մէջ տեսակցեցան Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Սեպուհ Գալփաքեանի, Վարիչ Մարմինի անդամներուն, ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկ. Ալեքսան Քէօշկէրեանի եւ կուսակցութեան հովանաւորութիւնը վայելող միութիւններու եւ կառոյցներու պատասխանատուներուն հետ:

Հայաստանէն ժամանած պատուիրակութեան մաս կազմեցին Սփիւռքի հարցերու գլխաւոր յանձնակատար Զարեհ Սինանեանը, Հայաստան-Լիբանան խորհրդարանական բարեկամութեան յանձնաժողովի նախագահ, երեսփոխան Հրաչեայ Յակոբեանը, »Հայաստան« համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Հայկակ Արշամեանը, ներկայութեամբ Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Վահագն Աթաբէկեանի եւ դեսպանութեան ռազմական կցորդ Ալեքս Մուշեղեանի:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Լիբանան-Հայաստան բարեկամական յարաբերութիւնները, համատեղ իրականացուող աշխատանքները, ինչպէս նաեւ Պէյրութի պայթումին յաջորդած օրերուն Հայաստանէն Լիբանան մարդասիրական օժանդակութեան կարեւորութիւնը: Շեշտուեցաւ, որ Հայաստանէն ուղարկուած նպաստը շատ մեծ նշանակութիւն ունի ինչպէս Լիբանանին, այնպէս ալ լիբանանահայութեան համար: Ընկ. Գալփաքեան իր արտասանած խօսքին մէջ յիշեցուց, որ հայ ժողովուրդի ծոցէն ծնած Հնչակեան կուսակցութիւնը միշտ եղած է հայրենասէր եւ անոր հայրենասիրութիւնը չէ պայմանաւորուած կուսակցական նեղ շահերով, խորհըրդարանական աթոռներով կամ իշխանական դիրքերով, այլ միշտ կը կանգնի Հայաստանի կողքին՝ անոր լաւ եւ վատ օրերուն: Ընկ. Գալփաքեան վերահաստատեց կուսակցութեան ամբողջական զօրակցութիւնը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ անոր բարեկարգումի ծրագրերուն:

Հանդիպումին ընթացքին արծարծուեցաւ նաեւ հայրենադարձութեան թղթածրարը եւ շեշտուեցաւ վերջնական բնակութեան նպատակով Հայաստան փոխադրուող հա-յորդիներուն օժանդակելու կարեւորութիւնը:

# Լիբանանահայ Համայնքի Վերականգնումը

Շարունակուած էջ 1-էն

ամերիկաներ գաղթելու հաստատուին հայրենի հողին վրայ:

Անկախ միջազգային կառոյցներու եւ պետութիւններու կողմէ Լիբանան հասնող օժանդակութեան, որմէ մասամբ կրնայ օգտուիլ նաեւ հայութիւնը, մենք որպէս պետութիւն, ժողովուրդ եւ սփիւռքահայութիւն մեր ուսերուն կ՚իյնայ պարտաւորութեան մեծ բաժին: Այս ուղղութեամբ պէտք է կրկնապատկել մեր ջանքերը ու ընել մեր կարելին, կարճ ժամկէտներու մէջ վերականգնելու համար Լիբանանահայ համայնքը, որպէսզի ան վերագտնէ իր նախկին վիճակը եւ շարունակէ իր կարեւոր առաքելութիւնը մեր ազգային կեանքէն ներս:

Այս ուղղութեամբ առաջին նշանները յուսադրող են: Գլխաւորութեամբ Հայաստանի պետութեան, բազմաթիւ բարեսիրական կազմակերպութիւններ եւ անհատ նուիրատուներ կը փութան նիւթական ու մարդասիրական օժանդակութիւն հասցնել համայնքին: Կարիքները հսկայական են ու կը կարօտին երկարաշունչ աշխատանքի, սակայն վստահ ենք, որ մեր ժողովուրդը պիտի կարողանայ իր մէջ ուժ գտնել յաղթահարելու այս մարտահրաւէրը եւս, զայն նկատելով բոլորիս ազգային արժանապատուութեան հարցը:

«ՄԱՍԻՍ»

# Լիբանանի Հայ Համայնքից Արտահոսք Լինելու Է. Պէտք Է Պետական Մակարդակով Լրջօրէն Մտածեն Այս Հարցի Շուրջ



*«Առաջին Լրատուական»-ի զրուցակիցն է Օքսֆորդի համալսարանի արեւելագիտութեան ամբիոնի դասախօս, հասարակաբան եւ սփիւռքագէտ Հրաչ Չիլինկիրեանը:*

- Դեռեւս 2017-ին դուք ասում էիք՝ Սփիւռքի մեծամասնութիւնը հետաքրքրուած չէ Հայաստանով: Հիմա, երբ Հայաստանում արդէն երկու տարի է յեղափոխութիւն է տեղի ունեցել, որքանո՞վ է Սփիւռքում Հայաստանով հետաքրքրվողների շրջանակը մեծացել: Արդեօք այդ հետաքրքրութեան մեծացումը յանգեցրե՞լ է Սփիւռքից ՀՀ վերադառնալ ցանկացողների թուի աւելացմանը:

*- Հայաստանի անկախացումից յետոյ Սփիւռքը, ընդհանուր առմամբ, ակնկալում էր, որ հայրենիքը ժողովրդավար եւ բարգաւաճ պիտի լինի, որ Հայաստանը կունենայ արդարութեան եւ հաւասարութեան նուազագոյն չափանիշներ, թերեւս իդէալիստական թուացող սպասումներ: Անկախութեան առաջին տարիները անցումային շրջան էին, եւ շատ բացթողումների հանդէպ Սփիւռքը որոշ չափով հասկացողութիւն ցուցաբերեց: Բայց յետագայ տարիների զարգացումները բաւական դիւրախաբ եւ անընդունելի էին: Փտածութիւնը, անարդարութիւնը եւ անհաւասարութիւնը հասարակութեան համար քանդիչ երեւոյթներ դարձան: այս պատկերի կամ շրջագծի մէջ էր, որ Սփիւռքը հետզհետէ սկսեց չհետաքրքրուել Հայաստանով: Թաւշյայ յեղափոխութիւնը, անցեալի համեմատ, արմատական փոփոխութիւն բերեց, եւ Սփիւռքի համար Հայաստանի հետ նոր յանձնառութիւն ներշնչող շրջան սկսուեց:*

*Թաւշյայ յեղափոխութիւնը մեծ վերափոխման ենթարկեց Սփիւռքի վերաբերմունքը Հայաստանի հանդէպ: Սփիւռքի հետաքրքրութիւնը Հայաստանի նկատմամբ լրիւ փոխուեց, եւ այդ յեղափոխութեան օրերին Սփիւռքը զանգուածաբար հետեւում էր զարգացող իրադարձութիւններին: Անգամ որդիս, որ այդ ժամանակ 10 տարեկան էր, դպրոցից գալիս ու հարցնում էր՝ պապ, ինո՞չ եղավ Հայաստանում: Այսինքն՝ լրիւ նոր շունչ ու նոր երանգ բերեց յեղափոխութիւնը: Դրանից յետոյ Հայաստանի հանդէպ շատ դրական կեցուածք առաջացավ եւ նոր հետաքրքրութիւն դէպի Հայաստանը: Անշուշտ, ամէն ինչ կատարեալ չէ Հայաստանում, բայց կարող եմ ասել, որ Սփիւռքի տեսանկիւնից, Հայաստանի բոլոր խնդիրների առումով, ներկայ վիճակը շատ աւելի նախընտրելի է, քան անցեալում էինք տեսնում: Այսինքն՝ պէտք է արձանագրել, որ Սփիւռքի համար էլ «յեղափոխութիւն» տեղի ունեցավ, որպէսզի Սփիւռքի տարբեր կազմակերպութիւններ, անհատներ նոր տեսանկիւնից նայեն Հայաստանին, վերահաստատեն իրենց շփումները Հայաստանի հետ եւ, ինչու ոչ, նոր կամուրջներ ստեղծեն ՀՀ-ի հետ: Մանաւանդ որ երիտասարդ սերունդը այսօր շատ աւելի հետաքրքրուած է Հայաստանով, որովհետեւ այդ յեղափոխութիւնը, այդ փոփոխութիւնը իրենց սրտին մօտ է:*

- Նոր իշխանութիւնը մտածում է հայրենադարձութեան մասին օրէնք մշակելու շուրջ եւ այդ ուղղութեամբ աշխատանքներ է իրականացնում: Մասնաւորապէս, արտօնութիւններ կսահմանի ՀՀ ներգաղթողների համար՝ հիփոթեքային վարկի, աշխատանքով ապահովելու հետ կապուած: Ձեր կարծիքով՝ կա՞յ նման օրէնքի անհրաժեշտութիւն, եւ կարո՞ղ է այն գայթակղել մեծ թուով մարդկանց տեղափոխուելու Հայաստան:

*- Այստեղ մի քանի հարցեր կան: Նախ՝ սփիւռքահայը արդէն իրաւունք եւ հնարաւորութիւն ունի ՀՀ-ի քաղաքացիութիւն ստանալու, որը մեծ նուէր է սփիւռքահայերի համար: սայ արդէն հնարաւորութիւն կտայ սփիւռքահային օգտուելու բոլոր օրէնքներից եւ պաշտպանուելու ինչպէս իւրաքանչիւր ՀՀ-ի քաղաքացի: Այլ հարց է, որ ինչպէս պէտք է օգնել կամ աջակցութիւն ցուցաբերել այն սփյուռքահայերին, որոնք գաղթական են կամ գալիս են այնպիսի երկիրներից, որտեղ աճուելի տնտեսական անկում կայ, կամ մնայուն քաղաքական մաշեցնող խնդիրներ: Այս գործօնը նիւթական օժանդակութեան հարց է, օրինակ, վարկերի տրամադրում եւ այլն: Ի հարկէ, դա լաւ է, որ նման հնարաւորութիւններ լինեն, բայց, ըստ իս, դա խնդիրը լրիւ չի լուծի՝ եթէ նկատի ունենանք այսօրվայ Միջին Արեւելքի կացութիւնը: Բանն այն է, որ այսօր ընդհանրապէս Միջին Արեւելքից գաղթում է միջին դասակարգը, այսինքն՝ նոյնիսկ տեղափոխուելու համար որոշ գումար է պէտք՝ օդանաւի տոմսեր, ճամփորդութեան ծախսեր եւ այլն:*

*Այսինքն՝ այնպէս չէ, որ օրէնք ընդունելով՝ սփիւռքահայը միանգամից կարող է գալ ու հաստատուել Հայաստանում: Օրինակ՝ այսօր աճուելի աղքատութիւն կայ Լիբանանում, եւ ժողովուրդը անգամ, կարող եմ ասել, սովամահ լինելու վտանգի առջեւ է կանգնած: Հիմա, եթէ Լիբանանում հայկական ընտանիքներ կան, որոնք ուզում են Հայաստան գալ, ինչպէ՞ս պէտք է գան: Մարդը երեխաների հաց գնելու փող չունի, որտեղի՞ց փող հայթայթի ընտանիքով Հայաստան տեղափոխուելու համար:*

- Դա, ըստ էութեան, Հայաստանի պետութիւնը պէտք է հոգա՞:

*- Կամ պետութիւնը, կամ ուրիշ ձեւերով, օրինակ, միջազգային կազմակերպութիւններ, կամ միջպետական նիւթական ներդրումներով: Ասածս այն է, որ ներգաղթի տարբեր տեսակներ կան: Հայրենադարձութիւնը մի բան է, գաղթականութիւնն ուրիշ բան է: Կարող է մէկը Ֆրանսիայում կամ Ամերիկայում շատ լաւ պայմաններ ունենայ եւ որոշի, որ փոխադրւում է Հայաստան: Սա հայրենադարձութիւն է: Կամ, ինչպէս երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ՝ 1946-1949 թուականներին, հայրենադարձութիւն կազմակերպուեց Սովետական Հայաստանի կառավարութեան նախաձեռնութեամբ: Այդ ժամանակ մարդիկ ստիպուած չէին, փողոցներում չէին մնացել, իրենց կեանքն ունէին, բայց որոշեցին Հայաստան վերադառնալ: Այսինքն՝ հայրենադարձութիւնը մի թեմա է, իսկ գաղթականներին Հայաստանում տեղաւորելը լրիւ այլ խնդիր է: Օրինակ՝ եթէ ուզենանք Լիբանանից 5 հազար հայ ընտանիք փոխադրել Հայաստան, ենթադրում եմ, որ եթէ ամէն մի ընտանիքի համար 20 հազար դոլար հաշվես, ապա 100 մլն դոլարի կարիք կը լինի: Սփիւռքն ի վիճակի չէ նման գումարներ տալու, բոլորս դրամահաւաքների ժամանակ տեսնում ենք, որ եթէ 10 մլն դոլար հաւաքւում է, դա մեծ գումար է համարւում: Ես չեմ կարծում, որ այսօր Հայաստանն այդ նիւթական պայմաններն ունի, որ նման բարդ խնդիր լուծի Սփիւռքի համար: Օրինակ՝ ըստ մեր ուսումնասիրութիւնների՝ առաջիկայ 5 տարիների ընթացքում Լիբանանի հայութեան գրեթէ 60 տոկոսը մտադիր է Լիբանանից հեռանալ:*

*Հիմա արդէն Լիբանանի հայ համայնքը շատ է նօսրացել, մօտ 40 հազարն է մնացել, եւ համայնքից, վստահաբար, դեռ արտահոսք լինելու է: Ասեմ, որ շատերը մտածում են հէնց Հայաստան գնալու մասին, որովհետեւ վիզայի խնդիր չունեն, այլ դիւրութիւններ կան: Այսօր եթէ Հայաստանում պետական մակարդակով լրջօրէն մտածեն այս հարցի շուրջ, կարեւոր գործօններից մէկը բնակարանների հարցն է: Կարող են, ասենք, 5 հազար ընտանիքի համար շէնքեր կառուցեն, թէկուզ ոչ Երեւանում, եւ ասեն՝ դուք այստեղ կարող էք մէկ տարի անվճար կամ քիչ վարձով մնալ: Այսինքն՝ պէտք է մոդելներ գտնել, որ այս մարդիկ կարողանան իրենց կեանքը վերականգնել Հայաստանում: Այստեղ պէտք է հաշուի առնել նաեւ, որ եթէ դու 5 հազար ընտանիքի համար բնակարաններ ես կառուցում, այդտեղ քանի հազար մարդ կարող է աշխատել, եւ սա էլ ներդրման ձեւ է: Նաեւ տարիների ընթացքում այդ հազար ընտանիքը Հայաստանի բնակչութեան դրական աճին կը նպաստի: եթէ Հայաստանն իր առջեւ նպատակ դնի, որ 100 մլն դոլարի ներդրում է հարկաւոր այս ծրագրի համար, որպէս 3-5 տարիների պետական ծրագիր, բնականաբար, այդ գումարը տնտեսութեան մէջ շրջանառվելու է, աշխատատեղեր են ստեղծուելու: Բացի դրանից՝ այդ 5 հազար ընտանիքը, որ տեղափոխուելու է Հայաստան, իրենք իրենց հերթին աշխատելու են, ինչը եւս աշխուժացնելու է տնտեսութիւնը: Ասելիքս այն է, որ մենք պէտք է ծրագրուած մօտեցում ունենանք եւ համոզվենք, որ փոքր գումարներով կամ համայնքային նուիրատուութիւններով հնարաւոր չէ նման ծրագիր իրագործել: Բացի դրանից՝ մենք անընդհատ պէտք է երկխօսութեան մէջ լինենք ու զգանք այն մարդկանց զարկերակը, որոնց օգնում ենք: Այսօր որեւէ մէկը լրջօրէն հարցրե՞լ է իրաքահայերին կամ սիրիահայերին, կամ լիբանանահայերին, թէ ինչ կարիքներ նրանք ունեն: Շատերն ասում են՝ մեզ աշխատանք տուէք, մնացածը մենք կ'անենք: Բայց միւս կողմից Հայաստանի հասարակութիւնն էլ աղքատութիւն մէջ է, աշխատանքի խնդիր ունի, եւ դրանով հարցը բարդանում է, քանի որ Հայաստանում էլ մարդիկ կան, որոնք այն վիճակում են, ինչպիսին Լիբանանում ապրողների վիճակն է: Եւս մի հարց կայ. եթէ Հայաստանն օգնի, որ սփիւռքահայերը Հայաստան տեղափոխուեն եւ նրանց աջակցի, Հայաստանի հասարակութիւնն էլ կարող է ասել՝ բա մեզ ինչո՞ւ չէք օգնում, մենք էլ կարիքներ ունենք: Այնպէս որ, ամէն ինչ մտածուած եւ երկարաժամկէտ հայեացքով պէտք է լինի:*

- Հայաստանում մեկնարկել է «ի գործ» ծրագիրը եւ արդէն նշւում է, որ 100 սփիւռքահայ մասնագէտներ աշխատանքի կ'անցնեն պետական կառավարման համակարգում: Ծրագրի համաձայն՝ հրաւիրող կողմը կհոգայ ճանապարհի ու կեցութեան ծախսերը: Դուք ի՞նչ կարծիք ունէք այս ծրագրի վերաբերեալ:

*- Ես կարծում եմ, որ սքանչելի ծրագիր է Սփիւռքի հետ կամուրջն ամրապնդելու համար, որ սփիւռքահայերը գան Հայաստան, մօտիկից ամէն ինչ տեսնեն, աշխատեն, ապրեն այստեղ ու իրենց գիտելիքները, փորձը բերեն Հայաստան: Սա լաւ առիթ է, որ Հայաստանի պետական համակարգն օգտուի նման հնարաւորութիւններից: Վստահաբար, այդ 100-ից ոմանք կ'որոշեն մշտական մնալ, հաստատուել Հայաստանում: Կորոնավիրուսի համաճարակից յետոյ, ես կարծում եմ, որ, քանի որ Հայաստանը փոքր երկիր է եւ որոշ սահմանափակումներ ունի, այս համաճարակից յետոյ կարող է շատ գրաւիչ երկիր լինել շատերի համար: Արեւմտեան երկրներում մտահոգութիւններ կան, որ կեանքը դեռեւս իր նախկին իրավիճակին չի վերադառնալու, գործազրկութիւն կայ, տնտեսական աճուելի անկում կայ, եւ հնարաւոր է տարիներ պէտք լինեն այդ երկրներին ոտքի կանգնելու համար: Հետեւաբար՝ ես կարծում եմ, որ սփիւռքահայերի համար Հայաստանը կարող է հրապուրիչ լինել: Յատկապէս մարդիկ, որոնք որոշ նիւթական կարողութիւններ ունեն դրսում, կարող են աշխատանքներ ստեղծել եւ շատ լաւ ապրել Հայաստանում: Այսինքն՝ համաճարակից յետոյ պատկերը կարող է փոխուել:*

# Պէյրութ Դարձեալ Արիւն եւ Արցունք Լացաւ



*Երեքշաբթի, 4 Օգոստոսի երեկոյեան ժամը 6-ի շուրջ, սարսափազդու պայթում մը ցնցեց Լիբանանի մայրաքաղաքը: Պէյրութի գլխաւոր նաւահանգիստին մէջ տեղի ունեցած պայթումը աննախադէպ էր իր գործած աւերով:*

*Մայրաքաղաքին կէսէն աւելին կրեց նիւթական ահաւոր վնասներ եւ մարդկային զոհեր:*



*Անցեալին Արեւելքի մարգարիտը համարուող Լիբանանը անգամ մը եւս յայտնուեցաւ քաոսային վիճակի մէջ, զոհելով իր զաւակները, ենթակառոյցները, ժողովուրդին բնակարաններն ու աշխատանոցները, եւ ամենավատը՝ պայթումը բոլորովին քանդեց լիբանանցիներուն արդէն իսկ փճացած տրամադրութիւնը եւ անոնց ունեցած նշոյլ մը յոյսը, խուճապի մթնոլորտ ստեղծելով բոլորին մօտ:*

*Պէյրութի նաւահանգիստին մէջ*



*տեղի ունեցած ահաւոր պայթումին հետեւանքով ծանրօրէն տուժեց նաեւ Նոր Հաճըն Թաղամասը, ուր վիրաւորուեցան բազմաթիւ հայորդիներ, վնասուեցան բնակարաններ, վաճառա տուներ ու հաստատութիւններ: Թաղամասին մէջ գործող ՀԿԲՄ-ի դարմանատան աշխատակից ները ժամեր շարունակ ընդունեցին շրջանի բազմաթիւ վիրաւորները եւ անոնց տրամադրեցին շտապ օգնութիւն, դարմանեցին վէրքերը եւ յատկացուցին անհրաժեշտ դեղօրայք:*

*Պայթումին պատճառով նիւթական ծանր վնասներու ենթարկուեցան նաեւ Սուրբ Գէորգ եկեղեցին եւ «Արարատ» օրաթերթի խմբագրատունը: Փշրուած ապակիներ, խլուած պատուհաններ եւ դուռեր, կոտրուած նստարաններ ու պահարաններ: Համատարած աւեր, որ կարիք ունի լայնամասշտապ համագործակցութեան, միասնական աշխատանքի եւ վերականգնման համար անհրաժեշտ համազգային ներդրումի:*

*Աղէտին յաջորդ օրուընէ սկսեալ, Հաճըն Թաղամասի տղաքը, Հ.Մ.Մ. Պէյրութի արիները եւ տխրունիական երիտասարդները գերագոյն մղումով անցան մարդասիրական օժանդակութեան, մաքրագործութեան եւ աւերին տակէն ոտքի կանգնելու աշխատանքին: Ս. Գէորգ եկեղեցւոյ, ՀԿԲՄ-ի դարմանատան, «Արարատ» օրաթերթի խմբագրատան, Հաճըն եւ Խալիլ Պատաուի Թաղամասերու փշրուած ապակիները մաքրուեցան, խլուած պատուհանները վերադասաւորուեցան, անհրաժեշտ եւ անմիջական օգնութիւն մատուցուեցաւ շրջանին մէջ վնաս կրած բնակիչներուն եւ անոնց բնակարաններուն:*

*Վեր. Հրայր Ջոլաքեանի, եւ մօտէն ծանօթացաւ շրջանի վնասուած կառոյցներուն եւ բնակիչներուն հասած կորուստներուն:*

*Այլ գիծի վրայ, երէկ երեկոյեան, Նոր Հաճնոյ եւ Խալիլ Պատաուի Թաղամասերուն մէջ տեղի ունեցաւ ուտեստեղէնի նպաստա-*



*բաշխում, կազմակերպութեամբ ՀԿԲՄ-ի վարչութեան, դարձեալ Հ.Մ.Մ. Պէյրութի արիներու եւ Ս.Դ.Հ.Կ. Տխրունի Ուս. Երիտ. Միութեան երիտասարդ- երիտասարդուհիներու ձեռամբ, որոնք Թաղամասերու բնակիչներուն բաշխեցին ուտեստեղէն:*

*Լիբանանի դիմագրաւած այս մարտահրաւէրին ի տես, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսը կոչ ուղղեց Լիբանանի հայութեան վերականգնումը կատարելու համազգային ճիգով՝ Հայրենիքի, Սփիւռքի գաղութներուն եւ ընդհանրապէս հայ ժողովուրդի զաւակներուն գործօն մասնակցութեամբ: Ան կոչ ուղղեց զօրակից դառնալու Լիբանանի հայութեան, որպէսզի ան կարենայ վերանորոգ կենսունակութեամբ ու նուիրումով շարունակել իր համազգային առաքելութիւնը:*

****

*Աղէտահար քաղաք դարձած Պէյրութը այսօր անցած է ապաքինումի փուլին: Դարձեալ պահն է միասնականութեան, համազգային ուժերուն ապաւինելով ոտքի կանգ-*



*նելու: Երեքշաբթի օր Պէյրութը ցնցած պայթումը սուգի մատնեց բոլորը, բայց կեանքին կառչած ժողովուրդը արդէն յաջորդ օր սկսաւ թօթափել իր վրայէն աղէտի փոշին, դարմանել իր վէրքերը, սրբել իր արցունքները, խաչակնքել եւ անցնիլ վերականգնումի գործընթացին: Այսպէս ըրին բոլոր լիբանանցիները, այսպէս ըրին բոլոր լիբանանահայերը, այսպէս ըրին նաեւ Հաճընի երիտասարդները, ՀՄՄ Պէյրութի արիները եւ տխրունիական տղաքը: Վարձքը կատար բոլոր երիտասարդ-երիտասարդուհիներուն:*

*Միւս կողմէ, Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան, պայթումին հետեւանքով վնասուած հայկական եկեղեցիներու եւ կառոյցներու կատարած այցելութիւններու ծիրէն ներս, նախանցեալ օր այցելեց նաեւ Նոր Հաճըն եւ շրջեցաւ Թաղամասին մէջ, ծանօթացաւ բնակիչներուն կրած վնասներուն եւ անոնց մտահոգութիւններուն ու խնդիրներուն:*

*Այցելութիւններու ծիրէն ներս, երէկ Նոր Հաճըն Թաղամաս այցելեց նաեւ Հայկազեան համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան, ընկերակցութեամբ*

*«ԱՐԱՐԱՏ»*

# Պէյրութի Ահաւոր Պայթիւնին Հետեւանքով 16 Հոգիներ Ձերբակալուած

*Անցեալ Երեքշաբթի, Պէյրութի աղիտալի ահաւոր պայթիւնին հետեւանքով, իշխանութիւնները ձերբակալեցին 16 հոգիներ, որոնք պատասխանատու պաշտօններ կը վարէին նաւահանգիստին մէջ, ներառեալ ընդհանուր տնօրէնն ու մաքսատան ղեկավարները: Հարցաքննուած են նաեւ 18 ուրիշներ:*

*Նշենք նաեւ որ պայթիւններու հետեւանքով աւելի քան 200 հոգի մահացած է եւ 5000 հոգի վիրաւորուած:*

*Այս առթիւ բողոքի շարունական մեծ ցոյցեր տեղի ունեցան Պէյրութի Խորհրդարանի եւ այլ նախարարութիւններու շէնքերուն առջեւ, պահանջելով Հանրապետութեան նախագահի եւ դահլիճի հրաժարումը: Տեղ տեղ կատարուեցան խուժտանգումներ եւ բռնարարքներ ոստիկանութեան եւ երիտասարդ ցուցարարներու միջեւ:*

# Լիբանան. Աղերս խաղաղութեան եւ Վերակենդանացման

ԶԱՒԷՆ ԽԱՆՃԵԱՆ
Գործադիր Տնօրէն Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան




*Տարածաշրջանի հակամարտ ուժերը պէտք է կարգաւորեն իրենց տարաձայնութիւնները բանակցութիւններու սեղանին շուրջ եւ ոչ թէ անոր խաղաղ ու անմեղ բնակչութեան ճաշասեղաններու վրայ:*

*Պէյրութի հզօր պայթումը, որ բազմաթիւ անմեղ Լիբանանցիներու կեանքը խլեց՝ իր ետին թողելով հազարաւոր վիրաւորներ, աւելի քան աւերիչ էր: Անկախ այն իրականութենէն թէ արկած էր կամ կանխամտածուած ոճիր, վնասը չափազանց ահռելի էր եւ անկրելի: Աւերն ու կործանումը այնքան հսկայական էին եւ ծաւալուն, ոմանք զայն բնութագրեցին նմանը չունեցող Լիբանանի 15-ամեայ քաղաքացիական պատերազմի ընթացքին:*

*Երկիր մը, որ քաղաքական, տնտեսական եւ առողջական ճգնաժամէ կը տառապի, այժմ փորձառութիւնը կ?ունենայ բռնութեան եւ ֆիզիքական վնասի՝ կեանքի եւ կալուածի հանդէպ: Մեր սիրտերը կը ճմլուին պայթումի հետեւանքով զոհուածներուն եւ անոնց ընտանիքներուն համար: Իմ յոյսս եւ աղօթքս է, որ այս բռնութիւնը չի ծաւալի երկրի մը մէջ, որ դարեր շարունակ կրթութեան լուսաւորութեան, տեղաշարժի եւ արտայայտութեան ազատութիւն, բնական գեղեցկութիւն եւ իր ժողովուրդի ջերմութիւնը սփռած է չորսդին: Այս երկրի մէջ էր իմ բարձրագոյն ուսումնավայրը: Թող զոհերը հանգչին խաղաղութեամբ եւ Սուրբ Հոգին մխիթարէ իրենց սիրելիներն ու հարազատները Իր զօրութեամբ, որ մեր հասկացողութենէն վեր է:*

*Լիբանան՝ այժմ որեւէ ատէէ աւելի անյապաղ կարիքը ունի երկու բանի.-*

*1. Խաղաղութիւն՝ առաջնահերթ*

*40-ական թուականներու իր ձեռք բերած անկախութենէն իվեր, այդ տարածաշրջանի մէջ մտքի ազատ արտայայտութեան, ազատ մամուլի, ազատ ելեւմուտի եւ անոր Աստուածատուր բնութեան գեղեցկութեամբ օրհնուած եւ մատուցուած մթնոլորտի պատճառաւ, Լիբանան դարձած է կիզակէտը տարածաշրջանի գողարկուած եւ ծածուկ գաղտնի գործողութիւններու եւ դաւադրութիւններու:*

*Մերձաւոր Արեւելքի սրտին վրայ հանգչող այս փոքր՝ երբեմնի Քրիստոնեայ մեծամասնութիւն ունեցող երկիրը, հոգնած է իր հողին վրայ ճակատող հակամարտութիւներէ, թշնամութիւնէ, մարտերէ եւ պայքարէ: Այսօր Լիբանանը, իր ապականած քաղաքական խաւէն անկախ, ենթարկուած է հաւաքական, ուղղակի կամ անուղղակի պատժամիջոցներու՝ որոնք խախտած են անոր տնտեսութիւնը, անդամալուծած են առեւտուրը եւ երկրի բնակչութիւնը առաջնորդած սովամահութեան ճանապարհին: Մարդասիրկան ոգիով՝ համահունչ մեր արժէքներուն, անհրաժեշտ է որ անմարդկային պատժամիջոցները ջնջուին, վերացնելով տարածաշրջանի բնակչութեան տառապանքը:*

*Տարածաշրջանի հակամարտ ուժերը պէտք է կարգաւորեն իրենց տարաձայնութիւնները բանակցութիւններու սեղանին շուրջ եւ ոչ անոր խաղաղ ու անմեղ բնակչութեան ճաշասեղաններու վրայ:*

*Խաղաղութիւնը հրամայական է եւ գերակայ Լիբանանի մէջ եւ շուրջ:*

Շար.ը էջ 16



## ՓԻՒՆԻԿԸ ՉԻ ՄԵՌՆԻՐ

Մեր սիրտն ու հոգին ձեզի հետ են՝ լիբանանահայեր եւ «եա' ախի լուպնանի»

Դառնամ տունս տամ անտուններուս,
Դառնամ ողորմի~ տամ զոհուածներուս
Դառնամ սիրտս տամ անկոտրում եղբայրներուս եւ քոյրերուս
Դառնամ հոգիս տամ անվեհեր լիբանանցիին
Դառնամ ողջո'յն տամ պէյրութցիին
Դառնամ ամէն ինչ տամ Պուրճ Համուտին
Դառնամ ու կոչ ընեմ Փիւնիկ թռչունին:

Գեղեցիկ ծննդավայր քաղաքս Պէյրութը կը մխայ ծուխի, թունաւոր ու գունաւոր ամպերու տակ, նաւահանգիստ «մարֆա~ն» կ'այրի, Պապ Իտրիսէն մինչեւ Ճըմմէյզի, Աշրաֆիէ, Հայկաշէն, Մար Միխայիլ, Խալիլ Պետեվի ու Նոր Հաճըն, Պուրճ Համուտէն մինչեւ Ջալքա եւ Անթիլիաս ապակիներու տարափին տակ կը փայլին հրէշաւոր աչքերով: Վերը՝ հոն, ուր իրենց վեհութեամբ, բայց խոցուած սիրտով ու արցունքոտ աչքերով կը դիտեն վար՝ Մարիամ Աստուածածինն ու Քրիստոսը գրկաբաց, Եղեռնի յուշարձանն ու մայրիները եւ արիւն-արցունք կու լան: Բայց կանգուն են անոնք:

Ռումբ եւ «սարուխ», «ղաննաս» ու M16 շատ ես տեսեր ծովափնեայ իմ քաղաք՝ իմ միշտ անկոտրում Պէյրութ: Դիմացա~ր, նորէ'ն պիտի դիմանաս: Քու խրոխտ զաւակներդ, ուստրերդ ու դուստրերդ նորէ'ն ոտքի պիտի կանգնին ու կանգնեցնեն քեզ, զի Փիւնիկ թռչունը չի' մեռնիր, մոխիրներու մէջ ալ թաղես ան յարութիւն կ'առնէ: Չարը կրնայ հարուածել միսին ու ոսկորին միայն, բայց հոգիդ չի կրնար զգետնել:

Պիտի յառնի՝ս ու նորէն պիտի ժպտաս, Լիբանան:

Զաւակդ՝
Մինաս Գոճայեան
Լոս Անճելըս

# Ֆրանսայի Նախագահ Մագրոնի Միօրեայ Այցը Լիբանան



*Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ Էմմանուէլ Մագրոն, անցեալ Հինգշաբթի միօրեայ այցով, Պէյրութ ժամանեց եւ իսկոյն պաշտօնական հանդիպումներ ունեցաւ Լիբանանի հանրապետութեան նախագահ Միշէլ Աունի եւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ:*

*Ան իր հետեւորդներով շրջեցաւ Պէյրութի նաւահանգիստի աղէտի վայրը: Հանդիպումներ ունեցաւ նաեւ ժողովրդային խաւերու հետ: Ան ամենուրէք իր անվերապահ աջակցութիւնը յայտնեց երկրի վերաշինութեան գործին եւ ըսաւ թէ եկած է ոչ թէ կառավարութեան նեցուկ կանգնելու, այլ՝ Լիբանանի ժողովուրդին օգնելու:*



## Հայաստան Համահայկական Հիմնադրամ. Համահայկական Ուժերով Սատարենք Լիբանանի Մեր Հայրենակիցներին

*«Հայաստան Համահայկական Հիմնադրամը» մեկնարկում է «անյետաձգելի օգնութիւն լիբանանահայերին» խորագրով նոր դրամահաւաք արշաւ: Հայկական ամենահին համայնքներից մէկը, որը մէկ դարից աւել մեր ազգային անկոտրում ոգու եւ գոյատեւման խորհրդանիշն է, այսօր մեր աջակցութեան կարիքն ունի: Պէյրութի աղէտալի պայթիւնը բազմապատկեց Լիբանանում տիրող տնտեսական երկարատեւ ճգնաժամն ու համաճարակի հետեւանքները՝ անելանելի իրավիճակ ստեղծելով մեր հայրենակիցների համար: Տարիներ շարունակ Լիբանանի հայ համայնքը մեծ նուիրումով սատարել է թէ՛ Հայրենիքին, թէ՛ սփիւռքի համայնքներին: Այժմ մեր գործելու ժամանակն է:*

*Հայապահպանման նուիրական իր առաքելութեանը համահունչ՝ «Հայաստան Համահայկական Հիմնադրամը» նախորդ տարվայ տնտեսական ճգնաժամի ժամանակ ամուր կանգնեց Լիբանանում գործող հայկական կրթամշակութային օջախների կողքին՝ ցուցաբերելով շարունակական աջակցութիւն:*

*Պէյրութի աղէտաբեր պայթւնի հետեւանքով առաջացած դժուարութիւնները յաղթահարելու նպատակով՝ մենք մեր հայրենակիցների համազգային համախմբման կարիքն ունենք:*

*Կոչ ենք անում միանալ համահայկական այս կարեւոր ձեռնարկին: Ձեր նուիրատուութիւնները կարող էք իրականացնել հիմնադրամի կայքում ստեղծուած յատուկ դրամահաւաք-արշաւի այս հարթակով՝ https://www.himnadram.org/hy, ինչպէս նաեւ փոխանցումներ կատարել ներքոյ նշեալ հաշուեհամարներին:*

*Հաւաքագրուած ողջ գումարն ուղղուելու է լիբանանահայերի ամենահրատապ կարիքներին:*

# Massis Weekly

Volume 40, No. 31 Saturday, AUGUST 15, 2020


## Armenian Governments Sends Planeloads of Humanitarian Aid to Lebanon
## Pledges Major Assistance to Beirut Armenian Community





YEREVAN -- Armenia has sent the first planeload of humanitarian aid to Lebanon following a massive explosion in Beirut which killed at least 158 people and injured thousands of others earlier this week.

About 12 tons of medication, foodstuffs and other vital supplies in boxes with an inscription "From Armenia's Heart To Beirut" were delivered to the Lebanese capital on board a chartered cargo aircraft that left Yerevan on Saturday evening. The first planeload of humanitarian aid included items that had been asked for by the Lebanese government and was intended for the people and the state of Lebanon.

The Armenian government send two more planeloads of humanitarian aid to Lebanon in the following days. The second and third aid supplies delivered on August 9 and 11 also include items designated for the Armenian community specifically.

The government in Yerevan pledged to provide relief aid immediately after the August 4 explosion at Beirut's sea-port warehouses.

Prime Minister Nikol Pashinyan described Lebanon as "one of Armenia's closest friends," implying the existence of a sizable and influential Armenian community in the Middle Eastern state.

At least 13 members of the community were reportedly among the victims of the explosion and more than 250 were injured. The devastating blast wave also destroyed or seriously damaged many Lebanese Armenian homes.

The blast and its devastating consequences have led to calls for the evacuation of Lebanon's ethnic Arme-

Continued on page 2

## AEBU Beirut Provides Urgently Needed Assistance



BEIRUT – Immediately following the August 4th devastating explosion in Beirut, three hospitals were destroyed and two severely damaged, causing the remaining hospitals to reach capacity. Facing the crisis, Beirut's Armenian Educational Benevolent Union (AEBU) immediately transformed its Socio-Medical Dispensary clinic into an urgent care facility, where medical professionals and volunteers treated and helped the injured.

AEBU's clinic, which is at the heart of the hardest hit neighborhoods in Beirut, with the help of volunteers also delivered medicine, water and food to elderly residents, established a food bank, helped with the cleaning and the start of a rebuilding process, and provided shelter to those in need near the blast site.

On the evening of Friday, August 7, a special social skill support program for the children of the impacted neighborhoods, took place in front of the AEBU center. It was organized by AEBU's psychologists, social workers, and educators with the help of the Dekhrouni Student and Youth Association members. The children sang and danced in a happy atmosphere to ease their anxiety, stabilize their mental status (after the traumatic event on August 4th), and create hope. At the end, AEBU treated the children and their parents with candy and refreshments.

These are the latest benevolent programs that AEBU Lebanon has provided to the Lebanese people who have recently faced dire circumstances caused by the COVID-19 pandemic, economic and political instability.

For those interested in donating to AEBU's efforts, please visit https://aebu.org/donate.

## Anna Naghdalyan "Once Again Turkey Demonstrates Inability to Face its Past"

YEREVAN — Armenian Foreign Ministry spokesperson Anna Naghdalyan has responded to the Turkish FM's statements on the occasion of the 100th anniversary of the Treaty of Sevres. "The statement issued by the Foreign Ministry of Turkey on the occasion of the 100th anniversary of the Treaty of Sevres once again demonstrates the inability of that country to face its past," Naghdalyan said today.



"Surprisingly, the current authorities of Turkey, who never miss a chance to praise their Ottoman heritage, nervously react to the reference of the Treaty of Sevres which the same Ottoman Empire signed with a number of states including the Republic of Armenia. The Treaty of Sevres has been and will remain a historical fact, which cannot be edited or wiped away,' she said.

'While evading to face its past and urging others to "take lessons from history instead of animosity", Turkey continues its traditional policy of justifying the Armenian Genocide and threatening the Armenian people with new atrocities.

Turkey's steps towards undermining the peace and security in our region and its military posturing against Armenia are part of the expansionist policy of the Turkish Government which is aimed at destabilizing its neighboring regions.

Only the reconsideration of such policy and the capacity to face the past by Turkey will pave a way for genuine reconciliation between the peoples in our region,' Anna Naghdalyan said.

Earlier, the Turkish Foreign Ministry said in a statement that "bringing up the Treaty of Sèvres which the Turkish nation overturned 100 years ago" is absurd.

It said "those who have the idea of achieving 'sneaky goals' should know that they will fail against Turkey's determination to maintain its survival and national existence."

# Armenian Government Extends Coronavirus State of Emergency for Another Month



YEREVAN -- The government announced on Wednesday that it will extend a state of emergency by another month to continue containing the spread of the coronavirus in Armenia.

Deputy Prime Minister Tigran Avinyan said the government will at the same time fully or partly lift its ban on public gatherings and make it easier for foreign nationals to enter the country. He also reaffirmed its plans to reopen all schools and universities in time for the start of the new academic year.

"We have already devised various models of how to reopen public education institutions depending on the epidemiological situation," Avinyan told a joint news briefing with Prime Minister Nikol Pashinyan.

"Such program-based models have also been devised for other spheres," he added in an apparent reference to libraries, museums and theaters which were also shut down in March.

The decision to again prolong the state of emergency comes despite a major decrease in coronavirus infections reported by the health authorities for the last two weeks. Pashinian said that that the epidemiological situation in Armenia is improving but remains "serious."

Pashinyan said he is worried that the falling daily number of new cases may be making Armenians more complacent about COVID-19. The authorities should therefore continue strictly enforcing social distancing and other rules aimed at containing the epidemic, he said.

# Fugutive Former Member of Armenian Parliament Extradited from Russia



YEREVAN -- Russia has extradited to Armenia a notorious Armenian businessman and former parliamentarian wanted by law-enforcement authorities in Yerevan on robbery charges.

Levon Sargsyan held a seat in the Armenian parliament from 1999-2012. He officially represented former President Serzh Sarkisian's Republican Party of Armenia (HHK) in the National Assembly from 2007-2012.

Sargsyan, 52, had been on the run since the National Security Service (NSS) accused him in October 2018 of masterminding a 2008 robbery at the Yerevan house of Armen Avetisyan, a former chief of the Armenian customs service. The NSS claimed that he hired an armed gang to break into the house and steal cash and precious items kept there because of his personal feud with Avetisyan.

Ten alleged members of the gang were arrested, tried and given lengthy prison sentences in 2011. The NSS indicted Sargsyan over the robbery six months after the 2018 "Velvet Revolution" in the country.

Sargsyan was reportedly arrested by the Russian police near Moscow last November. Armenian prosecutors said in March this year that Russian authorities have agreed to extradite the man better known to Armenians as "Alraghatsi Lyov."

According to a spokesman for Prosecutor-General Artur Davtyan, Sargsyan was flown to Yerevan late on Thursday.He was escorted by Armenian police officers and arrested at Yerevan airport, the official, Gor Abrahamyan, announced on Facebook.

Armenian media for years linked Sargsian to various scandals, violent incidents and electoral fraud mostly reported in a Yerevan district where he lived and held sway. In 2009, for example, a female journalist said that the then influential parliamentarian swore at her and had his bodyguards physically attack her at a polling station in the capital.

Sargsyan denied those claims. He avoided prosecution even after investigators effectively implicated him in a police cover-up of a murder committed in 2010. A police general was arrested and jailed for that crime in 2012.

Sargsyan is one of several former senior Armenian officials who moved to Russia after the 2018 regime change to avoid prosecution on various charges. Moscow has not extradited most of them.

The fugitives include two other wealthy and influential members of Armenia's former leadership who had earned the HHK many votes in elections. One of them, Mihran Poghosyan, is the former chief of a state body enforcing judicial acts, while the other, Ruben Hayrapetyan, used to head the Football Federation of Armenia. Both men are facing corruption charges denied by them.

# Schools in Armenia to Reopen on September 15

YEREVAN — Schools in Armenia that have remained closed due to the coronavirus pandemic since March will open their doors to students on September 15, according to Education Minister Arayik Harutiunyan.

Harutiunyan said on Monday that the issue was discussed by senior government officials coordinating the coronavirus state of emergency earlier that day.

The minister added that vocational training colleges, music and art schools will also reopen on September 15.

All establishments must comply with sanitary and hygienic rules set by the government, Harutiunyan stressed.

According to the minister, decisions on universities and a number of other educational institutions will be made within the next week.

"Authorities overseeing the state of emergency, other our colleagues and the ministry have jointly developed detailed procedures and guidelines on all issues, which will be published and shared in the coming days," Harutiunyan said in a Facebook post.

"Dear teachers, parents and students, in the coming weeks we must work together to ensure a successful start and a smooth course of the academic year, taking into account the restrictions caused by the pandemic and excluding media provocations," the minister added.

All schools, universities and other general education institutions have remained closed since the beginning of the coronavirus epidemic in March when they switched to distance learning to ensure the continuity of the educational process.

The current state of emergency in Armenia is due to end on August 12, but the government plans to extend it for another month.

The number of active coronavirus cases in Armenia continued to decrease for the last week as the fatality rate remained relatively high, according to official statistics.

The figures reported by the Ministry of Health on Tuesday show that for the first time since early June the number of active coronavirus cases in Armenia has dropped below 7,000. 160 new cases were reported and 7 more patients died from COVID-19 bringing the total number of deaths to 803.

According to the ministry, since the start of the epidemic in March 234 other patients infected with the virus died from other pre-existing diseases.

The daily number of officially registered fatalities averaged approximately 15 from July 6 through July 24 after which a downward trend began.

## Armenian Governments Sends

**Continued from page 1**

nian nationals willing to relocate to Armenia. Some opposition politicians and public figures as well as Lebanese-born citizens or residents of Armenia have urged the Armenian government to launch special Yerevan-Beirut flights for that purpose.

The Armenian government delegation headed by High Commissioner Zareh Sinanyan, along with the Republic of Armenia Ambassador to Lebanon Vahagn Atabekyan visited the Armenian Prelacy of Lebanon and met with the Primate of the Armenian Diocese of Lebanon Archbishop Shahé Panossian.

The delegation highlighted the fundraiser organized by the Hayastan All Armenia Fund specifically for the Lebanese-Armenian community. The parties discussed possible areas of assistance, in particular the reconstruction of educational institutions. Members of the Armenian delegation were present at the meeting.

Later that day Sinanyan visited the Chaghzoyan Center in Beirut and met with ARF representatives. Ambassador Atabekyan and members of the Armenian delegation attended the meeting.

High Commissioner Sinanyan also visited the office of the Lebanese branch of the Social Democrat Hunchakian Party and met with the chairman Sebouh Kalpakian, who noted how important it is that the government of Armenia and Prime Minister Pashinyan are in constant contact with the community, especially given the current situation. After which the chairman discussed the SDHP's activities in Lebanon and in Armenia.

The High Commissioner reinstated the readiness of the Armenian government to stand by the Lebanese-Armenian community. He also stated that one or two community institutions will be rebuilt by Armenia's efforts. Furthermore, Sinanyan presented the steps taken by the government for repatriation, specifically the Law on Repatriation, and the ongoing work to establish a repatriation and integration center.

Afterward, the members of the delegation took a tour of St. Gevork church and the adjacent medical center where they spoke with representatives of the Armenian community who were affected by the explosion.

Later that day, the High Commissioner paid a visit to the Tekeyan Cultural Center in Lebanon.

He also visited the AGBU office and met with members of the organization headed by Gerard Tufenkjian.

# President Armen Sarkissian:
## Treaty of Sèvres Remains an Essential Document for the Right of the Armenian People

Reputable Syrian Al-Azmenah published an exclusive interview with the President of Armenia Armen Sarkissian:

**Question: Mr. President, August 10 marks the 100th anniversary of the the Treaty of Sèvres which after WWI was signed at the Paris Peace Conference by the 13 victorious countries of the Entante on one side and the defeated Ottoman Empire on the other side. The Treaty was called to solve the tormented for decades Armenian Issue and end sufferings of the Armenians. Your opinion?**

Answer: The Treaty of Sèvres in its essence was a peace treaty and with this regard it really could have solved fundamentally one of the thorniest for our region problems – the Armenian issue.

The Treaty of Sèvres was preceded by the first conference, which took place in February-March 1920 in London where a political decision was adopted that one, unified Armenian state must be created. At the same time, the Republic of Armenia, which was de facto recognized on January 19, 1920 at the Paris Conference, was accepted as its axle and some territories of Western Armenian under the Ottoman rule should had been united with it.

By the Treaty of Sèvres, Turkey was to recognize Armenia as a free and independent state. Turkey and Armenia agreed to leave demarcation of the borders of the two countries in Erzrum, Trabzon, Van, and Bitlis provinces (vilayets) to the decision made by the United States (the arbitral award of President Woodrow Wilson which on November 22 will also mark its 100th anniversary) and accept his decision immediately and all other proposals – to provide Armenia with an access to the sea and demilitarization of all Ottoman territories adjacent to the mentioned border line.

**Question: But the Treaty of Sèvres remained on paper…**

Answer: I would rather say that the Treaty of Sèvres was not fully ratified (which means it remains unperfected and it is true that when it comes to Armenia its decisions were not implemented because the international political situation had changed but, at the same time, it was never denounced either.

The Treaty of Sèvres is a legal, interstate agreement which is de facto still in force because this document became the base for other documents, which derived from it, for determining the status of a number of Middle East countries after WWI or more recently, among them Syria (currently Syria-Lebanon) and Mesopotamia (currently Iraq-Kuwait), Palestine (currently Israel and Palestinian authority), Hejazi (currently Saudi Arabia), Egypt, Sudan, Cyprus, Morocco, Tunisia, and Libya.

Along with all this, the Treaty of Sèvres could have promoted the resolution of the Armenian Issue and unification of the Armenian nation on its historical lands.

It could have partly mitigated the losses inflicted on the Armenian people by the Genocide of 1915 and thus create conditions for the regulations of the relations between Armenia and Turkey and establishment of a lasting peace among the peoples of our region.



But in September 1920, the aggression unleashed by the Kemalists against the Republic of Armenia ended in the dissolution of the Armenian independent statehood and sovietization of Armenia.

Thus, the centuries-long struggle of the Armenian people for uniting in one state entity the separated parts of Armenia was unsuccessful.

But the Republic of Armenia and Armenian nation spread all over the world remain the inheritors and masters of our millennia-long history and civilization. No matter what was done or will be done, no matter how the undeniable facts are being denied, no matter how much the material monuments and Armenian traces on the territory of historical Armenia are being destructed, it is impossible to annihilate the memory of the Armenian people.

The Treaty of Sèvres even today remains an essential document for the right of the Armenian people to achieve a fair resolution of the Armenian issue.

**Question: There is an opinion that the Treaty of Lausanne of 1923 negated the Treaty of Sèvres.**

Answer: It is simply not true and cannot be true. The Treaty of Lausanne does not contain such an annulment; moreover, it does not contain any reference to the Treaty of Sèvres. The Republic of Armenia did not sign the Treaty of Lausanne, thus we are not a party of the Treaty of Lausanne. Thus, it implies no obligation for the Republic of Armenia. In this case, the international *Res inter alios acta principle* (a thing done between others does not harm or benefit others). The Treaty of Sèvres and the Treaty of Lausanne are two different legal documents.

**Question: Let's get back to our times. The Middle East, which is an immediate neighbor for the countries of the South Caucasus, has become a hot spot once again: armed conflicts, civil wars, fight against terrorism, territorial disputes. Border clashes took place on the Armenian-Azerbaijani line of contact in mid-July which claimed human lives and created extraordinary tension between Yerevan and Baku.**

Answer: Yes, these days when the entire world and we are fighting against our common enemy, the coronavirus pandemic, and regardless of the fact that conflicts all over the world have been halted, our neighboring country - Azerbaijan tried to take advantage of the situation and use in the negative sense this "window of opportunity" to unleash aggression on the Armenian-Azerbaijani border. Fortunately, the Armenian Armed Forces demonstrated their high battle-ready spirit and literally in two or three days were able to contain the encroachments of the opponent and thus saved our region from the blazes of large-scale clashes.

**Question: The UN, EU, OSCE, various capitals made statement on these extremely dangerous developments, urging the parties to maintain peace and dialogue. And only Ankara's tone was bellicose, in full support of Baku's actions.**

Answer: It is true that the international community responded widely to these events. It is especially true with regard to Moscow, Washington, and Paris - the Co-Chairs of the OSCE Minsk Group on the Nagorno-Karabakh conflict. But the Tavush events raised some serious concerns.

My first concern relates to a very aggressive rhetoric of our southern neighbor – Turkey. Turkey has been using with regard to Armenia a kind of language which is inappropriate in the international relations. And this is absolutely unjustified and irresponsible. Keep in mind that this is the country which was the scene of a great human tragedy, the country which 105 years ago executed a genocide against our nation. And instead of trying to establish bridges with Armenia by recognizing those black pages of its history, they resort to a language which in fact reveals their intention to carry on with what was done 105 years ago.

The second concern is Azerbaijan's attempt to create an impression that Armenia poses a threat to the international infrastructure which is going through Azerbaijan. This is total nonsense. These infrastructure has been in place for over 20 years, and Armenia has never had any intention to destroy it. My message is the following: Armenia has never been and will never be a threat for anyone because we are the successors of those who went through the Genocide and survived. We know all too well what suffering means, we know the human values. I am concerned that when the entire world is fighting together against the coronavirus pandemic, some are undertaking inhuman actions.

Another concern is about official statements coming from the government of Azerbaijan or relevant structures on Azerbaijan's threat to hit the Metsamore nuclear plant. I am a physicist and know very well the real consequences of a strike on a nuclear power plant. Thus, I take these statements as an intention to carry out a terrorist act which in international relations is defined as nuclear terrorism. God forbid it happens one day, we will have a Caucasian Chernobyl. Not only Armenia will be affected but everyone, including Azerbaijan, Turkey, Georgia, Middle East…

Regardless of what problems exist between the country and neighbors, playing with fire of nuclear issue is unacceptable.

## Istanbul's Bilgi University to Provide Tuition Discounts for Graduates of Local Armenian Schools



ISTANBUL -- Istanbul's Bilgi University will provide special tuition discounts to applicants who have graduated from the city's Armenian schools, Ermenihaber.am quotes a press release from the Universality as saying.

The Bilgi University in Istanbul has started admission, the schedule of which has been changed due to the epidemic situation. Due to this situation, applicants can apply both online and by visiting the university.

In addition to the discount provided by the Measurement, Selection and Accommodation Center, a 25% discount will be provided for graduated from Armenian colleges.

Graduates of Yesayan, Sahakyan Nunyan, Kedronakan, Pangalti and Surb Khach schools of Istanbul will benefit from the discounts.

# Lebanon: A cry for Peace and Resuscitation

BY ZAVEN KHANJIAN
AMAA Executive Director/CEO

Rival powers in the region should settle their differences on a negotiating table and not on the dinner tables of its peaceful and innocent population.

The explosion that took the lives of scores of innocent Lebanese and wounded thousands in Beirut yesterday is beyond devastating. Whether an accident or the canning deliberate act of evil hands and minds, the damage is beyond extensive and bearable. The resulting devastation and destruction caused is so widespread and immense that some describe it as unseen or unexperienced during the 15-year civil war.

A country severely suffering from political, economic, financial and health crisis has now experienced violence and physical damage to life and properties. Our hearts cry for the victims of the explosion and their families. It is my hope and prayer that this does not lead into widespread violence in a country that has for ages offered the illumination of education, freedom of movement and expression, it's natural beauty and the warmth of its people to the region and beyond. It is where my alma mater is. May the victims Rest In Peace and may the Holy Spirit console loved ones and families with its power which is beyond understanding.

Lebanon, now, more than ever, desperately needs two things.

1) Peace, First And Foremost.

Since independence in the 40s, and because of the abundant vital freedoms that are alien to the region; the atmosphere of free expression, free press, free access and the beautiful natural amenities the country is blessed with and has offered, Lebanon has been the focal point and center of all clandestine and covert operations, intrigues and conspiracies plotted in the region. This small, once majority Christian nation in the heart of the Near East, lying on the shores of the Mediterranean is tired of the rivalries and duels, strives and struggles carried out on its soil. Lebanon today, beyond its corrupt political elite, has been subjected to collective punishment through direct or indirect sanctions which have suffocated its economy, paralyzed its trade and is on its way to starve the country and its population. In a humanitarian spirit that is par with our values, it is imperative that inhumane sanctions in the region leading to and resulting in the suffering of millions be lifted immediately. Rival powers in the region should settle their differences around a negotiating table and not the dinner tables of its peaceful and innocent population. PEACE is imperative and top priority in Lebanon and beyond.

2) Rebuilding the Nation.

Struck with the curses of political, economic, financial plus COVID-19 ailments, Lebanon now needs all decent, loving and caring hands in the world to come to its rescue. Emergency assistance including, food, provision, medicine, shelter that was urgently needed yesterday are supplemented today with the simplest of needs; cover (glass or other) for the shattered structural and moral windows and doors of the country.

All destructive hands off Lebanon.

This is an appeal to all peace loving, compassionate and Christ centered hands and hearts to reach out and save Lebanon and the region beyond.

The AMAA is committed to unabashedly continue its indiscriminative emergency assistance to our communities in Lebanon injecting HOPE and revival.

Thank you for your support.

# Dr. Christina Maranci to Speak on "Ani Cathedral, its Sculpture, and its Inscriptions"

FRESNO -- Dr. Christina Maranci, Arthur H. Dadian and Ara T. Oztemel Associate Professor of Armenian Art Department of Art History at Tufts University, will give a virtual presentation on "Ani Cathedral, its Sculpture, and its Inscriptions Revisited" at 7:00PM on Thursday, September 3, 2020. The presentation is part of the Fall 2020 Lecture Series of the Armenian Studies Program and is supported by the Leon S. Peters Foundation. All Lecture Series events will take place online, and not face-to-face, through the Fall 2020 semester.

Ani Cathedral is one of the most famous monuments of Armenian architecture, and indeed, of world architecture. But there is still much to be learned about it. This lecture gives an overview of the building, the way it has been studied, and poses some new questions. Building on my recent discoveries of the frescoes in the sanctuary, Dr. Maranci will focus on the architecture, inscriptions, and sculpture of the exterior.

Dr. Christina Maranci is Chair of the Department of Art History of Tufts University. She graduated from Princeton University with a dissertation on Medieval Armenian Architecture in Historiography: Josef Strzygowski and his Legacy. She is the author of The Art of Armenia: A Critical Art History of Ancient and Medieval Armenia, with a concluding chapter on cultural heritage (New York and London: Oxford University Press, 2018) and Vigilant Powers: Three Churches of Early Medieval Armenia (Turnhout: Brepols, 2015). She has published numerous articles and essays on Armenian art.

The lecture will be on Zoom Conference, and registration is required. Use this link to register: https://bit.ly/armenianstudiesmaranci.

# Remembering Gregory E. Areshian (1949 - 2020)



On August 1, 2020, the field of Armenian archaeology lost one of its most dedicated scholars, Dr. Gregory E. Areshian. He was a member of the UCLA community since 2001 serving as the inaugural Director of the UCLA Research Program in Armenian Archaeology and Ethnography, Assistant Director of the Cotsen Institute of Archaeology, Editor of Backdirt, a visiting scholar, and an Adjunct Associate Professor in the department of Near Eastern Languages and Cultures.

Areshian's archaeological career started at an extraordinarily early age with his first archaeological site visit to Teishebiani (Karmir Blur) when he was five years old. Due to his close familial connection with archaeologist Boris Piotrovsky, Areshian began to "work" in archaeological excavations every summer at the age of 11 and directed excavations in his own trench at the age of 14. The enthusiasm of his youth carried into his studies as he became the youngest person to graduate with a PhD from the Institute of Archaeology of the National Academy of Sciences of the USSR in Leningrad (St. Petersburg) at the age of 26 in 1975.

During his long and distinguished career Areshian published more than 150 scholarly works in 5 different languages with his first peer-reviewed paper published at the age of 20. His work, spanning the Neolithic to the High Middle Ages, was mostly devoted to topics in the social sciences and the humanities, including the archaeology of the Near East, Eastern Mediterranean, southeastern Europe, and Central Asia from the Neolithic to the High Middle Ages. Other publications focus on interdisciplinary linguistic-archaeological-folkloric and art-historical reconstructions of ancient Near Eastern and Indo-European mythologies, interdisciplinary studies of social contexts of the development of ancient technologies, applications of natural sciences in archaeology, as well as theory and methodology in archaeology and human adaptive responses to changes in the natural environment. Areshian also wrote on the interactions between nomads and sedentary civilizations of Eurasia, long-term trends in history and trajectories of social complexity, visual arts and architecture of Ancient Near East, Armenian history and the ancient and medieval empires of the Near East and Eurasia. His last edited volume focusing on multidisciplinary study of empires was published by the Cotsen Press in 2013.

Areshian directed or participated in a number of archaeological field projects in Armenia, Georgia, Syria, Egypt, and Central Asia. The UCLA-IAEY excavations of the Neolithic settlement of Masis Blur was his most recent undertaking, but he is best known for his work at the world-renowned Areni-1 cave complex which produced the oldest known examples of wine making (6100 BCE) and intact leather shoe (3600 BCE).

Areshian distinguished himself as a successful institution-builder and administrator at different levels, establishing and directing the Center for Archaeological Research at Yerevan State University, serving as Deputy Director of the Institute of Archaeology and Ethnography of the Armenian National Academy of Sciences, the First Vice Director General of the Directorate of Antiquities of the Republic of Armenia, and Minister of State/Deputy Prime Minister in the government of the independent Republic of Armenia. It was his passion for Armenian archaeology, his dedication to educating future generations of scholars, and his ability to engage with people outside of academia that resulted in the establishment of the Research Program for Armenian Archaeology and Ethnography at UCLA.

He taught a variety of undergraduate and graduate courses in history, archaeology, and anthropology at the University of Chicago, University of Wisconsin, University of California at Los Angeles, University of California, Irvine, and Yerevan State University.

Since his 2016 return to living full time in Yerevan, Armenia, Areshian became a member of the National Academy of Sciences of the Republic of Armenia and regularly taught and held salons with students of the American University of Armenia where he serves as Professor of History and Archaeology in the College of the Humanities and Social Sciences.

His personal archive has made permanent contributions to the Oriental Institute at the University of Chicago at the Gregory E. Areshian Reading Room, as the Founding Director of the UCLA Research Program in Armenian Archaeology and Ethnography (Research Center for Armenian Archaeology), and as a co-founder of ARAMAZD, the Armenian Journal of Near Eastern Studies.

Gregory will be sorely missed by his friends, colleagues, students, and most of all, of course, by his family. He is survived by his sons Alex and Tigran.

**Kristine Martirosyan-Olshansky**
**Emily Uyeda Kantrim**

# Սեւրի Դաշնագրին 100րդ Տարեդարձին Առթիւ

Map showing the boundaries of Armenia as awarded by PRESIDENT WILSON.




ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

*Օգոստոս 10, 1920 պատմական նշանակալի թուական մըն է հայ ժողովուրդին համար: Այդ օրը Ֆրանսայի Սեւր քաղաքին մէջ պետական հանդիսաւոր շուքով ստորագրուեցաւ միջազգային դաշնագիր մը Ա. Աշխարհամարտին պարտեալ Օսմանեան Կայսրութեան եւ յաղթական դաշնակիցներու միջեւ, ինչպէս նաեւ տեղի ունեցաւ նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան միջազգային իրաւական ճանաչումը:*

*Սեւրի Դաշնագրով փաստօրէն կ'ընդամահատուէր Օսմանեան Կայսրութիւնը եւ յաղթական դաշնակիցները իրենց միջեւ կը բաժնէին կայսրութեան հողամասերուն մեծ մասը, բաժին հանելով նաեւ փոքրամասնութիւն եղող ազատագրուած ազգերուն:*

*Սեւրի վեհաժողովին հրաւիրուած էր նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը: Նորանկախ Հայաստանի պատուիրակութիւնը կը գլխաւորէր Աւետիս Ահարոնեան, իսկ Արեւմտահայութեան պատուիրակութեան նախագահն էր Պօղոս Նուպար Փաշա: Դաշնագիրը ստորագրեց յանուն Հայաստանի Հանրապետութեան Աւետիս Ահարոնեան: Իսկ Օսմանեան Կայսրութեան կողմէ ստորագրեցին չորս անդամներ, որոնք լիազօրուած էին Սուլթան Մէհմէտ 6-րդի կողմէ:*

*Սեւրի Դաշնագիրը կը բաղկանար 110 մեծադիր էջերէ, 13 անջատ գլուխներէ եւ 433 յօդուածներէ: Դաշինքի 88-րդ յօդուածէն մինչեւ 92-րդը Հայաստանի առընչուող հարցերու հետ աղերս ունէր: Յօդուած 88 կը սահմանէր. «Թուրքիա, համաձայն Դաշնակից Պետութիւններու կողմէ առնուած քայլերուն, կը ճանչնայ Հայաստանը որպէս ազատ եւ անկախ պետութիւն»:*

*Յօդուած 89 կը սահմանէր. «Թուրքիան եւ Հայաստանը, ինչպէս միւս դաշնագիր բարձր կողմերը կը համաձայնին Ամերիկայի Միացեալ Նահանգներու (ԱՄՆ)-ի նախագահի վճռին յանձնել սահմանի որոշումը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ, Էրզրումի, Վանի, Տրապիզոնի եւ Պիթլիսի վիլայեթներուն մէջ եւ ընդունիլ անոր վճիռը, այլեւ բոլոր այն միջոցները, որ կրնան հրահանգել դէպի ծով ելք ունենալու եւ յիշեալ սահմանին կից գտնուող Օսմանեան որեւէ հողի զինաթափման մասին:*

*Այստեղ անհրաժեշտ է համառօտ ակնարկ մը նետել այն կարեւոր դերակատարութեան համար որ ԱՄՆ-ի Նախագահ Վուտրօ Ուիլսըն ունեցաւ Հայկական հարցին նկատմամբ: Հայաստանի անկախութեան հռչակումէն շուրջ մէկուկէս տարի յետոյ, Յունուար 19, 1920-ին Դաշնակից Ուժերու Գերագոյն Խորհուրդը պաշտօնապէս ճանչցաւ Հայաստանի Հանրապետութիւնը՝ պայմանաւ որ հետագային անոր սահմանները յստակացուէին: Ապրիլ 26, 1920-ին նոյն Խորհուրդը Սան Ռեմոյի Համաժողովի ընթացքին որոշեց դիմել ԱՄՆ-ի Նախագահ Ուիլսընին երկու խնդրանքով.-*

*1) ստանձնել Հայաստանի հոգատարութիւնը (mandate),*

*2) իրաւարար վճիռով որոշել Հայաստանի եւ Թուրքիայի սահմանը:*

*Դժբախտաբար, հոգատարութեան առաջարկը մերժուեցաւ ԱՄՆ-ի Ծերակուտական Տունէն (senate): Բայց, Մայիս 17, 1920-ին Նախագահ Ուիլսըն ընդունեց Խորհուրդին երկրորդ խնդրանքը: Յուլիս ամսուն 1920-ին Ուիլսընի հրահանգով կազմուեցաւ «Հայաստանի եւ Թուրքիայի Իրաւարարութեան Յանձնախումբը», որ անմիջապէս գործի լծուեցաւ:*

*Սեւրի վեհաժողովը պաշտօնապէս հաստատեց Նախագահ Ուիլսընի իրաւարարի պաշտօնը եւ յանձնառու եղաւ անոր առաջարկած սահմանային վճիռին: Յանձնախումբը իր գործը աւարտելէն ետք, Նոյեմբեր 22, 1920-ին Նախագահ Ուիլսըն ստորագրեց իր իրաւարարի վճիռը եւ անոր կցուած 241 էջերէ բաղկացած փաստաթուղթերու փաթեթը: Ըստ պատմաբան Րիչըրտ Յովհաննէսեանի, Ուիլսընի գծած քարտէսին համաձայն Հայաստան պիտի ունենար 155,000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն, որ պիտի երկարէր Բաղեշէն դէպի հիւսիս որ կը հասնէր Կարին եւ Տրապիզոն: Իր մէջը պիտի պարփակէր ամբողջ Գանձակի եւ Քազախի նահանգները, ինչպէս նաեւ Վասպուրականի, Տարօնի եւ Սիւնիկի շրջանները:*

*Դժբախտաբար, դեռ Սեւրի Դաշնագրին մելանը չի չորցած՝ աշխարհի քաղաքական կացութիւնը բոլորովին փոխուեցաւ: Ռուսիոյ մէջ համայնավարութիւնը զօրացաւ եւ Սովետական կարգեր չ'ընդունեցին Սեւրի որոշումները: Մինչ այդ Քեմալական շարժումը զօրացաւ Թուրքիոյ մէջ եւ Թուրք բանակը կարգ մը յաղթանակներ տարաւ յոյներու, հայերու եւ այլ փոքրամասնութեանց վրայ: Միւս կողմէ, դաշնակիցներն ալ սկսան իրենց շահախնդրական աշխատանքները յառաջ քշել: Իրենց ներքին մրցակցութենէն առաւելագոյն չափով օգտուեցաւ թրքական ազգայնական շարժումը: Քեմալականները Խորհրդային Ռուսիոյ հետ համաձայնութիւն կնքեցին եւ բացարձակապէս մերժեցին Սեւրի Դաշնագիրը: Տարաբախտօրէն, դաշնակիցները մոռցան իրենց խոստումները եւ քանի մը տարի ետք 1922-ին Լոզանի տխրահռչակ Դաշինքով անտեսեցին հայոց իրաւունքները:*

*Սեւրի Դաշնագիրը պատմական վաւերագիր մըն է, որ հայ ժողովուրդը կը դարձնէ իրաւատէր եւ պահանջատէր: Սեւրի վեհաժողովէն 100 տարի յետոյ, Դաշնագիրը կը մնայ պարտադիր փաստաթուղթ մը (binding document): Հայ Դատի արդար լուծման համար անհրաժեշտ է զայն վերակենդանացնել: Անհրաժեշտ է որ ողջ հայութիւնը պահանջատէր դառնայ Սեւրի Դաշնագրով միջազգային ճանաչումի արժանացած Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ արդար սահմանագծումին:*

## Միացեալ Յայտարարութիւն

Շարունակուած էջ 1-էն

*իսկ վերջին օրերուն սաստկացուցած է Հայաստան-Արցախի եւ ընդհանրապէս հայութեան դէմ իր հռետորաբանութիւնը եւ ռազմական հաւանական ոտնձգութիւններու նախապատրաստութիւնը:*

*Սեւրի դաշնագիրը վաւերական միջազգային պայմանագիր է, թէեւ չէ վաւերացուած բոլոր ստորագիր կողմերուն կողմէ, բայց նաեւ իրաւականօրէն չէ փոխարինուած այլ միջազգային փաստաթուղթով: Առնուազն Հայ Դատի՝ Հայաստանի Հանրապետութեան եւ հայ ազգի իրաւունքներու տեսանկիւնէն կը շարունակէ մնալ միջազգային օրէնքի վրայ հիմնուած պարտամուրհակ:*

*Առաւել՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Ուտռօ Ուիլսընի 22 Նոյեմբեր 1920-ին հրապարակուած իրաւարար վճիռը կը շարունակէ մնալ Հայաստան-Թուրքիա իրաւական սահմանը գծող միջազգային միակ փաստաթուղթը:*

*Սեւրի դաշնագրին ստորագրութենէն 100 տարի ետք, Թուրքիոյ Հանրապետութիւնը կը շարունակէ թշնամական տրամադրութիւն ցուցաբերել Հայաստանի Հանրապետութեան եւ ընդհանրապէս հայութեան հանդէպ: Մինչեւ Սեւրի հաշտութեան պայմանագրին մէջ տեղ գտած միջազգային իրաւունքի նախադրեալներ կազմող կէտերուն վրայ հիմնուած Թուրքիոյ պարտաւորութիւններուն ամբողջական կատարումը, Թուրքիան պարտաւոր է՝*

*ա) Դադրեցնել Հայաստանի Հանրապետութեան 27-ամեայ անօրինական ցամաքային շրջափակումը.*

*բ) Դադրեցնել յատկապէս վերջին շրջանին Հայաստանի դէմ ուղղուած իր ռազմատենչ քայլերը.*

*գ) Դադրեցնել իր ընդհանրապէս հակահայ քաղաքականութիւնը Թուրքիայէն ներս - ներառեալ մեր պատմական ու բռնագրաւուած հողերուն վրայ - թէ դուրս - Ցեղասպանութեան հետեւանքով ձեւաւորուած հայկական գաղութներուն դէմ:*

*Համոզուած ենք, որ պիտի գայ օրը, երբ որպէս Հայկական Ցեղասպանութեան հեղինակ եւ պատասխանատու, Թուրքիան պիտի կրէ իր պատասխանատուութիւնը եւ պիտի հատուցէ հայ ժողովուրդին բոլոր կորուստները:*

*Կը յայտարարենք, որ ինչպէս անցեալին, ապագային եւս մենք - հայկական քաղաքական այլ ուժերու եւ յատկապէս Հայաստանի Հանրապետութեան հետ գործակցաբար - պիտի շարունակենք մեր պայքարը մինչեւ պատմական արդարութեան վերականգնումը:*

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան
Կեդրոնական Վարչութիւն
Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրո
Ռամկավար Ազատական Կուսակցութեան
Կեդրոնական Վարչութիւն
10 Օգոստոս 2020



# Սեւրի Դաշնագիրին Հմայքը... Եւ Իրապաշտութիւնը

ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ



*100 տարի առաջ, Փարիզի յարակից Սեւրի մէջ, օսմանեան պետութեան գլխահակ ներկայացուցիչները կը ստորագրէին դաշնագիր մը, որ յաչս աշխարհին պաշտօնապէս կը ծանուցէր եւ կը հաստատէր օսմանցիներու անփառունակ պարտութիւնը՝ Ա. Աշխարհամարտի աւարտին: Անոնք կը յայտարարէին տարածքային հսկայական զիջումներու մասին, քանզի ջախջախիչ հարուածով տապանաքար դրուած էր երբեմնի հզօր Օսմանեան Կայսրութեան փլատակներուն վրայ:*

*Դաշնագիրին ստորագրման արարողութեան նոյն դահլիճին մէջ, նոյն դաշնագիրով, հայեր եւ յոյներ բերկրալիր ոգեւորութեամբ կը քաղէին պտուղները իրենց դարաւոր ոգորումներուն եւ երազներուն. հայեր՝ Ուիլսընեան քարտէզին ձեռքբերումով, յոյներ՝ իրենց պատմական կարգ մը տարածքներուն վերստացումով: Մինչ, քիւրտեր եւս, իրենց հերթին, առաջին քայլերը կը նետէին անկախութեան ճանապարհին:*

*Կարելի է պատկերացնել, թէ ինչպիսի՜ ծաւալուն, բարդ եւ բազմաբովանդակ դաշնագիր մը կրնար ըլլալ այդ, որովհետեւ 13 պետութիւններ մէկ կողմէ եւ Թուրքիա միւս կողմէ կը ճշդէին պարտեալ կողմին ճակատագիրը, սահմաններն ու պարտաւորութիւնները: Չորս մեծ պետութիւնները (Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա եւ Ճափոն) բնականաբար կը հետապնդէին իրենց շահերը եւ առաւելագոյնս օգտուելու հնարաւորութիւնները: Միւս իննը՝ Հայաստան, Լեհաստան, Պելճիքա, Յունաստան, Հիճազ, Փորթուկալ, Ռումանիա, Սերպիա եւ Չեխոսլովաքիա կը հետեւէին անձկութեամբ:*

*Դաշնագիրը կը բաղկանար 13 գլուխներէ: Ունէր 433 յօդուածներ: Երրորդ գլուխին յօդուածները՝ 36-139 կը վերաբերէին տարածքային խնդիրներու՝ Կ. Պոլիս, նեղուցներ, Քիւրտիստան, Իզմիր, Յունաստան, Հիճազ, Հայաստան, Սուրիա, Պաղեստին, Միջագետք, Եգիպտոս, Սուտան, Կիպրոս, Մարոք, Թունուզ, Լիպիա: Ի հարկէ, կարելի չէ խորանալ այս բոլորին մէջ, սոյն հպանցիկ ակնարկով: Մեզի կը շահագրգռեն Քիւրտիստանին (Յօդ. 62-64), Իզմիրի եւ Յունաստանին (65-87) եւ Հայաստանին (88-93) վերաբերող մասերը:*

*Սեւրի դաշնագիրին ստորագրումէն առաջ, անոր պայմաններուն շուրջ բանակցութեանց եւ սակարկութեանց երկար եւ սպառիչ ժողովներուն մասնակցեցան հայկական երկու պատուիրակութիւններ.- Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ Աւետիս Ահարոնեանի գլխաւորութեամբ, եւ Ազգային Պատուիրակութեան՝ Պօղոս Նուպար փաշայի գլխաւորութեամբ: Սոյն երկու պատուիրակութիւնները երբեմն կ'ունենային միացեալ նիստեր եւ յաճախ՝ դէմ առ դէմ բանակցութիւններ... զարմացնելով օտար շրջանակները:*

*Սեւրի դաշնագիրէն ծնաւ Հայաստանի այն քարտէզը, որ ծանօթ է Ուիլսընեան անունով, քանզի անոր պատրաստութիւնը վստահուած էր ԱՄՆ-ի նախագահ Ուտրօ Ուիլսընի: Բաւականին հմայիչ եւ պատկառելի տարածու թեամբ սոյն խոստացուած Հայաստանը, ԱՄՆ-ի նախագահին «բարեսրտութեամբ» պիտի ունենար ելք դէպի Սեւ ծով, հետեւաբար Պոնտոսի երկար մերձափնեայ շրջանը կը միանար Հայաստանի, հակառակ անոր որ Տրապիզոնն ու յարակից տարածքները երբեւէ Հայաստանին մաս չէին կազմած: Այս մեծ տարածքին Հայաստանին կցումը անտեղիօրէն գրգռեց յոյները, որոշակի լարուածութիւն ստեղծեց հայ-յոյն բարեկամական յարաբերութեանց միջեւ, որովհետեւ անցեալին Պոնտոսի մէջ եղած է յունական ուժեղ թագաւորութիւն մը:*

*Հայկական կողմէն, Սեւրի դաշնագիրի ստորագրումին պատիւը տրուեցաւ գրող, Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ Աւետիս Ահարոնեանին, որ հետագային պիտի գրէր. «Կեանքիս ամենաերջանիկ օրն է այս: Երսուն տարուան պայքարս, բողոքս, տառապանքս ու յոյսերս պսակուեցին փառաւոր յաջողութեամբ»: Օգտագործուած գրիչին շուրջն ալ տարինե՛ր մարդիկ ունեցան խորհրդաւոր երկիւղածութիւն մը: Զինք առաջինը յուզաթաթաւօրէն ողջունեց յոյն պատուիրակ Էլեֆթերիոս Վենիզելոսը:*

*Բնականաբար, աննախադէպ խանդավառութիւն էր հայկական շրջանակներու մօտ: Թէպէտ ԱՄՆ-ի նախագահը տրամադիր էր ստանձնելու Հայաստանի հովանաւորութիւնը, սակայն ԱՄՆ-ի Ծերակոյտը մերժեց այդ առաջարկը: Ծերակուտականներէն մին հարց կու տար. «Քարիւղ կա՞յ Հայաստանի մէջ»...:*

*Ոգեւորութեամբ գինովցած հայութեան մէջէն ո՞վ հարց տուաւ, որ այդքան ընդարձակածաւալ տարածք ո՞վքեր պիտի պաշտպանեն, ո՞վքեր պիտի պահպանեն եւ ո՞վքեր պիտի բնակին հոն, երբ եղեռնակոծ հայութիւնը հողմացրիւ դարձած էր հոս ու հոն: Ինչքա՜ն հզօր բանակի կարիքը կար, բնակչութեան եւ մարդուժի հրամայականը կար տէր կանգնելու համար գէթ քարտէզով տրուած այդ երազային Հայաստանին:*

*Իրաւացիօրէն հայ կաթողիկէ մտաւորական, գիրքերու հեղինակ ու տեսաբան Հայր Լեւոն Զէքիեան կը գրէ. «Ուստի, Սեւրի դաշնագիրը դեռ սկիզբէն ձախող համաձայնութիւն մը չէ՞ր, ուր մարդիկ կը դնէին այնպիսի սահմաններ, որոնք կիրառելի չէին, կամ պարզապէս՝ որպէսզի չգործադրուէին» («Ինքնութեան Խճանկար», Պէյրութ, 2001, էջ 26):*

*Իսկ հրապարակագիր, գործիչ Յովհաննէս Պօղոսեան կը դիտարկէ. «Սեւրի դաշնագիրը մնաց թուղթի վրայ, բայց անոր հետեւանքը եղաւ այն՝ որ Հայաստանի վրայ հրաւիրեց թուրք ազգայնականներու զայրոյթը, եւ քանի մը ամիս յետոյ Հայաստան կրեց յարձակում մը, որ անոր գոյութիւնն անգամ պիտի սպառնար վտանգել» («Յուշամատեան Մեծ Եղեռնի», Պէյրութ, 1987, էջ 989):*

*Մինչ վարդագոյն երազներով կ'օրօրուէինք Սեւրի մէջ, անդին, գետնի վրայ եւ Հայաստանի շուրջ, տրամագծօրէն հակառակ կը թաւալէին իրադարձութիւնները:*

*Արդարեւ, եթէ պաշտօնական Թուրքիան՝ Պոլիս մայրաքաղաքով, Սեւրի մէջ կը խոնարհէր յաղթական ուժերուն դիմաց, անդին, Թուրքիոյ իրողական տէրը Անգարա կայկայած Մուսթաֆա Քեմալն էր, որուն զօրքերը Քեազիմ Քարապէքիրի հրամանատարութեամբ, Սեպտեմբերին կ'անցնին յարձակման, Հոկտեմբերին կը գրաւեն Կարսի մարզը եւ Նոյեմբերին կը յայտնուին Ալեքսանդրապոլի մէջ՝ սպառնալով խուժել Երեւան: Հակառակ անոր որ 29 Նոյեմբերին, Հայաստանի մէջ տեղի ունեցած էր իշխանափոխութիւն, Հայաստանի պաշտօնազուրկ կառավարութիւնը, 2 Դեկտեմբերին, Ալեքսանդր Խատիսեանի ստորագրութեամբ կը կնքէ Ալեքսանդրապոլի դաշնագիրը, որուն 3-րդ յօդուածը կը սկսի այսպէս. «Հայերը հրաժարւում են Սեւրի դաշնագրից»...: Փաստօրէն, 10 Օգոստոսին կնքուած Սեւրի դաշնագիրը կ'անցնէր պատմութեան՝ նոյնինքն զայն ստորագրած կառավարութեան կողմէ: Նոյն իշխանութեան անդամներ, գործակիցներ ու կուսակիցներ (Ա. Ահարոնեան եւ Ա. Խատիսեան) Սեւրի հմայքէն տարուած, անգիտացած էին քաղաքականութեան տարրական դասը՝ իրապաշտութիւնը:*

*Հնչակեան ղեկավար, հասարակական գործիչ Յարութիւն Կուժունի կը գրէ այսպէս. «Ատենին, երբ կարելի էր ներկայ Հայաստանին կրկինը ունենալ եւ պահել, մենք կառչած մնացինք «ուիլսընեան Հայաստանի» երազին եւ կորսնցուցինք Խորհրդային Միութեան միջնորդութեամբ ըլլալիք սահմանային սրբագրութեան առիթը: Այս տեսկէտէն մեր կուսակցութիւնը «ուիլսընեան Հայաստան»ը աղէ՛տ մը կը նկատէ մեր ժողովուրդին համար» («Լիբանանահայութեան Ղեկավարի Տիպարներէն՝ Յարութիւն Կուժունի», Պէյրութ, 2002, էջ 204):*

*«Արարատ» օրաթերթի երկարամեայ խմբագրապետ, հասարակական գործիչ Ժիրայր Նայիրի «Քարտէզը՝ Հայուն, Հողը՝ Թուրքին...» ենթախորագիրին տակ կը գրէ. «Թուրքիան պարտութեան մատնող «Դաշնակից»ները ոչ միայն անտարբեր մնացին Քեմալի սպառնալիքներուն առջեւ, երբ բաւարար ուժ ունէին տեղւոյն վրայ «աւազակապետ»ը կաշկանդելով զինք արգելափակելու, այլ՝ օգնեցին անոր բոլոր միջոցներով, քա-*

Շար.ը էջ 19




# Հայ Եկեղեցւոյ Շարականները Հազարամեայ Ընթացք Ինքնատիպ Հեղինակութիւն

Հայ Եկեղեցւոյ շարականները ինքնատիպ են եւ ոչ մէկ պարագայի թարգմանութիւն հնագոյն լեզուներէ: Անոնք հազար տարիներու Հայ Եկեղեցւոյ Հայրերու կողմէ գրուած հոգեւոր երգեր են Աստուածաշունչի վրայ հիմնուած՝ կրօնական եւ ազգային դէպքերու յատուկ արծագանքներով:

ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա ՔՀՆՅ
ԱՐԶՈՒՄԱՆԵԱ

## Հազարամեայ Ընթացք

*Հայ Եկեղեցւոյ շարականները յօրինուած են ինքնատիպ ոճով, առանց որեւէ թարգմանութեան ու բացառապէս Սուրբգրային հիմունքով եւ աստուածաբանական ուղղափառ դաւանանքով: Շարակնոցին սկիզբը աւանդաբար նշուած են հեղինակներու անունները, մասամբ հաւանական ճշգրտութեամբ, եւ մեծ մասամբ ստոյգ՝ իրենց բուն անուններով յայտնի: Անոնցմէ կարեւորագոյններն են Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոս, (7-դար), եւ Ներսէս Շնորհալի Հայրապետ, (12-դար), որոնց առանձինն պիտի անդրադառնամ: Հազարամեայ ընթացքը կ'նդգրկէ 5-15 դարերը: Կան անշուշտ հնագոյն թարգմանու-թիւններ որոնք շարականներուն չեն վերաբերիր, այլ կը վերաբերին Հայ Եկեղեցւոյ կազմաւորման համար անհրաժեշտ եղող աստուածաբանական եւ ծիսական բնագիրներուն:*



## Աստուածաշունչ Մատեանը՝ Հիմք Շարականներուն

*Հայ Եկեղեցւոյ շարականները մեծագոյն մասամբ կը ցոլացնեն Սուրբ Գիրքի Հին եւ Նոր Կտակարաններու տուեալները՝ յատկապէս Նոր Կտակարանին: Ինքնատիպ եւ հոգեշունչ ոճով մեր Հայրերը գրած ու երգած են Մարգարէաշունչ պատգամները հարեւանցի կերպով, եւ մնայուն կնիք դրած Փրկչին Յիսուսի Քրիստոսի ծննդեան, առաքելութեան, հրաշագործութեանց, առակներու եւ Իր կեանքի բոլոր երեսներուն վրայ, միշտ հաւատարիմ մնալով համապատասխան աստուածաբանական ուղղափառ դաւանանքին: Որպէս կենսական դաւանանք Շարականներուն մէջ յատուկ բաժին տրամադրուած է Սուրբ Երրորդութեան դաւանանքին, Աստուածութեան Երեք Դէմքերուն՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի միաստուածութեան:*

*Առանձնապէս Սուրբ Ծննդեան, Մկրտութեան, Լերան Քարոզին, հրաշագործութեանց, առակներու, մինչեւ Զարչարանաց Շաբաթն ու Խաչելութիւնը, Թաղումն ու Հրաշալի Յարութիւնը ներգրաւուած են մեր շարականներուն մէջ հրաշալի եւ աղօթանուէր երաժշտութեամբ: Ապա Գործք Առաքելոցի ներշնչմամբ՝ Համբարձումն ու Հոգեգալուստը այնքան գեղեցկահիւս երաժշտութեամբ ինչպէս Համբարձաւ Տէրն մեր յերկինս, Առաքելոյ Աղաւնոյ եւ Կենդանարար Աստուած շարականները: Անոնց կողքին կան բազմաթիւ շարականներ որոնք միայն յատուկ են Աստուածամօր Սուրբ Կոյսին «Մեծացուսցէ» անուան տակ, ներփողելով դերն ու սրբութեանց գլուխն եղող Կոյսը՝ Ս. Ծնունդէն մինչեւ Խաչելութիւն, եւ ապա Աստուածամօր Վերափոխումը:*

*Շարականներուն մէջ յայտնի են նաեւ յատուկ բաժիններով՝ Խաչին ու Սուրբ Եկեղեցւոյ նուիրուած բազմաթիւ յիշարժան հոգեւոր երգերը, ուր միաձուլուած կ' երգուին Սուրբ Խաչն ու Եկեղեցին, Փրկիչն Քրիստոս՝ Երկնքի Թագաւորը փողերգելով երկրի վրայ: Յետագայ շարականագիր հեղինակներ չեն կրկնած, եւ սակայն բազմիցս նորոգելով նոյն եւ նոր նիւթերը երգած են հարստացնելով մեր Շարակնոցը Հինգ Տաղաւարներու յատուկ խմբաւորումներով՝ Ս. Ծննդեան, Ս. Յարութեան, Վարդավառի, Վերափոխման եւ Խաչի Վերացման՝ ըստ դէպքերու տարեկան հաւանական եղանակներուն: Անոնց առընթեր շարականներու կարեւոր խումբ մը լիովին նուիրուած են ապաշխարութեան՝ գլխաւորութեամբ Քառասնօրեայ Մեծ Պահքին ուր հոգեզմայլ այդ հոգեւոր երգերը լիապէս հոգեկան երջանկութիւն կը բերեն հաւատացեալներուն, նոյնիսկ եթէ չհասկնան բարդ գրաբար լեզուով գրուածները, հիանալով անպայման երգեցողութեան վրայ:*

## Եկեղեցւոյ Սուրբերուն Յատուկ

*Անկասկած Ընդհանրական Եկեղեցւոյ եւ նաեւ Հայ Եկեղեցւոյ Սուրբերուն ընծայուած շարականները ընդգրկուած են մեր Շարակնոցին մէջ մեծ ոգեւորութեամբ, յարգանքով եւ ամենասուրբ տողերով՝ սկսեալ Աստուածաշունչի Սուրբերէն, յատկապէս Նոր Կտակարանի Աւետարանիչներէն մինչեւ Հայ Եկեղեցւոյ յատուկ Սուրբերը: Բոլորն ալ անխտիր «բարեխօսութեան» խնդրանքով: Աղօթողն ու երգողը Փրկչին մօտ բարեխօսութիւն կը հայցէ տուեալ Սուրբերէն, գլխաւորագոյնը ըլլալով Ս. Կոյս Մարիամ Աստուածածինը, որմէ միշտ կ'աղերսենք բարեխօսելու իր Միածին Որդւոյն մօտ մեր բոլոր կարիքներուն եւ մեղքերուն նկատմամբ: Սուրբ Կոյսէն անմիջապէս ետք երկու Սուրբեր միշտ նախապատիւ համարուած են եւ երեքն ի մի ունին իրենց յատուկ տեղը մեր Շարակնոցին մէջ՝ Ս. Յովհաննէս Կարապետն ու Ս. Ստեփաննոս Նախավկան:*

*Հայ Եկեղեցւոյ ազգային նկարագիրը յայտնաբերուած է նաեւ շարք մը յայտնի շարականներուն մէջ՝ դէպքերուն առընթեր համապատասխան Սուրբերու յիշատակութեամբ, սկսեալ Միածնաէջ Խորանէն, էջմիածինն ի Հօրէ, մինչեւ Գիրերու Գիւտը՝ Որք զարդարեցին տնօրինաբար, Աստուածաշունչ Մատեանի Թարգմանութենէն մինչեւ Վարդանանց Հերոսամարտն՝ Նորահրաշ Պսակաւոր, ու Միջնադարեան հոգեւոր մեծ կրթարանները Հայաստանի տարածքին՝ Հրաշափառ Աստուած զմայլելի շարականով: Եկեղեցական Ժողովներու քննարկմամբ նոյնիսկ մեր շարականները նուիրագործուած են գիտնական երաժիշտներու դասաւորումներով, ինչպէս Ներսէս Գ Իշխանցի Կաթողիկոսի նախագահութեամբ Դուինի մէկ ժողովին ուր Բարսեղ Ճոն վարդապետը հաստատած է շարականներու ութ ձայները: Իւրաքանչիւր շարական պէտք է երգուի ութ ձայներէն մէկուն համաձայն, քանի որ երաժշտութիւնը ձեւաւորուած է երգին շարադրութեան եւ իմաստին վրայ:*

## «Այսօր» Բառին Հարիւրաւոր Ներկայութիւնը

*Այնքան ակնառու է այս շատ պարզ «այսօր» բառին հարիւրներով օգտագործումը մեր բոլոր շարականներուն մէջ, յատկապէս անոնց սկիզբը եւ կամ ներքին կառուցուածքին մէջ: Առանց կասկածի կարելի է ըսել որ միակ բառն է այնքան կրկնուած իր համահունչ եւ ոչ ձանձրանալի ներկայութեամբը: Անմիջապէս ակներեւ կ'ըլլայ անցեալի դէպքերու վերյառնումն ու անոնց ներկայի փոխանցումը մեր առօրեայ կեանքին հետ միախառնուելու հրաշալի կերպով: «Այսօր ծնաւ», «այսօր յարեաւ», «Այսօր անճառ», եւ մնացեալները բոլորն ի մի Տիրոջ վերաբերեալ դէպքերուն եւ դէմքերուն յստակութեամբ զանոնք անցեալին քամուած չեն թողուր որպէս սոսկ յիշատակ, այլ որպէս ապրում եւ կենսատու մեզի հաւատացեալներուս՝ այսօր եւ վաղը: Աւետարանն ամբողջ մեր առօրեայ կեանքին ապրուած մասը կը դարձնէ «այսօր» բառը:*

## Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոս

*Պատմութեան մէջ առաջին հաստատ հեղինակն է Կոմիտաս Կաթողիկոս իր յայտնի «Անձինք նուիրեալք» գեղահիւս շարականով՝ գրուած մեր առաջին պատմիչներէն Ագաթանգեղոսի տուեալներուն համաձայն: Հայերէն այբուբենի բոլոր գիրերու սկզնատառերով երկարապատում եւ սակայն հոգելից այս շարականը հնագոյն վաւերական շարականը կը հանդիսանայ որպէս նմոյշ յաջորդող սերունդներու շարականագիրներուն:*

*«Անձինք»ը նուիրուած է առաջին դարերու նահատակ ազգութեամբ հռոմէացի Հռիփսիմեանց ու Գայեանեանց կոյսերուն որոնք փախուստ տալով Հռոմի Դիոկղետիանոս կայսեր հալածանքներէն որպէս նորադարձ քրիստոնեաներ հասած էին Վաղարշապատ ուր սակայն կայսեր հրահանգով նահատակուած էին Տրդատ Գ Արշակունի հայոց թագաւորին օրով: Կոմիտաս Կաթողիկոս նաեւ կառուցանել տուած էր Վաղարշապատի գեղակերտ Ս. Հռիփսիմեանց Տաճարը որուն շուրջ թաղուած էին նահատակ կոյսերը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ որ Խոր Վիրապէն դուրս գալով իր առաջին պարտքը համարեց կատարել կոյսերուն խմբական թաղումը: Աւելի ուշ Եզր Փառաժնակերտցի Կաթողիկոսին օրով կառուցուեցաւ նաեւ Ս. Գայանէի եկեղեցին, երկուքը ցարդ Հայ Եկեղեցւոյ հնագոյն կառոյցներն ըլլալով հայոց պատմութեան ամենէն վաւերական հաստատութիւնները կը նկատուին:*



## Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետ

*Հայ Եկեղեցւոյ Շարակնոցին ճարտարապետը Ս. Ներսէս Դ Կլայեցի Շնորհալի Հայրապետը եղաւ իր բազմաթիւ շարականներու բարեզարդումով՝ Աւետարանական եւ աստուածաբանական գիտութեանց իր մեծագոյն տաղանդին շնորհիւ: Որպէս նմոյշ այստեղ կը փափաքիմ միայն յիշել «Տարածեալ ձեռք ընդ ձեռաց», որ կը նշանակէ «Տարածուած ձեռքերուն փոխարէն» խաչին վրայ, եւ ապա «ոտք ընդ ոտից ընթանալեաց» ուրկէ Հայրապետը կը հրաւիրէ հաւատացեալները ժառանգելու խաչելեալ Տիրոջ խաչին քամուած ձեռներուն եւ ոտներուն տէր դառնալ ու անոնց փոխարէն շարունակել Իր աստուածային առաքելութիւնը երկրի վրայ: Նկատի ունենալ որ վեցեակ «Տարածեալ»-ին մէջ «ընդ» բառը գործածուած է որպէս «փոխարէն», ինչպէս կ'եզրափակէ «կեանք ընդ մահու փոխարկելով» բացատրութեան մէջ:*

*Շարականը կ'աւարտի Խաչեցnaեալ Քրիստոսի կողէն բխած «արեան եւ Ջուրին» խորհուրդով որոնց վրայ կ'ըսէ Սուրբ Ներսէս Շնորհալի Եկեղեցին հիմնուեցաւ, «Ջուրով մաքրուելով եւ արեամբ հաղորդուելով», հաստատելով միանգամայն երկու Սրբազան Խորհուրդները Եկեղեցւոյ՝ Մկրտութեան եւ Սուրբ Հաղորդութեան:*

*Շարականներու դարերու ներկայութիւնը կենսունակ պահած է Հայ Եկեղեցին, եթէ միայն անոնց բովանդակած իմաստն ու նշանակութիւնը գիտնալով երգէն մեր հոգեւորական եւ աշխարհական հաւատացեալները: Ընդհանրապէս միայն երգելու սիրոյն երբ կ'երգենք մենք զմեզ միայն կ'ոգեւորենք: Հայ եկեղեցւոյ շարականը միայն արտաքին զարդ մը չէ, այլ ինչպէս նկատեցինք արժէքաւոր աւետարանական եւ ուղղափառ դաւանանքի անսպառ աղբիւր մը, եթէ հոգեւոր երգերու ետին տեսնենք ու անոնց խորիմաստ նշանակութիւնը:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին

# «Ես Ո՞վ Եմ»

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԵՊԷՃԵԱՆ

Երեքշաբթի, Օգոստոս 4, 2020:

Պէյրութի նաւահանգիստի ահաւոր պայթումը ցնցեց քաղաքը: Եթէ Քուէյթ նստած հեռատեսիլի եւ ընկերային տեղեկատուութեան ցանցերու միջոցաւ սկսայ հետեւիլ, բայց առանց կարենալ արձունքներս զսպելու: Ինչպէս որ քուէյթեան տեղական թերթերէն մին սահմանեց Պէյրութի այս պայթում-աղէտը որպէս, «Պէյրութօշիմա»:

Իսկ պայթումին պատճառնե՞րը:

Բացայայտուեցաւ որ բաւական տարիներէ ի վեր Պէյրութի նաւահանգիստի շտեմարաններէն մէկուն մէջ մեծ քանակութեամբ քիմիական պայթուցիկ եւ թունաւոր բաղադրութիւններ պահ դրուած են: Զուշանար շարունակուող քաշքշուքը, թէ այս վտանգաւոր նիւթերու եւ անոնց պահեստի կարգադրութիւնները արդիւօք եղած են պետական կամ զինուորական արտօնութեամբ ու տակաւին այլ կարգադրութիւններով: Բայց այն ինչ որ յստակ է այդ է, թէ բոլոր վտանգաւոր բաղադրութիւնները պահ դրուած են նաւահանգիստի մը մէջ որ մայրաքաղաքի կեդրոնական շրջանի մէջ է՝ շրջապատուած բազմաթիւ բնակելի թաղամասերով:

Պէյրութի փողոցները վարկեանի մը մէջ սկսան քանդուիլ մէկը միւսին ետեւէն: Մէկ կողմէ սկսան յայտարարուիլ մահացած անհատներու թիւերը, միւս կողմէ վիրաւորները: Ու տակաւին անոնք որոնք կորսուած են:

Զուշացաւ հայկական գաղութի մարդկային թէ կալուածային վնասները՝ Պուրճ Համուտի եւ Նոր Հաճընի մէջ ու տակաւին: Մինչեւ օրս ունինք տասնըմէկ մահ, բայց աւելի քան երկու հարիւր եւ յիսուն վիրաւոր, նաեւ եկեղեցական, կրթական, կուսակցական, միութենական, բարեսիրական կեդրոններու կրած ահաւոր քանդումները: Լիբանանցիներու հոգեկան բարդ իրավիճակին վրայ այս պայթումը եկաւ աւելիով բարդացնելու նոյնինքն Լիբանանցիին տագնապալի ներաշխարհը:

Զգացի բայց նաեւ հասկցայ, թէ արցունքներուս ետին կար իրականութիւն մը, որ կարելի չէր թագցնել: Հասկցայ թէ աշխարհագրական հեռաւորութիւնը ջերմութիւնս եւ սէրս Լիբանանի նկատմամբ չէ պակսեցուցած: Լիբանան ծնած եմ եւ Պէյրութը տունս է: Ճիշդ է, որ շատ կը ճամբորդեմ եւ յաճախ աշխարհագրականօրէն հեռու կը մնամ Լիբանանէն, բայց միշտ կար ու կը մնայ տուն վերադառնալու զգացականը:

Լիբանանի քաղաքական, ապահովական, տնտեսական թէ ընկերային փորձաքարերը եւ անոնց պատճառած բազմաթիւ ելեւէջները ու փոթորկոտ իրավիճակները անպակաս չմնացին իր պատմութեան վերջին քառասուն տարիներու ժամանակահատուածին մէջ: Այս Լիբանանի քաղաքացիական պատերազմէն սկսած մինչեւ այսօր, ուր ապրեցանք երկրին միջ-համայնքային տարակարծութիւնները եւ արճակատումները: Ապրեցանք երկրին համար մշակոյթի վերածուած կաշառակերութիւնը եւ անոր ստեղծած կարգավիճակները: Լիբանան մը, որ կեանքի նկատմամբ անպատասխանատու կեցուածք մը խրախուսած է, ուր ամէն բան կարելի է իրականացնել՝ օրինական ձեւով թէ օրինազանցութեամբ: Այս ստեղծած է իրեն յատուկ կենսամակարդակ մը բայց մանաւանդ կենսառճ մը, որուն մէջ քաղաքացին պէտք է յարմարուի:

Այս յարմարուող կեանքերը հասան տեղ մը ուր պոռթկացին: Պոռթկումը անփոխին, որոնք խելագարուած դուրս եկան իրենց տուներէն Հոկտեմբեր 2019-ին՝ պահանջելով արդար եւ մաքուր համակարգ մը: Հոն ուր մարդուն եւ քաղաքացիին իրաւունքները նիւթական թէ հոգեկան կը պաշտպանուէին: Կեանք մը, որուն իշխող քաղաքական ու պետական վերնախաւը արդար եւ շիտակ ձեւով պէտք էր որ յարաբերէին ժողովուրդին հետ: Մէկ խօսքով, ժողովուրդը կը պահանջէր իր պետութեան յարգանքը նոյնինքն քաղաքացիին նկատմամբ:

Ժողովուրդին այս պոռթկումը կամաց-կամաց խամրեցաւ 2020 տարուայ սկիզբները: Վրայ հասաւ համավարակը, ուր Լիբանան՝ ինչպէս բոլոր աշխարհ, անշարժացաւ: Տնտեսական վիճակի ահաւոր անկումը, տնտեսական ու տակաւին դրամատուներու տագնապը աւելիով սրեցաւ: Ժողովուրդի տգնաջան աշխատանքով վաստկած եկամուտը, որ պահ դրուած էր դրամատուներու մէջ «սառեցաւ», ինչ որ աւելիով պատճառ եղաւ քաղաքացիին անվստահութեան երկրի ղեկավարութեան եւ պետական վարչամեքենային նկատմամբ:

Օգոստոս 4-ի պայթումը եթէ մարդկային եւ ֆիզիքական ահաւոր աւերներ գործեց, բայց երեւի նոյնքան նաեւ մինչեւ օրս կուտակուած ընկերային եւ քաղաքացիական տագնապը հասցուց իր գագաթնակէտին: Հիմա կը գտնուինք նոյնինքն այդ ամէնէն բարձր տագնապի հարթակին վրայ:

Պետութիւն-քաղաքացի յարաբերութիւնը կը կազմաւորուի երկողմանի յարաբերութեան մը մէջէն: Այս յարաբերութեան բարւոք յառաջխաղացքը կ՚ապահովուի եթէ կայ փոխադարձ յարգանք: Ժողովուրդը պետութեան նկատմամբ կը կատարէ իր քաղաքացիական պարտաւորութիւնը, եւ նոյնքան պետութիւնը ժողովուրդին կը հայթայթէ բարւոք կենսամակարդակ: Այս եղած է պատմութեան ստեղծած եւ հաստատած յարաբերութեան հաշտ գործընթացքը՝ պետական վարչամեքենաներու եւ ժողովուրդներու միջեւ:

Օգոստոս 4-ի պայթումը իր բացայայտ թէ անյայտ պատճառներով պայթեցուց նաեւ երկար ժամանակէ ի վեր տակաւ առ տակաւ կուտակուած անվստահութեան տակարը պետութիւն եւ ժողովուրդ փոխ յարաբերութեան մէջ: Եթէ պայթումը եւ անոր աւերները ահաւոր հետեւանքներ կը ձգէ երկրին եւ ժողովուրդին վրայ, բայց նոյնքան նաեւ յուսահատութեան, յոգնութեան եւ մանաւանդ աղքատութեան նշաններ:

Լիբանան իր պատմութեան ընթացքին շատ ապրած է տագնապի փորձառութիւնը: Երբ այդ փորձառութիւններուն մէջէն Լիբանան ընկրկած է, բայց դարձեալ ոտքի կեցած է: Այս ալ Լիբանանի եւ իրեն յատուկ հրաշք-կենցաղն է կարծէք: Բայց չէ որ ամէն բան կարելի է իրականացնել Լիբանանի մէջ:

Հայրս իր կեանքին ընթացքին յաճախ կը կրնկէր ֆրանսերէն ժողովրդային խօսք մը. «լիբանանցին լաւ ապրող է»: Չեմ գիտեր ուրկէ իմացած էր: Երեւի ինք ալ իր փորձառութենէ՞ն: Այո Լիբանանի հմայքը լաւ ապրելու կենցաղին մէջ է: Իսկ լաւ ապրելու համար պէտք է իմանալ, թէ ինչպէս եւ ինչ ձեւով: Ինչպէսը եւ անոր գիտելիքները կարծէք փիւնիկեան ժառանգ են, որ Լիբանանը եւ լիբանանցին ստացած է եւ ատով յառաջ կը քշէ իր կեանքը: Եթէ ինք կը զարմանայ իր այս իւրայատկութեան վրայ, բայց նոյնքան նաեւ կը զարմացնէ աշխարհը:

Եթէ արցունքներուս մէջէն կը փորձեմ տեսնել լիբանանցիին այս «լաւ ապրելու» կենցաղը, բայց չեմ ուզեր մոռնալ արկայ մտահոգութիւնը՝ պետութիւն-ժողովուրդ յարաբերութեան մէջ: Այս յարաբերութեան մէջ կայ պակաս օղակ մը: Իսկ պակա՞սը՝ ժողովուրդին եւ պետութեան միջեւ մեծ բացութիւնը:

Եթէ լիբանանեան պետութիւնը այսօր պարտաւորուած է երկրին հազար ու մէկ մտահոգութիւններուն տալ բարւոք պատասխաններ եւ լուծումներ, բայց այդ բոլորին մէջէն քաղաքացին ունի մէկ մեծ եւ հիմնական մարտահրաւէր մը՝ ուղղուած պետութեան:

«Ես ով եմ»:

Պետութեան համար քաղաքացին ո՞վ է եւ ի՞նչ է:

Լիբանան այսօր եւ ամէն ժամանակէ աւելի պէտք ունի խաղաղութեան, համերաշխութեան բայց մանաւանդ արդարութեան: Կը հասկնանք, թէ տարածաշրջանի եւ միջազգային ուժերը իրենց քաղաքական հաշուարկումներու եւ սակարակութիւններու մէջէն կրնան իրենց ազդեցութիւնը բանեցնել Լիբանանի բարօրութեան եւ յառաջխաղացքին: Բայց ճիշդ չէ, որ Լիբանանի բոլոր քաղաքական հանգոյցները եւ անոնց բարդութիւնները բեռցնել միջազգային թատերաբեմին վրայ: Կայ նաեւ տեղական պարտականութիւն մը, որ կարելի պէտք է ըլլայ իրագործել:

Պարտականութիւն մը, ուր կարելի պիտի ըլլայ կամրջել պետութիւն-քաղաքացի յարափերութիւնը: Հոն ուր պետութիւնը իր վարկը կը վայելէ եւ քաղաքացին ունի պարտականութիւններ եւ պարտաւորութիւններ: Այդ յարգանքն է որ կրնայ ընկերային եւ տնտեսական համերաշխութիւն եւ արդարութիւն ստեղծել երկրին մէջ՝ անկախ բոլոր միջազգային անցուդարձերէն:

Այս յարգանքը կերտելու համար ու տակաւին ամբողջացնելու համար պակասաւոր այդ օղակը պետութիւն-ժողովուրդ յարաբերութեան մէջ, լիբանանցի քաղաքացին այսօր իր պետութենէն կը սպասէ իր ուղղած հարցումին պատշաճ պատասխան մը:

«Ես ով եմ»:

Ճիշդ ու պատշաճ պատասխանն է, որ պիտի կերտէ պետութիւն-քաղաքացիի միջեւ ստեղծուած բաց-օղակը՝ իմմա յարգանքը: Յարագանքի այս օղակն է, որ կը շինէ խաղաղութիւն, համերաշխութիւն, եւ արդարութիւն:



# Լիբանան. Աղերս խաղաղութեան

Շարունակուած էջ 8-էն

2. Վերակառուցել Երկիրը

Քաղաքական, տնտեսական, ֆինանսական՝ առաւել COVID-19 համաճարակի անէծքներով տանջուած, այժմ Լիբանան կարիքը ունի երկրագունդի բոլոր պարկեշտ, սիրող եւ հոգատար ձեռքերու՝ փրկութեան հասնելու համար: Շտապ օգնութեան կարիքները՝ ինչպէս սնունդ, դեղօրայք, ապաստարան, որոնք անյապաղ պէտք էին երեկ, այսօր կ՛աւելնան պարզ կարիքով մը եւս, ծածկոյթ՝ (ապակի կամ այլ) երկրի կառոյցներու եւ բարոյականի փշրուած պատուհաններու ու դռներու:

Բոլոր քանդիչ ձեռքեր՝ հեռու Լիբանանէն:

Եւ կոչ՝ բոլոր խաղաղասէր, կարեկից եւ Քրիստոսակորիզ ձեռքերու ու սրտերու՝ հասնելու եւ փրկելու Լիբանանը եւ տարածաշրջանը:

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը պատրաստ է եւ յանձնառու անսասան շարունակելու իր շտապ օգնութիւնը Լիբանանի մեր համայքներուն՝ անոնց ներշնչելով ՅՈՅՍ եւ վերածնունդ:

Շնորհակալութիւն ձեր աջակցութեան համար:

# Ս. Էջմիածնի Մէջ Հոգեհանգստեան Պաշտօն Պէյրութի Պայթումի Զոհերու Յիշատակին



Կիրակի Օգոստոս իՆ 9ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բաց խորանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ, որուն աւարտին կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, նախագահութեամբ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ. Կաթողիկոսին:

Հոգեհանգստեան պաշտօնին ներկայ էին Հայաստանի մէջ Լիբանանի դեսպան Մայա Տաղէր եւ այլ պաշտօնական անձեր: Արարողութենէն առաջ Ամենայն Հայոց Հայրապետը Պէյրութի ողբերգական իրադարձութեան կապակցութեամբ իր վշտակցութեան խօսքն ուղղեց ներկաներուն, որուն աւարտին ըսաւ. «Այս առիթով Հայրապետական մեր յորդորը կը յղենք աշխարհասփիւռ հայութեան, որպէսզի իրենց զօրակցութիւնը ցոյց տան լիբանանահայութեան, այս դժուարին պահուն օգնեն այդ համայնքին»:

# Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը կը Գօտէպնդէ Տավուշի Նաւուր Գիւղի Դպրոցը Բնագիտութեան Տարրալուծարանով



2019-ին «Մէկ Գիւղ» համագործակցութիւնը (Consortium)՝ որ ծնունդ առաւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան նախաձեռնութեամբ, Հայաստանի սահմանամերձ գիւղերու զարգացման ծրագրի շրջանակներուն մէջ ստանձնեց Տավուշի Մարզի Նաւուր համայնքի Միջնակարգ Դպրոցի հովանաւորութիւնը: Այս Համագործակցութիւնը՝ որուն կը մասնակցին 11 տեղական եւ միջազգային կազմակերպութիւններ, կազմուեցաւ 2014-ին, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով: Համագործակցութեան առաջին առաքելութիւնն էր միասնական ուժերով օգնել Քեղարքունիք Մարզի Մարտունի գիւղին: Իր կազմութեան օրէն ի վեր Համագործակցութիւնը եղած է գործօն:

Մայիս 2020-ին, որպէս «Մէկ Գիւղ» Համագործակցութեան մէկ անդամը, Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը Նաւուրի դպրոցին նուիրուեց 1,300,000 (մէկ միլիոն երեք հարիւր հազար) դրամի արժողութեամբ բնագիտութեան տարրալուծարան, որ մեծ ոգեւորութիւն եւ աշխուժութիւն պարգեւեց ուսուցիչներուն եւ աշակերտներուն:

Այժմ Դպրոցի տարրալուծարանը ապահովուած է բնագիտական, ելեքտրաուժային եւ մաքնիսականութեան բաժանմունքներու գրեթէ բոլոր տեսակի փորձերու համար՝ իրենց մեթոտաբանութեան ցուցմունքներով:

Դպրոցի տնօրէնութիւնը, ուսուցիչները, աշակերտներն ու ծնողները իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան այս հիանալի նախաձեռնութեան համար:

Մինչ օրս՝ «Մեկ Գիւղ» Համագործակցութիւնը Նաւուրի մէջ իրականացուցած է շարք մը կրթական, զարգացման եւ օգնութեան ծրագիրներ՝ ներառեալ ջրատարերի տեղադրումը, ֆութպոլի դաշտի կառուցումը եւ դպրոցի կահոյքի տրամադրումը:

Դրականօրէն արձագանքելով Հայաստանի Հանրապետութեան Նախագահի եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի Նախագահ Արմէն Սարգիսեանի կոչին, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը 25,000 տոլարի ներդրումով աջակցեցաւ նաեւ Սահմանամերձ համայնքները հզօրացնելու շտապ օգնութեան արշաւին:

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը հիմնադրուած է 1918-ին, որպէս Քրիստոնէական կազմակերպութիւն, իր ծառայութիւնները մատուցանելու բոլոր անոնց, որոնք օգնութեան կարիքը ունին՝ առանց խտրութեան: Աւետարանչականը իր այս համաշխարհային առաքելութիւնը կ'իրականացնէ իրագործելով շարք մը կրթական, աւետարանչական եւ բարեսիրական ծառայութիւններ քսանչորս տարբեր երկիրներու մէջ՝ ներառեալ Հայաստան եւ Արցախ: Լրացուցիչ տեղեկութիւններու համար կրնաք այցելել Աւետարանչականի կայքէջը www.amaa.org:

# «Մանուշակ» Մանկապատանեկան Եռամսեայ

«Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատեն,
Որպէսզի իր ծերութեան ատենն ալ անկէ չխոտորի»
«Առակաց գիրք 22.6»

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ




Մեզի համար հաճելի անակնկալ մըն էր տեսնել եւ թերթատել Թեքսաս նահանգի, Հիւսթըն քաղաքէն լոյս տեսնող «Մանուշակ» մանկապատանեկան գունազեղ, պէսպէսուն, բովանդակալից եւ պատանիներուն համար շատ դիւրահասկնալի եւ խիստ շահեկան այս հրատարակութիւնը:

Թերթը կը հրատարակուի Հիւսթընի մէջ գործող Armenian Church Charities անունով ոչ հասութաբեր բարեսիրական կազմակերպութեան կողմէ:

Այս ակնահաճոյ հրատարակութեան խմբագիրն է բազմազբաղ եւ ամբողջ ԱՄՆ-ի մէջ ծանօթ՝ մեծանուն երիտասարդ վիրաբոյժ՝ Տոքթ. Արա Գարամանեան, իր կողքին ունենալով իր տիկինը՝ Լիանա Գարամանեան, որ Հայց. Առաքելական եկեղեցւոյ Հիւսթընի Ս. Գէորգ եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի ուսուցչուհի է եւ իր ներդրումը ունի այս հրատարակութեան մէջ:

Այս թերթը ամէն բանէ առաջ յանձնարարելի է եւ կ'արժէ, որ ԱՄՆ-ի եւ Գանատայի մէջ գործող ամէնօրեայ, միօրեայ եւ կամ արուեստի դպրոցներէ, ինչպէս նաեւ բոլոր եկեղեցիներէն ներս ամէն աշակերտ-աշակերտուհի ունենայ այս թերթը, հոն թէ անգլերէն եւ թէ հայերէն լեզուներով գրութիւններ կան, որոնք շատ հասկնալի են մանուկի կամ պատանիի մը համար:

Խմբագիր Տոքթ. Արա Գարամանեան շատ ծանօթ է Հիւսթընի հայ գաղութէն ներս: Ան եղած է Ս. Գէորգ եկեղեցւոյ վարչական, ատենապետ եւ մեր մայրենի եկեղեցւոյ հաւատարիմ սպասարկող: Իր երեք մանուկ զաւակները եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցը կը յաճախեն, ճիշտ անոր համար է, որ խմբագիրը շատ լաւ գիտէ մանուկներուն հոգեբանութիւնը, անոնց ուզածը, անոնց ոեւէ մէկ նիւթ հետաքրքրական եւ հաճելի ներկայացնելու ձեւերը:

Ահա այս պատճառաւ, այս գունաւոր եւ շատ գեղեցիկ էջադրումով թերթը, առաջին վայրկեանէն իսկ կը հմայէ ընթերցող մանուկը կամ պատանին:

Այս հրատարակութեան մէջ կը տեսնենք Հայց. Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան, Արեւելեան եւ Գանատայի թեմերու Առաջնորդներուն գնահատանքի եւ օրհնութեան խօսքերը, ուրիշ կղերականներու շահեկան մասնակցութիւնը այս թերթին:

Թերթը Հիւսթընէն եւ անկէ դուրս աշխատակիցներ ունի, որոնք մեծագոյն հաճոյքով իրենց մասնակցութիւնը կը բերեն այս թերթին, մեր նորահաս հայ սերունդին օգտակար ըլլալու համար:

Ինչպէս յիշեցինք, թերթը անգլերէն եւ հայերէն լեզուներով է: Հոն առաջին բաժինին մէջ կայ հայերէն տառերը սորվեցնող էջեր, ապա մշակոյթի եւ մեծանուն մշակոյթի գործիչներու մասին գրութիւններ, իսկ երրորդ բաժինին մէջ ամէնէն շատ հետաքրքրական է՛ջեր կան, հոն կը սորվեցնեն հայերէն հանելուկներ, կրօնաբարոյական տեղեկութիւններ, ազգային գործիչներու կեանքէն առնուած գրութիւններ եւ տեղեկութիւններ, աղօթքներ եւ զբաղմունքի բաժին մը կայ, կը սորվեցնեն մանուկներուն կամ պատանիներուն հայկական շատ պարզ ձեւով կերակուրներու պատրաստութեան քայլերը:

Այս բոլոր տեղեկութիւնները կը տրուին տպագրական նորագոյն ձեւերով եւ մօտեցումներով, որոնց համար իրապէս սրտանց կը շնորհաւորենք այս թերթի բոլոր պատասխանատուները, գլխաւորութեամբ Տոքթ. խմբագիրին, բոլորին ըսելով Ձեր վարձքը հազար կատար ըլլայ:

Բնաւ կասկած չունինք, որ մեր հայրենակիցները այս եռամսեան տեսնելով, իրենց զաւակները կամ թոռնիկները բաժանորդ պիտի ընեն այս թերթին, որպէսզի անոնք ազգային մաքրամաքուր ոգիով մեծնան եւ հպարտ զգան իրենց հայ ըլլալուն եւ անխզելիօրէն պիտի կապուին հայութեան:

Թերթը ունենալու համար կարելի է դիմել.-

e-mail Info@Manoushag.org
Website www.Manoushag.org
Հեռաձայնել (832)895-7272 թիւին
Թերթի հասցէին դիմելով
"Manoushag"
6624 Farrin Street, Suite # 2580
Houston, TX, 77030

www.massispost.com
Daily News Updates

# Երբ Հոգին Է Համրանում

ՆԵԼԼԻ ԵՆՈՔԵԱՆ

-Պապի՛ ջան, you know I am a pretty girl,-չարաճճի ժպիտը դէմքին՝ ծոռնուհին վազեց պապի մօտ:

- Շա՜ն լակոտ, հազար անգամ քեզ ասել եմ՝ իմ տանն էդ օտարի լեզուով չխօսես,- շանթահարուածի պէս՝ տեղից վեր թռաւ Արշակ պապը:

- Ջա՛գս, էլե՛նս,- զայրոյթը խեղդելով՝ վերջինս հինգ տարեկան թոռանը գիրկն առաւ: Արցունքի խոշոր կաթիլները կախուել էին փոքրիկի կոպերից, հազիւ էր իրեն զսպում, որ չվազեր տատի մօտ ու չբողոքէր:

- Էլէ՜ն, էդ ի՞նչ անուն է,- ծոր տալով՝ պապը գրպանից հանեց թաշկինակը: - Լա՛ւ, մի Նամուսով, հայկական անուն չկա՞ր:

- Պապի՛, դէ լաւ էլի, ի՞նչ պապի ես, ո՛չ անունս ես հաւանում, ոչ էլ թողնում ես իմ լեզուով խօսեմ:

- Վա՜յ, տունս քանդուեց, էդ ի՞նչ ես ասում, ա՛յ բալա, քո լեզուն հայերէ՛նն է, հայերէ՛նը, հասկացա՞ր, դու հա՛յ ես, հա՛յ: Զայրոյթից ձեռքերը դողում էին, ասես շնչահեղձ էր լինում: -Իմ Արամի բալէ՜քը...Երանի՜ սիրտս կանգ առնէր, խելագարուէի, միայն չլսէի, թէ ոնց է թոռս օր օրի օտարանում: Ախ, Աստուա՛ծ, էսքան կրակ լցրիր գլխներիս, բայց դիմացանք, մարմիններս ճանկռոտելով՝ մեր հոգին մաքուր պահեցինք, ու հիմա, մեր զաւակներին սփռում ես աշխարհով մէկ, որ ձուլուե՞ն, վերանա՞ն, ապա ո՞ւր ես, հայի աստուած, ինչո՞ւ ես մեզ անդադար պատժում: Չէ՛, հայի արմատներն ամուր կպած են հողին, ոչ մէկը չի կարող նրա կենաց ծառը կտրել...

Ահա այսպէս, տասը երկար ու ձիգ տարիներ, պապի օրը սկսւում էր գիւղացիներին, երիտասարդներին խրատելով, որ չլքեն իրենց գիւղը, աշխատեն, շէնացնեն, շատ երեխաներ ունենան:

- Աշխատանք միշտ էլ կը գտնուի, դրա համար ցանկութիւն է պէտք, ամէն օր գիւղսովետի պատին նոր յայտարարութիւններ են գրում. պահանջւում են բանուորներ, հնձուորներ, գողողներ... Աշխատանք՝ ինչքան սիրտդ ուզի, բայց էս գիւղում ջահելա մնացել որ,- ասում էր ու բարկացած գլխարկը գետնովը տալիս: Արշակ պապն էդպէս էլ սովետի ժամանակներից էս կողմ չեկաւ, նրա համար շրջանն էդպէս էլ մարզ չդարձաւ: Մի օր էլ հարեւաններից մէկը չդիմացաւ:

-Ա՛յ հեր օրհնած, էդ որ աջ ու ձախ խրատներ ես տալիս, մի խրատ էլ էն քո Ամերիկաներում ապրող թոռներին տուր, թէ չէ, քոնը թողած՝ առաւօտից իրիկուն ուրիշների գլխին ես քարոզ կարդում, ճիշտ ու սխալ սովորացնում: Էդ ու էդ էր, որ Արշակ պապը մէկ էլ գիւղի ջահելներին դաս տար:

«Էհ, գիւղն օր օրի դատարկւում է, ո՛չ հարս կայ, ո՛չ էլ նոր ծնուող երեխայի ձայն է լսւում,- մտածում էր Արշակ պապը՝ նայելով դատարկ դար ու դաշտերին, անտէր մնացած տներին: Աստուրի տունը՝ մէկ, Սահակի տունը՝ երկուս, Ասլանի տունը՝ երեք, Սմբատի տունը՝ չորս... ու էսպէս, տան շէմին նստած, Արշակ պապը անտէր-անտիրական մնացած տներն էր հաշւում : Բա քո տունը հաշի՞ւ չի, ա՛յ բիձա»- մէկի ձայնն, ասես ականջները խլացնելով, շանթահարի պէս՝ երդիկից գլխին ընկաւ: Դեռ լաւ էր թոռը խղճում էր, ամառային արձակուրդներին երեխաներին մի քանի օրով նրանց մօտ էր ուղարկում, իբրեւ պապն ու տատը կարօտներն առնէին: «Է՜, տեսնես էդ Ամերիկայի վրայ մե՞ղր է քսած, որ մեր զաւակները, տունտեղ թողած, մեղուի պէս շուրջն են հաւաքւում: Այսքան տարի, վիշտը շալակած՝ ապրում էին ինքն ու իր պառաւը: Կեանքը նրա համար գոյները կորցրեց այն դաժան օրը, երբ հարսն ու տղան աւտովթարից մահացան: Այդ օրից Արշակ պապի դէմքից ժպիտն անհետ կորաւ: Միակ սփոփանքը թոռներն էին, բայց նրանք էլ տուն-տեղ թողեցին ու հեռացան: «Էս գիւղում ես ոչ անելու բան ունեմ, ոչ էլ՝ ապագայ»- մի օր ասաց թոռը, քրոջը վերցրեց, տատի ու պապի սիրտն էլ մինչեւ վերջին կաթիլը դատարկեց ու գնաց: Շատ տարիներ էին անցել, նրա Արամ թոռը մեծ մարդ էր դարձել, բայց դա պապի սիրտը չէր ուրախացնում: Նա իր արիւնը օտարի արեան հետ էր խառնել՝ վշտացնելով պապի ցաւատանջ սիրտը:

- Արշա՛կ պապ, ո՞ւր ես,- մէկը ձայնը գլուխը գցած՝ պապին էր փնտռում: - Պապի՛, էդպէս էլ գիտէի, որ քեզ էստեղ կը գտնեմ, հիւթալի ծիրանների ծանրութիւնից կախուած ճիւղերը մի կողմ տանելով՝ ասաց գիւղի միակ երիտասարդը, որ յիսուն տարեկանին մօտ տղամարդ էր: Ա՛յ մարդ, առանց բահ կեանք չունես, առաւօտից իրիկուն բաղից դուրս չես գալիս: Աղջի՛կս, էս էլ մեր Արշակ պապը,- կողքին կանգնած սիրունատես աղջկան դիմեց Արշակի դրկիցը:

- Բարեւ, Արշա՛կ պապ,- աղջիկը, մտերմաբար, ձեռքը վերջինիս մեկնեց : Պապի՛ ջան, մի հաղորդում ենք պատրաստում. «Ցեղասպանութիւնը ականատեսի աչքերով»: Ասացին, որ մեծ մայր ունէք, ում ծնողները եաթաղանի զոհ են դարձել: Լրագրողը, դեռ չէր հասցրել տեղաւորուել, Վերջալոյս տատի հետ մի երկու բառ փոխանակել, երբ, մէկը միւսի հետեւից, ներս մտան հարեւանները: Տատի դէմքն այնքան ծմռուած էր, որ կարելի էր համրել ցաւից գոյացած ակօսները: Չնայած տեղահանութեան տարիներին նա հազիւ մի տարեկան լինէր, բայց աչքերն ասես ցաւից կախուած տոպրակներ լինէին, որ տարիների հետ գոյացել էին՝ կաթիլ առ կաթիլ հաւաքած արցունքներից: Քթի տակ մի երգ էր մրմնջում ու ձեռքի փոքրիկ թաշկինակով մերթընդմերթ մաքրում աչքերը:

- Հօրս սիրած երգն էր, - ասես անդունդի միջից՝ լսուեց Վերջալոյս տատի ձայնը: Այն չարագոյժ տարին մօրս կրծքից կախուած մանկիկ էի, բայց երբ յիշում եմ տատիս պատմածները, նրա քարացած աչքերը, ակամայից դառնում եմ այդ չարագոյժ օրերի ականատեսը: Երբ տատս հօրս մասին էր պատմում, միշտ այս երգն էր հնչեցնում. «Քելէ՛ լաօ, քելէ՛ երթանք մըր էրգիր»: Դժուար է հայի ճակատագիրը, աղջի՛կս, ով փրկուել է այդ օրերի ահուսարսափից, նրա սրտում մի մեծ վիհ է գոյացել, որ տարիների հետ, որքան էլ փորձել է լցնել, այն աւելի ու աւելի է խորացել: Տատս պատմում էր, որ ինձ ու մօրս մի թուրք կին է փրկել՝ թաքցնելով իրենց մարագում: Երբ էդ անաստուածները մեր տուն էին մտել, հօրս ու պապիս սրի քաշել, հարեւանի կինը, ում տղային մի օր հայրս մահից էր փրկել, մօրս ու ինձ թաքցրել էր իրենց մարագում, իսկ գիշերը, մայրս, ինձ մէջքին կապած, այստեղ- այնտեղ թաքնուելով՝ փախել էր կողքի գիւղը, ուր մօրեղբօրս ընտանիքն էր ապրում: Ասում էր. -Աղջիկս, արեան գետեր էին հոսում, անասունի պէս մորթում էին՝ առանց աչքերը թարթելու: Աղջիկներին անարգում, մարմիններին թուրքական նշաններ էին դաջում, որ մի հրաշքով փրկուելու դէպքում էլ այդ օրերի սարսափները ողջ կեանքում կոպերից կախուած մնային»: Վերջալոյս տատի ձեռքերն ասես իրեն չէին ենթարկւում, անընդհատ այս կողմ-այն կողմ էր տանում՝ ասես փորձում էր փախչել այդ վայրահառաչ զազանների ճիրաններից: - Տատիս դէմքին երբեք ժպիտ չտեսայ, երբեմն, ինձ թւում էր՝ նրա հոգին մնացել էր հօրս ու պապիս անշունչ դիակների վրայ, որ այդպէս էլ, ոչ մի տեղ հանգրուան չէին գտել. ո՞վ իմանար, այդ շներն ինչպէս էին յօշոտել նրանց մարմինները: Ախր, նրանք փոքր եղբօրս էլ չէին խնայել: Տատս ասում էր, որ նրանք շատերին չսպանեցին, որ ամբողջ կեանքում սարսափն աչքերին ապրեն, չհասկանալով՝ մեռած են, թէ՝ կենդանի: Ցաճախ էի տատիս շուրթերից լսում՝ «երանի ինձ էլ սպնէին» արտայայտութիւնը: Բայց մի օր հասկացայ՝ նրա խօսքերի խորքում ինչ էր թաքնուած, երբ, պատահաբար, նրա մարմնի վրայ սարսափելի հետքեր տեսայ: Քանի քանիսն ապրեցին՝ մահ խնդրելով. կարծես մահն էլ էր նրանցից երես թեքել: Այն գիշեր, մի հնարքով, թուրք կինը ինձ ու մօրս մօրեղբօրս տուն է հասցնում: Բայց մայրս չի հանդարտւում, ինձ թողնում է այնտեղ ու գնում հօրս ու եղբօրս դիակներն այդ դահիճներից ազատելու: Ցաւոք այդ անիծեալները մօրս ու էլի շատ կանանց, աղջիկների բռնում են, անարգում, սրատում, մի քանիսին էլ անգիտակից թողնում ճանապարհներին: Անիծուած սերունդ էինք, աղջիկս: Այդ ժամանակ էլ հաւատ չունէինք, - խորը շունչ քաշելով, համարեա շշուկով, ասաց Վերջալոյս տատը: Բայց տատս աստուածավախ կին էր, թոյլ չէր տայ մէկը իր հոգու մատուռը պղծեր: Թէ մարդը մարդու ձեռքով մորթուի, բա գազանին ի՞նչ անուն տանք:

- Վերջալո՛յս տատ, իսկ մա՞յրդ, նա՞ էլ չփրկուեց, -տատի ցաւն աւելի բորբոքելով՝ վերջինիս դիմեց լրագրողը: Մի պահ տատի աչքերում այնպիսի փոթորիկ բարձրացաւ, որ թուաց՝ ուր որ է մաքրելու է տանի ցաւն էլ, դրանից գոյացած հետքերն էլ, ու խեղճ կինը վերջապէս հանգստութիւն է գտնելու:

- Ես տատիս պատմութիւններով եմ ծնողներիս յիշում: Հայրս գիւղում մեծ յարգանք է վայելել: Մայրս էլ՝ իր ամուսնուն, երեխաներին նուիրուած, խոնարհ կին է եղել, հայ մայր: Նա չի կարողացել նստել եւ սգալ հօրս եւ եղբօրս կորուստը. գնացել է նրանց հետեւից ու այդ մարդասպանների կեղտոտ ճանկերն ընկել: Բայց, որ ամենասարսափելին էր, մօրս սրտի տակ մի սիրտ էլ է բաբախել , որ այդպէս էլ լռել է՝վիրաւոր թռչնի պէս թպրտալով: Շատերը փախել են, շատերը՝ սրի մատնուել, շատերը թոնրատանն են մնացել, շատերը՝ մանկան օրօրոցին կռթնած, իսկ տատիս ականջներին խլացել էին նրանց լալահառաչ ճիչերը: Մորթոտուած երեխաների բաց աչքերը, որ դեռ չէին հասցրել փակուել մայրական քաղցր օրօրից, այդպէս էլ ամբողջ կեանքում տատիս թարթիչներից կախուած մնացին:

- Ցոգնեցի, աղջիկս,- սառած աչքերով՝ լրագրողի ձեռքը բռնեց Վերջալոյս տատը: Գնամ թախտիս հետ կռիւ տամ, աղերսեմ, որ մի պատանք դառնայ, ինձ էլ տանի- հասցնի ծնողներիս, որ էս ցաւն էլ չպատմուի, չյիշուի, որ մի օր աշխարհն էլ մաքրուի յուշերի փոշուց ու հանգիստ, խաղաղ ապրի: Գնա՛մ, գնամ ծերերին կանչեմ, ցախաւելը վերցնենք ու սկսենք մարդկանց յուշերը մէկ-մէկ մաքրել, խտակել: Արշակ պապի թեւին կռթնած, ինքն իր հետ խօսելով, Վերջալոյս տատը գնաց՝ մարդկանց ցաւերից ազատելու ուղիներ փնտռելու:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* $50,00 * $100,00 (first class) for USA

$ 125,00 (Air Mail) for Canada.

$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ---------------------------------------

Address: ---------------------------------------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: -------------

Tel :---------------------- Email: -----------------------

## ՄԱՀԱԶԴ



***ԱՆԱՀԻՏ ՄՈՒԹԱՖԵԱՆ-ՊԷՐՊԷՐԵԱՆ***
*(Լիբանան 1953-2020)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր դստեր, մօր, մեծ մօր, մօրաքրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝ Անահիտ Պէրպէրեանի մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 4 Օգոստոս, 2020ին Պէյրութի պայթումին հետեւանքով, Լիբանան:*

*Յուղարկաւորութեան եկեղեցւոյ կարգը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 5 Օգոստոսին ժամը 12:30ին Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մատրան մէջ, իսկ գերեզմանի կարգը նոյն գերեզմատան մէջ:*

*Սգակիրներ՝*
*Մայրը Տիկ. Ազնիւ Մութաֆեան (Լոս Անճելոս)*
*Զաւակները՝*
*Տէր եւ Տիկ. Մհեր Պէրպէրեան եւ զաւակունք (Լիբանան)*
*Տիար Դաւիթ Պէրպէրեան (Լիբանան)*
*Տիար Սեւակ Պէրպէրեան (Լիբանան)*
*Քոյրը՝ Տիկ. Սոնա Գրգոչեան եւ զաւակունք (Արիզոնա)*
*Եղբօր կինը՝ Տիկ. Ալիս Մութաֆեան (Գանատա)*
*Եղբայրը՝ Տիար Մինաս Մութաֆեան (Լոս Անճելոս)*
*Եղբօր ընտանիքը՝ Տիկ. Լիսա Մութաֆեան եւ զաւակունք (Լոս Անճելոս)*
*եւ համայն Պէրպէրեան, Մութաֆեան, Նաճարեան, Ռէճէպեան, Գրգոչեան, Տէօշողլեան, Արապաճեան, Եախինեան, Թոքճեան, Գալթագճեան, Սարաֆեան, Թորոսեան, Ջափարեան եւ համայն ընտանեկան պարագաները:*

## ՄԱՀԱԶԴ



***ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԱՖԵԱՆ***
*( 1923-2020)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, եղբօր եւ հարազատին՝ Անդրանիկ Սարաֆեանի մահը, որ պատահեցաւ Շաբաթ, Օգոստոս 8, 2020ին Պէյրութի մէջ, Լիբանան յետ կարճատեւ հիւանդութեան:*

*Յուղարկաւորութեան եկեղեցւոյ կարգը տեղի ունեցաւ Կիրակի, 9 Օգոստոսին Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մատրան մէջ, իսկ գերեզմանի կարգը նոյն գերեզմատան մէջ:*

*Սգակիրներ՝*
*Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ալիս Սարաֆեան եւ զաւակները՝ Արեգ եւ Ռաֆֆի Սարաֆեան*
*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Վարդուհի Սարաֆեան եւ զաւակները*
*Տօքթ. եւ Տիկ. Համբիկ եւ Նայիրա Սարաֆեան եւ զաւակները*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Այսու կու գանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու «Մասիս» շաբաթաթերթին եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ ու հաղորդակցութեան տարբեր միջոցներով, մասնակից եղան մեր հարազատին՝ Պօղոս Մութաֆեանի մահուան առթիւ մեր մեծ վիշտին, ամոքելով եւ մխիթարելով մեզ:*

*Տիկ. Ազատուհի Մութաֆեան*
*Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Նորա Մութաֆեան*
*Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Հուրիկ Մութաֆեան*
*Զատ եւ Մարալ*
*Մութաֆեան Ընտանիք*

********

*Պօղոս Մութաֆեանի մահուան տխուր առիթով հանգուցեալի ընտանիքը 500 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:*

# Հ.Բ.Ը.Մ.ը կը Լծուի Լիբանանի Օգնութեան

Շարունակուած էջ 1-էն

*չորս օրեր ետք, երբ պատահեցաւ Լիբանանը ցնցող նաւահանգիստի ահաւոր եւ աղիտալի պայթումը, հրատապ փրկարարական եւ օգնութեան գործողութիւններու համար նախաձեռնուած հանգանակութիւնը, երեք օրերու ընթացքին անցաւ $1,000,000-ը: Մարդասիրական օգնութեան կարիքը սրացում արձանագրած է իբր արդիւնք բնակարաններու եւ վաճառականական հաստատութիւններու ֆիզիքական լայնատարած քանդումին, որ կու գայ աւելնալու արդէն իսկ նիւթական եւ առողջապահական տագնապին իբր արդիւնք, ժողովուրդը ճնշող կեանքի եւ ապրուստի մտահոգութիւններուն վրայ:*

*Նախագահ Պերճ Սեդրակեան կը մատնանշէ, թէ «Ի տարբերութիւն Հ.Բ.Ը.Մ.ի կողմէ ցարդ նախաձեռնուած օգնութեան արշաւներուն, ինչպէս էր պարագան 1988-ի երկրաշարժին, Արցախեան պատերազմին, Սուրիահայ տարագրեալներուն եւ այլ տեղական բնոյթ ունեցող արտակարգ իրավիճակներուն, Համավարակի տագնապին եւ Լիբանանը ցնցող վերջին աղէտին պատճառով, ներկայիս միաժամանակ վտանգի մատնուած են աշխարհի մէկէ աւելի վայրերու մէջ գտնուող հայ շրջանակներ:» Ակնարկելով հայաշխարհի տարբեր կողմերէն հասնող լայնածաւալ աջակցութեան, ըստ Նախագահին, անիկա արտայայտութիւնն է «իրարօգնութեան հայկական բնածին պատասխանատուութեան գիտակցութեան:»*

*Ըստ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Գրասենեակի Վարիչ Տնօրէն Անիթա Անսըրեանին, որ շարունակական կապի մէջ է Հ.Բ.Ը.Մ.ի համաշխարհային ցանցի շրջանային գրասենեակներուն եւ տեղական մասնաճիւղերուն հետ, համատարած աջակցութեան ծաւալը եւ թափը աննախադէպ են:*

*«Մեր համատարած ցանցի ղեկավարութիւնը անդադար աշխատանքի լծուած է համակարգելու համար հանգանակութեան աշխատանքները եւ ապահովելու անոնց անյապաղ տրամադրումը տեղւոյն վրայ յառաջ տարուող օգնութեան նախաձեռնութիւններուն: Մեզի համար խորագոյն գոհունակութիւն է տեսնել բոլորին կողմէ ցուցաբերուած համագործակցութեան ոգին: Հերոսներ չեն պակսիր մեր շարքերէն ներս:»*

*Ըստ Անսըրեանին, «Առանց մեր ճիգերը կարելի դարձնող այս շօշափելի գումարներուն, կարելի պիտի չըլլար իրականացնել անհրաժեշտ սննդեղէնի ծրարներու բաշխումը ծանրագոյն վնասներու ենթարկուած շրջաններուն, ինչպէս Լիբանան, Հայաստան եւ Սուրիա, մինչեւ իսկ այն շրջանակներուն, ինչպէս Լոս Անճէլըս, Թորոնթօ, Մոնթրէալ, Սիտնի եւ այլք, ուր ակնկալելի չէր այսքան սուր կարիքի առկայութիւնը: Այժմ մենք պէտք է աւելի եւս լարենք մեր ուժերը, հասնելու համար Լիբանանի մեր աղէտեալ համայնքներուն:»*

*Նախագահ Սեդրակեան կոչ կ'ուղղէ ըսելով, «Հանգանակուած գումարները արագօրէն կը սպառին կարիքներու ծաւալին պատճառով: Հերեւաբար անհրաժեշտ է որ մենք պատրաստ ըլլանք ցնոր տնօրինութիւն, լարուած պահելու մեր ուժերը, դիմագրաւելու համար տիրող տագնապները: Հետեւաբար ջերմօրէն կը դիմենք բոլոր հայութեան, իրենց կարելութեան ներած չափով, որքան ալ ըլլայ անոր տարողութիւնը, կենալ մեր կողքին, որպէսզի որեւէ կարիքաւոր հայ, աշխարհի որ անկիւնն ալ ըլլայ ան, անօգնական չմնայ: Նոյնիսկ երբ Համավարակը յաղթահարուի եւ Լիբանանը կարենայ գտնել իր հաւասարակշռութիւնը համատարած աղէտի պատճառած քանդումներէն, Հ.Բ.Ը.Մ.ը պատրաստ պիտի ըլլայ, աւելի քան երբեք, դիմագրաւելու համաշխարհային մարտահրաւէրներ: Մեր առաքելութեան առաջնահերթութիւնը պիտի ըլլայ սփոփումի եւ յոյսի մատոյց դառնալ աշխարհին:»*

*Հ.Բ.Ը.Մ.ի Համաշխարհային Մարդասիրական Շտապ Օգնութեան Հիմնադրամին մասին յաւելեալ տեղեկութիւններու համար, հաճեցէք ստուգել (donate.agbu.org/lebanonrelief) կայքէջը: Լիբանանին օգնութիւն փութացնելու համար, հաճեցէք առցանց կատարել ձեր նուիրատուութիւնները: Հեռաձայնել՝ (212-319-6383, Երկշ.-Ուրբ. կ.ա. 9 կ.ե. 5, Նիւ Եորքի ժամով) կամ դրամատնային փոխանցումի համար կապուիլ giving@agbu.org հասցէով:*

# Սեւրի Դաշնագիրին Յմայքը...

Շարունակուած էջ 14-էն

*Ջալերեցին զինք որ վերակազմակերպէ Սուլթանական Թուրքիոյ տարտղնուած բանակը, լաւապէս զինէ իր ուժերը եւ անցնի յարձակողականի անվաւեր ու անօգուտ դարձնելու համար ինչ որ Սեւրի մէջ հայութեան կը տրուէր: Մէկ խօսքով՝ մեր Դաշնակիցները քարտէզի վրայ Հայաստան մը շնորհեցին մեզի, իսկ Քեմալին՝ առանց քարտէզի՝ գործնական, շօշփելի հողերը որոնք մեր պապենական արժանաւոր ժառանգը կը կազմէին» («Յիսնամեակ Վերածնութեան Ու Փառքի 1920-1970», Պէյրութ, 1971, էջ 92):*

*Այնուամենայնիւ, այսօր եւս կարելի է զարմանալ, որ Սեւրի դաշնագիրին 100-ամեակին առթիւ, մարդիկ կ'ուզեն իրականացած տեսնել ԱՄՆ-ի նախագահին ցնորական առաջարկը, երբ լուրջ դժուարութիւններ ունինք պահելու այն՝ ինչ որ մեր ձեռքն է:*

*Իրապաշտութենէ մեկնած, այսօր, եղածը պահելն է հրամայական եւ ոչ թէ խարխափումը՝ Սեւրի հմայքով կախարդուած:*

**www.massisweekly.com**

## Ախոյեաններու Լիգա. «Պարսելոնան» եւ «Պաւարիան» Հասան Քառորդ Եզրափակիչ




Ախոյեաններու լիկային մէջ տեղի ունեցն վերջին երկու պատասխան խաղերը:

«Պաւարիա» - «Չելսի» 4-1 (7-1) կոլերը՝ Ռոբերտ Լեւանդովկսի (2), Կորենտեն Տոլիսօ, Իվան Պերիշիչ - Տեմի Աբրահամ

«Պարսելոնա» - Նափոլի 3-1 (5-2) կոլերը՝ Կլեման Լանգլե, Լեօ Մեսսի, Լուիս Սուարես - Լորենցօ Ինսինյէ

Նշենք, որ քառորդ եզրափակիչին «Պաւարիան եւ Պարսելոնան մրցելու են միմեանց դէմ:

## «Մանչեսթեր Սիթի» Եւ «Լիոն» Հասան Ախոյեաններու Լիկայի Քառորդ Եզրափակիչ

Ֆուտպոլի Եւրոպայի Ախոյեաններու լիկայի քառորդ եզրափակչի առաջին ուղեգիրները նուաճեցին «Մանչեսթեր Սիթի»-ն եւ «Լիոն»-ը:

Համավարակի պատճառաւ առկախուած Ախոյեաններու լիկան երկար դադարէն յետոյ վերսկսաւ: «Ռէալ»-ը մրցելով «Մանչեսթեր Սիթի»-ի հետ զիջեցաւ 2:1 արդիւնքով: Անգլիական ակումբէն կոլերը նշանակեցին Ստերլինգը եւ Ժեզուսը, իսկ «արքայական ակումբի» միակ գնդակի հեղինակը դարձաւ Պենզեման: Երկու խաղերու ընդհանուր 4:2 հաշուով «Մանչեսթեր Սիթի»-ն կը շարունակէ պայքարը:

Օրուայ միւս խաղի ընթացքին «Եուվենթուս» Ռոնալտոյի երկու կոլերուն շնորհիւ 2:1 հաշուով յաղթեց ֆրանսական «Լիոն»-ին, սակայն դուրս մնաց յետագայ պայքարէն, քանի որ առաջին խաղին զիջած էր նուազագոյն հաշուով: «Լիոն»-ը հասաւ քառորդ եզրափակիչ:

## «Ռոմա»-ն Դուրս Մնաց Եւրոպայի Լիկայէն



Ֆուտպոլի Եւրոպայի Լիկայի 1/8 եզրափակչի շրջանակներուն մէջ «Ռոմա»-ն մրցակից ունէր սպանական «Սեւիլիան»:

Սպանական խումբը յաջողեցաւ հանդիպումի հաշիւը բանալ 22-րդ վայրկեանին: Աչքի ինկաւ Սերխիօ Ռեգիլոնը: Այնուհետեւ՝ 44-րդ վայրկեանին, «Սեւիլիա» նշանակեց երկրորդ կոլը: «Սեւիլիա»-ն յաղթեց 2:0 հաշուով եւ հասաւ Եւրոպայի Լիլայի քառորդ եզրափակիչ:

Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբէն Հենրիխ Մխիթարեանը «Ռոմա»-ի հիմնական կազմին մէջ էր եւ մասնակեցաւ ամբողջ խաղին:

Եւրոպայի Լիկայի 1/8 եզրափակչի միւս խաղի ընթացքին Լեւերկուզենի «Պայերը» նուազագոյն հաշուով յաղթեց սկովտիական «Ռենճերս»-ին եւ հասաւ քառորդ եզրափակիչ:

## Գերմանիան Կը Թոյլատրէ Երկրպագուներուն Ներկայ Գտնուիլ Խաղերու՝ Շարք Մը Սահմանափակումներով

Պունտեսլիկայի յաջորդ մրցաշրջանի խաղերուն պիտի թոյլատրուի երկրպագուներուն ներկայ գտնուիլ մարզադաշտերու մէջ: Առաջնութեան պաշտօնական կայքին մէջ հրապարակուած է սահմանափակումներու ցուցակը, որոնք կը գործեն յաջորդ մրցաշրջանի մեկնարկի ընթացքին:

-Կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով երկրպագուները պէտք է սոցիալական հեռաւորութիւն պահեն:

-Կ՚արգիլուի ալքոհոլային ըմպելիքներով մտնել մարզադաշտ:

-Խաղերուն կկրնան ներկայ գտնուիլ միայն դաշտի տէր հանդիսացող խումբի երկրպագուները: Քաղաքէ քաղաք տեղաշարժը կրնայ վարակի տարածման պատճառ դառնալ, այդ իսկ պատճառով հիւրերը կը խաղան առանց երկրպագուներու:

-Մարզադաշտի այն տեղերը, որտեղ նստատեղեր չկան, առայժմ պիտի չի բացուին:

Յիշեցնենք, որ Պունտեսլիկայի նոր մրցաշրջանը պիտի սկսի Սեպտեմբերի 18-ին:

## Ախոյեաններու Լիգայի Մէջ «Արարատ-Արմենիան» Կը Մրցի «Օմոնիայի» Հետ




Օգոստոսի 9-ին կայացաւ Ախոյեաններու լիկայի որակաւորման առաջին փուլի վիճակահանութիւնը: Հայաստանի ախոյեան «Արարատ-Արմենիան» կը մրցի Կիպրոսի ախոյեան «Օմոնիայի» հետ: Եթէ կորոնաւիրուսի համաճարակով պայմանաւորուած որեւէ փոփոխութիւն չըլլայ, հանդիպումը պիտի կայանայ Օգոստոսի 18-ին կամ 19-ին՝ Երեւանի մէջ:

## Եւրոպա Լիգա. Յայտնի Են Հայկական Ակումբներու Միցակիցները




ՈՒԵՖԱ-ն կատարեց Եւրոպա լիկայի որակաւորման առաջին փուլի վիճակահանութիւնը, որու արդիւնք-ներով հայկական 3 ակումբները իմացան իրենց մրցակիցները:

Վիճակահանութեան արդիւնք-ներով՝ «Ալաշկերտը» կը խաղայ մակեդոնական «Ռենովայի» հետ, «Նոայի» մրցակիցն է ղազախական «Կայրաթը», իսկ «Շիրակը» կը խաղայ ռումանական «Ստյաուայի» հետ: Միայն «Ալաշկերտն» է որ, իր հանդիպումը կ՚ունենայ Երեւանի մէջ, իսկ «Շիրակն» ու «Նոան» կը խաղան մրցակցի դաշտին վրայ:

Տեղեկացնենք, որ որակաւորման փուլի ընթացքին մէկական հանդիպում տեղի պիտի ունենայ:

## Ռոնալտուն Գործակալին Խնդրած Է Տարբերակներ Գտնել «Եուվենթուսեն» Հեռանալու Համար



Ախոյեաններու լիգայի 1/8 եզրափակիչի ընթացքին ֆրանսական «Լիոնի» արգելքը չյաղթահարելէ (0:1, 2:1) յետոյ Իտալիայի ախոյեան «Եուվենթուսի» փորթուկալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալտուն իր գործակալ Ժորժէ Մենդեշին խնդրած է տարբերակներ գտնել Թուրինեան ակումբէն հեռանալու համար:

Երկու անգամ Իտալիոյ ախոյեանի կոչումը նուաճած Ռոնալտուն Ախոյեաններու Լիկայի ընթացիկ մրցաշրջանի փլեյ-օֆֆի ընթացքին արձանագրեց «Եուվենթուսի» բոլոր կոլերը. 3-ը՝ «Աթլետիկոյին», 2-ը՝ «Այաքսին», 2-ը՝ «Լիոնին» դէմ:

Մենդեշն արդէն բանակցած է Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի հետ եւ չի բացառուիր, որ արդէն այս տեղափոխման պատուհանի ընթացքին Ռոնալտուն տեղափոխուի Փարիզ:

## Օբամեեանգը՝ «Արսենալի» 2019-1920 Մրցաշրջանի Լաւագոյն Ֆուտպոլիստ



Լոնտոնի «Արսենալը» հրապա-րակած է աւարած՝ 2019/20 մրցա-շրջանի լաւագոյն ֆուտպոլիստին անունը:

Ստացած ձայներու քանակով «Արսենալի» լաւագոյն ֆուտպոլիստ ճանաչուած է ճաբոնցի յարձակող Պյեր-Էմերիկ Օբամեեանգը, որ ստացած է քուէներու 74 տոկոսը:

Աւարտած մրցաշրջանին Օբամեեանգը «Արսենալի» կազմին մէջ մասնակցած է 44 հանդիպում-ներուն, նշանակած է 29 կոլ, կատարած է 3 կոլային փոխանցում: